8037

3КПд(47.925)
К-26

Ա. ԽԱՆՋՅԱՆ

ՀԿ(բ)Կ ԿԵՆՏԿՈՄԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ 8-րդ ՀԱՄԱԳՈՒՄԱՐՈՒՄ

3КП 2(47.925)
Խ-26

ՊԵՏՀՐԱՏ 1932 ԵՐԵՎԱՆ

M-26
24 SEP 2006
1 DEC 2009

Ա. ԽԱՆՋՅԱՆ

Հ. Կ. (բ) Կ. ԿԵՆՏԿՈՄԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ 8-ՐԴ ՀԱՄԱԳՈՒՄԱՐՈՒՄ

574

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ — 1932

6 .05. 2013

8037

Պետհրատի տպարան
Գլավլիտ 7087 (բ)
Հրատարակ. 2040
Տիրաժ 20000
Պատվեր 380

6378-56

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀՍՍՌ-Арм. ССР
им. А. Мясник
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ

ԿԱՊԻՏԱԼԻԶՄԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿՐԻԶԻՍԸ ԵՎ ՍՈՑԻԱԼԻԶՄԻ ՀԱՂԹԱԿԱՆ ՎԵՐԵԼՔԸ

Ընկերնե՛ր, մեր կուսակցության, Համամիութենական կոմունիստական կուսակցության 16-րդ համագումարից հետո անցել է մեկ և կես տարի: Պատմական առումով դա երկար ժամանակաշրջան չէ: Սակայն պատմությունը թևակոխել է հեղափոխությունների եպոխան: Իսկ հեղափոխությունը,— դեռ Մարքսն է այդ նշել, թե պատմության լոկոմոտիվն է: Հեղափոխությունն անսովոր արագության է հասցնում պատմության անիվի պտտումը: Համեմատաբար կարճ ժամանակաշրջանում առաջ են գալիս սոցիալ-տնտեսական և դասակարգային-քաղաքական, պատմական—համաշխարհային նշանակություն ունեցող տեղաշարժեր: Այդպիսի տեղաշարժերով հարուստ է 16-րդ համագումարից հետո անցած մեկ և կես տարին:

Համաշխարհային պրոլետարական հեղափոխության մեծ վարպետը, մեր կուսակցության լենինյան առաջնորդ ընկ. Ստալինը 16-րդ համագումարի ժամանակաշրջանը բնորոշեց որպես բեկման շրջան, բեկման շրջան ոչ միայն Խորհրդային Միության, այլև կապիտալիստական աշխարհի բոլոր երկրների համար: Երկու խոսքով բնորոշելու համար համագումարից հետո անցած մեկ և կես տարին, պիտի ասենք, որ այդ ժամանակաշրջանը կմտնի պատմության մեջ՝ որպես ընկ. Ստալինի մատնանշած բեկման ավելի խորացման, բեկման պրոցեսների ավելի և ավելի արագացման շրջան: Համաշխարհային պրոլետարիատի հեղափոխական պայքարի պատմության մեջ այդ շրջանը կմնա իբրև կապիտալիստական աշխարհի չտեսնված նեխման և դահավիժ-

ման, իսկ սոցիալիստական աշխարհի — ԽՍՀՄ — մեծագույն հաղթանակների և նվաճումների շրջան։

Ընկերնե՛ր, 16-րդ համագումարում ընկ. Ստալինը հայտարարեց, վոր «ներկա տնտեսական ճգնաժամն ամենալուրջ և ամենախորը ճգնաժամն է մինչև այժմ յեղած համաշխարհային տնտեսական ճգնաժամերի թվում»։ Բուրժուական և սոցիալ-ֆաշիստական մամուլն այն ժամանակ վայրենի կատաղությամբ և հեգնանքով ընդունեց այդ հայտարարությունը. բուրժուազիան և նրա սոցիալ-ֆաշիստական գործակալներն սպասում եյին մոտալուտ «բարգավաճման ու ծաղկման» նոր շրջանին։ Սակայն կրիզիսի ծավալման և խորացման նորանոր փաստերը յեկան կույրերին անգամ ցույց տալու մեր առաջնորդի մարքսիստական դիագնոզի ճշտությունը։

Կապիտալիստական աշխարհն այսօր կարոտով միայն կարող է հիշել իր արտադրության նույնիսկ այն մակարդակը, վոր գոյություն ուներ 16-րդ համագումարի նախօրյակին։ Կապիտալիստական տնտեսության ճեղքվածքներն ավելի և ավելի լայնանալով՝ հասել են մինչև նրա հիմքի, նրա պատվանդանի շերտերը։ Արդյունաբերության կրճատումը, արդյունաբերական արտադրանքի նոր, ավելի սուր անկումը հետ է շպրտել կապիտալիզմի հիմնական յերկրները և հասցրել արտադրության այն մակարդակին, վորի վրա նրանք գտնվում եյին 20–30 տարի սրանից առաջ։ Կապիտալիստական յերկրների արտադրությունը վերջին յերկու տարում կրճատվել է ավելի քան 25 տոկոսով։ Այսպես ուրեմն, վոչ թե առաջխաղացում, այլ հետադարձ շարժում, գահավեժ անկում և այն էլ ինչպիսի՛ տեմպերով։ Հիշենք թեկուզ հիմնական յերկրների տեսակարար կշիռը համաշխարհային արդյունաբերության ընդհանուր արտադրանքի ասպարեզում։ Բուրժուական տնտեսական օրգանների վիճակագրական տեղեկություններից նույնիսկ յերևում է, վոր կապիտալիզմի հսկան, ՀԱՄ Նահանգները, վորոնք դեռ 1928 թվին տալիս եյին համաշխարհային արդյունաբերական արտադր-

անքի 53,4 տոկոսը, 31 թվի առաջին կեսին իջեցրին արտադրանքը մինչև 48,8 տոկոս. Գերմանիայի արդյունաբերական արտադրանքի տեսակարար կշիռն իջել է նույն շրջանին՝ 13,8 տոկոսից մինչև 11,9 տոկոս. Անգլիայինը՝ 11,9 տոկոսից մինչև 10,1 տոկոս։

Միակ յերկիրն աշխարհում, վոր այդ շրջանում բուռն թափով բարձրացրել է իր տեսակարար կշիռը համաշխարհային արդյունաբերական արտադրանքի մեջ, կառուցվող սոցիալիզմի յերկիրն է, Խորհրդային Միությունը։ 1928 թ. 5,5 տոկոսի փոխարեն 1931 թվին Խորհրդային Միության արդյունաբերության արտադրանքը կազմում է համաշխարհային արդյունաբերական արտադրանքի 11,4 տոկոսը։ Յերկու և կես տարում մենք կրկնապատկեցինք մեր կշիռը համաշխարհային արդյունաբերության մեջ, զգալի չափով կրճատելով այն տարածությունը, վորով դեռ հետ ենք մնում կապիտալիզմի առաջավոր յերկրներից։

Կապիտալիզմի ընդհանուր կրիզիսը, ինչպես հայտնի յե, չի սահմանափակվում արդյունաբերության շրջանակով։ Հաշվետու շրջանում ավելի յե լայնացել և խորացել ագրարային կրիզիսը կապիտալիստական յերկրներում. վերջին շրջանում, 1930 թվի ամառվա ամիսներից սկսած, առանձնակի սուր կերպարանք է ստանում նաև վարկային սիստեմի և վալյուտայի կրիզիսը։ Անգլիայի հետքերով կապիտալիստական մոտ 40 յերկրներ գահավիժում են արդեն վալյուտայի ու վարկային սիստեմի կրիզիսի գծով։ Բուրժուական զորավոր յերկրների, կապիտալիստական հարյուրավոր ու հազարավոր բանկերի և ձեռնարկությունների, ֆինանսական կապիտալիզմի բազմաթիվ գիգանտների սնանկացումն ազդանշում է կապիտալիստական աշխարհի, կապիտալիզմի տնտեսական սիստեմի լիակատար սնանկացումը։

Այդ սնանկացումն ամենից առաջ անդրադառնում է աշխատավորական մասսաների դրության վրա։ 40 միլիոն գործազուրկ արդյունաբերական պրոլետարներ — ահա կապիտալիզմի սնանկացման ու նեխման առաջին վկայականը։

Իսկ 40 միլիոն բանվորության գործազրկությունն առաջ է բերում համատարած սովի, թշվառության, կործանման ահռելի պայմաններում տանջվող մի քանի հարյուր միլիոն աշխատավորական բազմությունների դժոխային կացությունը կապիտալիստական աշխարհում:

Ահա կապիտալիստական աշխարհի հանրագումարները: Չկա այլևս յերկրագնդի 5-վեցերորդ մասի վրա մի յերկիր, ուր կրիզիսը համակած չլինի արդեն ժողովրդական տնտեսության հիմնական ճյուղերը, ուր աշխատավորական մասսաներն ընկած չլինեն պատմության մեջ չտեսնված կարիքի և աղետի գիրկը: Համաշխարհային կրիզիսը ցնցում է ու խարխլում կապիտալիստական աշխարհի ամենախոր հիմքերը:

Ընդհանուր ճգնաժամի, կապիտալիզմի բոլոր ներքին հակասությունների ծայրահեղ սրման և համատարած կարիքի ֆոնի վրա բուռն թափով աճում է բանվորական և գյուղացիական մասսաների ցասումը տիրող կարգերի դեմ, բարձրանում է հեղափոխական շարժման հզոր ալիքը:

Մի շարք յերկրներում ներկայումս արդեն հասունանում են հեղափոխական կացության բոլոր նախապայմանները: Գերմանիայում, Լեհաստանում, Ռումինիայում, բանվոր դասակարգն իր բայլշևիկյան ավանգարդի գլխավորությամբ պատրաստվում է վճռական մարտերի:

Հեռավոր Արևելքում, Չինաստանի հսկայական տերիտորիայի վրա հաղթականորեն ծածանվում է խորհուրդների դրոշակը: Չինաստանի Կարմիր բանակը ներկայումս արդեն դարձել է զորավոր մի ուժ, վորն հերոսական կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ հաջողությամբ կռիվ է մղում Չինաստանի ազատագրման, նրա խորհրդային հեղափոխության վերջնական հաղթանակի համար:

Յերկրագնդի բոլոր մասերում վերջին յերկու տարվա ընթացքում հսկայական չափով աճել են կոմունիզմի ուժերը:

Իզուր չէ, վոր բուրժուազիայի համեմատաբար ավելի հեռատես անտեսագետներն անգամ կապիտալիզմի համար

ծանր ու ճակատագրական են համարում ընթացիկ 1932 տարին: Անբուժելի յեն արդեն այն ճեղքվածքները, վորոնք առաջ յեկան և ավելի ու ավելի խորանում են կապիտալիզմի հիմնաշենքում՝ կապիտալիզմի ընդհանուր կրիզիսի ցնցումներից, «պատերազմների և հեղափոխությունների» ներկա եպոխայում:

ՍՈՑԻԱԼԻԶՄԻ ՀԱՂԹԱՆԱԿԻ ՆՇԱՆԱԲԱՆԻ ՏԱԿ

1931 տարին նշանակալից է վոչ միայն կապիտալիստական աշխարհի ընդհանուր կրիզիսի չտեսնված խորացմամբ. նա կմտնի պրոլետարական հեղափոխության պատմության մեջ, վորպես կառուցվող սոցիալիզմի, միջազգային պրոլետարական հեղափոխության առաջին միջնաբերդի խոշորագույն հաղթանակների և հաջողությունների տարի: Հաշվետու շրջանում,— վոր հիմնականում զուգադիպում է հնգամյակի յերրորդ, վճռական տարվան,— Խորհրդային Միության մեջ ավարտվեց սոցիալիստական եկոնոմիկայի հիմքի կառուցումը:

16-րդ համագումարում ընկ. Ստալինը շեշտեց, վոր «ներկա մոմենտում կուսակցության հիմնական դիրքավորումն է՝ տնտեսական ֆրոնտի առանձին ճակատամասերում տեղի ունեցող սոցիալիզմի արշավից անցնել արշավի՝ ամբողջ ֆրոնտով և՛ արդյունաբերության ասպարեզում, և՛ գյուղատնտեսության ասպարեզում: Տարբերվելով անցյալ ետապներից, 16-րդ համագումարին նախորդող շրջանը հանդիսանում է ամբողջ ֆրոնտով սոցիալիզմի ծավալուն արշավի շրջանը, սոցիալիզմի մեծաթափ կառուցման շրջանը և՛ արդյունաբերության մեջ, և՛ գյուղատնտեսության մեջ: 16-րդ համագումարը հանդիսանում է ամբողջ ֆրոնտով սոցիալիզմի ծավալուն հարձակման, կուլակության՝ վորպես դասակարգի՝ վերացման, համատարած կոլեկտիվացման կենսագործման համագումար»:

16-րդ համագումարից հետո անցած շրջանը կուսակցու-

թյան հիմնական գծի նոր, ավելի փայլուն հաղթանակի շրջանը յեղավ:

Հաշվետու շրջանում, հեղափոխական մասսաների անսպառ յեռանդով, բոլշևիկյան տեմպերով իրականություն են դառնում մեր կուսակցության մարտական լոզունգները: Մեծ աշխատանքների հնգամյա պլանի իրագործման ընթացքը վորևէ կասկած չի թողնում այն մասին, վոր հնգամյակի իրագործումը չորս տարում ապահովված է: Հնգամյակը,— վորի հիմնական իմաստը կայանում է նրանում, վոր մենք պատմականորեն ամենակարճ ժամանակամիջոցում անցնենք այն տարածությունը, վորով հետ ենք մնացել կապիտալիստական առաջավոր յերկրներից, ազատենք մեր յերկիրը արտասահմանյան տնտեսական-տեխնիկական կախումից, ավարտենք սոցիալիստական եկոնոմիկայի հիմքերի կառուցումը և նրանց վրա բարձրացնենք նոր հասարակակարգի առաջին հարկերը,—կատարվում է և գերակատարվում:

Հնգամյակի յերրորդ տարին արդեն արմատական փոփոխություններ մտցրեց Խորհրդային Միության ամբողջ եկոնոմիկայի, ապա ուրեմն՝ դասակարգային փոխհարաբերությունների մեջ: Մեր սոցիալիստական արդյունաբերության տարեկան արտադրանքը 1931 թ. հասավ ժողովրդական տնտեսության ընդհանուր արտադրանքի 60 տոկոսին՝ 28—29 թվի 48,7 տոկոսի փոխարեն: Միայն այս համեմատությունը ցույց է տալիս, թե ինչ արագությամբ առաջ է գնում Խորհրդային Միության ինդուստրացումը: Մի տարում, 1931 թվին մեր արդյունաբերության արտադրանքն աճեց 21 տոկոսով: Տարեկան արտադրանքի մեկ-հինգերորդ աճում չի տեսել վոչ մի կապիտալիստական յերկիր՝ իր ծաղկման ու վերելքի ամենաբուռն շրջաններում անգամ: Մեր գործարաններն արդեն արտադրում են այնպիսի մեքենաներ, վորոնց մասին չեր էլ յերազում ցարական Ռուսաստանի կապիտալիստական արդյունաբերությունը: Մենք արտադրում ենք տրակտորներ, ավտո-մեքենաներ, բլյումինգներ, տուրբիններ, գեներատորներ, կոմբայններ, բարդ մե-

քենաներ ու ստանոկներ, վորոնք առաջ միայն ներմուծվում եյին արտասահմանից: Տրակտորների արտադրության գծով Խորհրդային Միությունը բռնում է այս տարի առաջին տեղն ամբողջ աշխարհում: Տարեց-տարի աճում և ընդլայնվում է սոցիալիստական շինարարության նյութական-տեխնիկական բազան. 1930 թվի 9 միլիարդ 800 միլիոնի և 1931 թվի 16 միլիարդ 100 միլիոնի փոխարեն այս տարի հիմնական ներդրումները ժողովրդական տնտեսության մեջ հասնում են 21 միլիարդ ռուբլուց ավելի մի գումարի: Ավարտվում և գործի յեն անցնում նորանոր գիգանտներ, վորոնցից յուրաքանչյուրը դասակարգային-տնտեսական նոր տեղաշարժեր է առաջացնում մեր յերկրում:

Միայն մի տարում, 1931 թվին, բանվորների թիվը Խորհրդային Միության մեջ ավելացավ 2·300·000 հոգով: Յերկրագնդի մեկ-վեցերորդ մասում իսպառ վերացել է գործազրկությունը:

Աճում է բանվորների աշխատավարձը: Խորհրդային Միության բանվորական ընտանիքի միջին աշխատավարձը 1929 թ. 89 ռուբլուց բարձրացավ այս տարի մինչև 146 ռուբլու: Անընդհատ բարձրանում է բանվորական ու աշխատավորական մասսաների կուլտուրական-կենցաղային պահանջների բավարարումը:

Հնգամյակի յերրորդ տարվա նվաճումների շարքում ամենանշանակալիցը, սակայն, այն նվաճումներն են, վոր ձեռք բերեց բանվոր դասակարգը գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման ասպարեզում: Մեր տնտեսության սոցիալիստական սեկտորը գրավել է արդեն բացարձակորեն գերակշռող դիրքեր վոչ միայն արդյունաբերության, այլև գյուղատնտեսության մեջ: 1931 թվին վերջնականապես ամրացավ գյուղի աշխատավոր մասսաների մեծամասնության շրջադարձը դեպի սոցիալիզմը: Խորհրդային Միության մեջ բոլոր գյուղական տնտեսությունների 62 տոկոսն ընդգրկված է կոլտնտեսություններում, նրանց է պատկանում ցանքերի ընդհանուր տարածության 79 տոկոսը:

Համատարած կոլեկտիվացումն ավարտվել է Խորհրդային Միության հիմնական շրջաններում, ուր այդ հիման վրա վերացված է հիմնականում կուլակությունը՝ վորպես դասակարգ: Կործանվում, արմատախիլ է արվում կապիտալիզմի վերջին, լուրջ պատվանդանը մեր յերկրում: Հիմնական հարցը, վոր դրել եր Լենինը նոր տնտեսական քաղաքականության անցնելու կապակցությամբ — «ով—ում» հարցը թե՛ արդյունաբերության, թե՛ գյուղատնտեսության մեջ լիովին և ամբողջապես վճռված է բանվոր դասակարգի ոգտին: Ավարտված է սոցիալիզմի հիմքի կառուցումը խորհուրդների յերկրում (ծափեր):

Ահա՛, ընկերներ, սոցիալիզմի յերկրի ընդհանուր հանրագումարները. Խորհրդային Միության բանվոր դասակարգը, կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ, հենված գյուղացիության մեծամասնության՝ կոլտնտեսական գյուղացիության վրա, ջախջախել է կապիտալիստական ելեմենտների դիմադրությունը՝ վերջնականապես ապահովելով մեր յերկրում սոցիալիզմի հաջող կառուցման գործը: Զտեսնված մասշտաբով և արագությամբ աճում են մեր յերկրի արտադրողական ուժերը: Ամրանում, անհաղթելի յե դառնում միջազգային պրոլետարական հեղափոխության ամրոցը՝ ԽՍՀՄ:

ԱՆԽՆԱ ՊԱՅՔԱՐ ՈՊՈՐՏՈՒՆԻԶՄԻ ԴԵՄ

Ընկերնե՛ր, 16-րդ համագումարում ընկեր Ստալինը չեշտեց յերկու ֆրոնտով — անհաշտ պայքարն ուժեղացնելու նշանակությունը, ինչպես «ձախերի» դեմ, վորոնք ներկայացնում են մանր-բուրժուական ռադիկալիզմը, այնպես ել աջերի դեմ, վորոնք ներկայացնում են մանր-բուրժուական լիբերալիզմը: Մեր խնդիրն է նաև,— մատնանշեց ընկեր Ստալինը,— հետագայում ես շարունակել անհաշտ պայքարը կուսակցության հաշտվողական այն տարրերի դեմ, վորոնք չեն հասկանում կամ չհասկանալ են ձևացնում, վոր

անհրաժեշտ է վճռական պայքար մղել յերկու ճակատում:

Պատմական խոշորագույն հաջողությունները և հաղթանակները, վորոնք ձեռք բերեց բանվոր դասակարգը մեր յերկրում, արդյունք են կատաղի ու անհաշտ դասակարգային պայքարի: Այդ պայքարը, ըստ եյության, յերկու աշխարհի՝ կապիտալիստական աշխարհի և սոցիալիստական աշխարհի պայքարն է: Կուսակցության գլխավոր գծից կատարվող թեքումները, ըստ եյության, թշնամի դասակարգերի, մեռնող, կործանվող դասակարգերի դիմադրության արտացոլումն են կուսակցության ներսում: Ցեվ մեր հաջողության ու պատմական հաղթանակների առաջին պայմանն անհաշտ ու կատաղի այն պայքարն եր, վոր տարավ մեր կուսակցությունը տրոցկիզմի և աջ թեքման դեմ և վորը պսակվեց կուսակցության կատարյալ հաղթանակով և՛ տրոցկիզմի, և՛ աջ թեքման նկատմամբ, ինչպես նաև այդ թեքումների խառնուրդ աջ-«ձախ» բլոկի գլխովին ջախջախումով:

Տրոցկիզմը, ջարդուփշուր և դիմակազերծ արված մեր յերկրի բանվոր դասակարգի կողմից, վաղուց արդեն դարձել է միջազգային հակահեղափոխության առաջամարտիկ խմբակը: Աջ թեքման պարագլուխները կապիտուլյացիայի յենթարկվեցին կուսակցության ջախջախիչ հարվածների տակ, չքավոր և միջակ մասսաների կոլեկտիվացման, կուլակության՝ վորպես դասակարգի՝ վերացման պրոցեսներին զուգընթաց: Կուսակցության շարքերում այժմ գոյություն չունի կազմակերպված վորևե ուժ կամ խմբակ՝ հակադիր կուսակցության գլխավոր գծին: Սակայն այս հանգամանքը յերբեք չի նշանակում, վոր պայքարը թեքումների դեմ կորցրել է իր ակտուալ նշանակությունը մեր կուսակցության համար:

Կուլակության լիկվիդացիայով դեռ չի վերանում դասակարգային պայքարը մեր յերկրում: Նա արտահայտվում է նոր ձևերով: Կոլտնտեսություն մտած յերեկվա անհատ տնտեսատերը՝ հենց կոլտնտեսության մտնելու փաստով

անմիջապես սոցիալիստ չի դառնում, չի ազատվում «մանր-բուրժուական Ադամից»: Այս կամ այն չափով շարունակում է տուրք տալ մանր-բուրժուական, սեփականատիրական հակումներին և ձգտումներին: Կուլակային ազդեցության արտահայտությունները տեղ են գտնում կոլտնտեսություններում. բուրժուական ազդեցությունների ճնշված արտահայտություններ հայտաբերվեցին նաև խորհտնտեսություններում: Ջախջախված դասակարգային թշնամին փոխում է դիմադրության ձևերը՝ փորձելով հարմարվել նոր պայմաններին:

Թեքումները կուսակցության շարքերում՝ արտացոլելով թշնամու ձգտումներն ու դիմադրությունը՝ դրսևորվում են նոր ձևերով: Կուսակցության 15-րդ և 16-րդ համագումարներն անհանդուրժելի համարեցին տրոցկիզմի և աջ թեքման տեսակետների կրելը և պաշտպանելը՝ կուսակցության մեջ մնալու հետ: Ահա թե ինչու, կուսակցությանը խաբելու համար՝ ուկլոնիստները թաքնվում են ու դիմակավորվում: Թեքումներ գոյություն ունեն, արտահայտվում են գործնական աշխատանքների բոլոր բնագավառներում: Գլխավոր վտանգ աջ թեքումն արտահայտվում է, օրինակ, նրանում, որ մարդիկ չեն տեսնում կամ չեն ուզում տեսնել կուլակային-բուրժուական ազդեցությունները կոլտնտեսություններում և խորհտնտեսություններում, քողարկում են այդ ազդեցությունների արտահայտությունները և չեն պայքարում նրանց դեմ՝ այսպիսով իսկ դերի ընկնելով դասակարգային թշնամուն: Աջ ուկլոնիստները, մյուս կողմից, դիմադրում են բոլշևիկյան ընդհանուր արշավի բարձր տեմպերին, չեն վերակառուցվում համաձայն նոր պայմանների, հետ են մնում, չեն դիմանում պայքարի և աշխատանքի բոլշևիկյան տեմպերին:

Տրոցկիզմի ազդեցության արտահայտությունները նույնպես տեղ են գտնում գործնական աշխատանքների այլևայլ օղակներում: Անտեսել սոցիալիզմի հաղթանակը մեր յերկրում, անվստահություն ներշնչել դեպի մեր հնարավո-

րություններն ու հեռանկարները, աղճատել կուսակցության լենինյան քաղաքականությունը գյուղում՝ կոլտնտշինարարության մեջ, խուճապի մատնվել աճման մեր դժվարություններից,— ահա տրոցկիզմի ազդեցության արտահայտությունների տարածված յեղանակները: Մյուս կողմից էլ, ինչպես այդ ցույց տվեց ընկ. Ստալինն իր վերջին պատմական նամակում, տրոցկիստները դիմում են մաքսանենգության: Օգտվելով կուսակցության անդամների մի մասի մոտ գոյություն ունեցող նեխած լիբերալիզմից, նրանք մաքսանենգորեն փորձում են տրոցկիստական աղճատման յենթարկել մեր կուսակցության անցյալը, կուսակցության պատմությունը:

Ուստի պարզ է, որ մեր աշխատանքների ներկա էտապում նոր հաղթանակների հիմնական պայմանը հետևողական և անհաշտ պայքարն է՝ հանուն լենինիզմի անաղարտության, անհաշտ ու անխնա պայքար օպորտունիզմի դեմ՝ անկախ նրա արտահայտության ձևերից: Այդ պայքարի ծավալման և խորացման նշանաբանի տակ պետք է ընթանա հնգամյակի վերջին, ավարտական տարվա պլանների կատարումը: Հնգամյակի վերջին, ավարտական տարում կառուցվող սոցիալիզմի յերկիրը պայքարում է կապիտալ շինարարության 21 միլիարդ ռուբլու պլանի կատարումն ապահովելու, արդյունաբերության արտադրանքը նախորդ տարվա համեմատությամբ 36 տոկոսով բարձրացնելու համար:

Այս տարի 22 տոկոսով պետք է բարձրանա աշխատանքի արտադրողականությունը, 7 տոկոսով իջնի արտադրանքի ինքնարժեքը: Մեր առաջ հիմնական խնդիր է դրված՝ այս տարի բազմապատկել աշխատանքի բոլշևիկյան տեմպերը՝ բոլշևիկյան որակով: Աշխատանքի արտադրողականություն, բերքատվության բարձրացում, կոլտնտեսությունների կազմակերպչական-տնտեսական ամրացում,— ահա մեր աշխատանքների հիմնական օղակը ներկա շրջանում: «Աշխատանքի արտադրողականության բարձրացումը վերջին հաշվով ամենակարևորն է և ամենագլխավորը

նոր հասարակարգի հաղթանակի համար»,— սովորեցնում էր մեզ մեր մեծ ուսուցիչը: Լենինյան այս պատգամը ղեկավար սկզբունք պիտի լինի մեզ համար՝ աշխատանքի բոլոր բնագավառներում: Անհաշտ պայքար օպորտունիզմի և նեխած լիբերալիզմի բոլոր արտահայտությունների դեմ, նոր թռիչք կատարել 1932 թվին մեր յերկիրն արտասահմանյան տնտեսական-տեխնիկական կախումից ամբողջապես ազատելու գործում, ավարտել հնգամյակը չորս տարում,— ահա մեր կուսակցության հիմնական խնդիրները 1932 թվին:

ԿԱՊԻՏԱԼԻԶՄԻ ԿՐԻԶԻՍԸ ՅԵՎ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՎՏԱՆԳԸ

Ընկերնե՛ր, մենք տեսանք, թե ինչքան հակադիր են Խորհրդային Միության և կապիտալիստական աշխարհի ուղիները: Այնտեղ անընդհատ խորացող ճգնաժամ ու անկում, այստեղ արտադրողական ուժերի լայնածավալ աճում և տնտեսական վերելք: Կապիտալիզմի կրիզիսի խորացումը սրում է կապիտալիստական հասարակարգի բոլոր հակասությունները: Սրվում են դասակարգային հակասությունները պրոլետարիատի և բուրժուազիայի միջև, սրվում են հակասություններն իմպերիալիզմի և գաղութների, հաղթած և պարտված պետությունների և վերջապես կապիտալիստական աշխարհի ու Խորհրդային Միության միջև: Ճակատագրական դրությունից մի կերպ դուրս գալու համար միջազգային բուրժուազիան փնտրում է վորևե յելք: Ներքին քաղաքականության գծով, ինչպես շեշտեց ընկեր Ստալինը 16-րդ համագումարում, նա առաջ է տանում ֆաշիստացումը և միլիոնավոր մասսաների նկատմամբ տնտեսական թալանի ու քաղաքական ճնշման աննախընթաց միջոցներ է կիրառում: Բոլոր ռեակցիոն ուժերի, վորոնց թվում նաև իր տիրապետության հիմնական պատվանդան սոցիալ-դեմոկրատիայի միացյալ ֆրոնտով, բուրժուազիան ջանք է թափում դանդաղեցնելու մասսաների հեղափոխականացման պրոցե-

սը: Արտաքին քաղաքականության գծով բուրժուազիան ստեղծված դրությունից յելք է փնտրում պատերազմի մեջ: Քանի սրվում է կապիտալիզմի կրիզիսը, այնքան ավելի յե աճում ընդհանուր խաղաղության սպառնացող վտանգը: Յեվ այդ վտանգն ամենից առաջ սպառնում է Խորհրդային Միությանը, վորի հաշվին ամբողջ աշխարհի իմպերիալիստները յերազում են յելք գտնել անելանելի այն փակուղուց, վորի մեջ գնալով ավելի և ավելի յեն խճճվում և խրըվում: «Ամեն անգամ,—ասում է ընկ. Ստալինը,—յերբ կապիտալիստական հակասություններն սկսում են սրվել՝ բուրժուազիան իր հայացքն ուղղում է Խորհրդային Միության կողմը: Չի՞ կարելի արդյոք կապիտալիզմի այս կամ այն հակասությունը կամ բոլոր հակասությունները միասին լուծել ի հաշիվ Խորհրդային Միության, Խորհուրդների այդ յերկրի, հեղափոխության միջնաբերդի, վորն իր գոյությամբ իսկ հեղափոխականացնում է բանվոր դասակարգին ու գաղութներին, խանգարում է նոր պատերազմ սկսել, խանգարում է նորից վերաբաժանել աշխարհը, խանգարում է տիրություն անել իր ընդարձակ ներքին շուկայում, վորն այնքան անհրաժեշտ է կապիտալիստական, առանձնապես տնտեսական ճգնաժամի հետևանքով»: Վոր այդ այդպես է, վոր իմպերիալիստները լրջորեն ծրագրում են կրիզիսից յելք գտնել Խորհրդային Միության դեմ նոր ինտերվենցիայի միջոցով՝ վկայում է միջազգային սոցիալ-ֆաշիզմի պատրիարքը՝ Կարլ Կաուցկին: Բացառիկ ցինիկությամբ նա բաց է անում Յերկրորդ Ինտերնացիոնալի իսկական ծրագիրը և ակնկանքները: Թողնելով, վոր Բաուերը և իր ընկերները «ձախ» ֆրազներով մշուշապատեն գիտակցության յեկող բանվորական մասսաներին, Կաուցկին, վորին, ի դեպ ասած, ձայնակցում են և դաշնակները, հանդես է գալիս իմպերիալիստական ինտերվենցիայի բացահայտ կոչով, գրգռելով կապիտալիստների ախորժակը Խորհրդային Միության ներքին շուկայի լայն հնարավորություններով: Յերկրորդ Ինտերնացիոնալի,—վորը հակախորհրդային պատրաստվող

ինտերվենցիայի կարևորագույն օղակներից մեկն է,— այս ռազմաշունչ կոչը չափազանց ուշագրավ է մանավանդ ներկայումս, յերբ ինտերվենցիայի պատրաստման գործում Խորհրդային Միության թշնամիները պլաններ կազմելուց անցնում են անմիջական գործի:

Այդ մասին են վկայում դեպքերը Մանջուրիայում: Ճապոնական իմպերիալիստների կողմից Մանջուրիայի հափշտակումը ճապոնական իմպերիալիզմի մեկուսացված մի յելույթ չէ. Մանջուրիայի գրավումը պատրաստվում էր Ճապոնիայի, Ֆրանսիայի, Անգլիայի և Ամերիկայի կողմից, վորպես մի միջոց՝ պրովոկացիայի յենթարկելու Խորհրդային Միությունը, պատերազմական գործողություններ սկսելու համար մեր դեմ Հեռավոր-արևելյան թատերաբեմում: Յեվ յեթե իմպերիալիստների դիվային ծրագրերն առայժմ ձախողեցին; ապա շնորհիվ յերեք հանգամանքի — նախ՝ շնորհիվ Խորհրդային Միության՝ խաղաղությունը պահպանելու անկեղծ ցանկության և քաղաքականության, յերկրորդ՝ շնորհիվ շահերի խոր հակասության, վոր գոյություն ունի իմպերիալիստական տարբեր խմբակցությունների միջև, հենց թեկուզ Չինաստանի գաղութային շահագործման և բզկտման գործում և յերրորդ՝ շնորհիվ հեղափոխական շարժման բուռն վերելքի՝ կապիտալիստական յերկրներում և գաղութներում:

Պատերազմի պատրաստությունը հեվիհեվ առաջ է տարվում իմպերիալիստական բոլոր յերկրներում, Ազգերի Լիգայի անմիջական ղեկավարությամբ: Վոր Ազգերի Լիգան վոչ թե խաղաղության գործիք է, ինչպես հավատացնում են սոցիալ-ֆաշիստները, այլ պատերազմների և գաղութների շահագործման ու կեղեքման գործիք, բացահայտ կերպով յերևան յեկավ ճապոնական իմպերիալիստների կողմից Մանջուրիան հափշտակելու ժամանակ: Ազգերի Լիգան դիմակազերծ յեղավ բանվորական և աշխատավորական գիտակից մասսաների առաջ, վորը խաղաղասիրության դիմակի տակ

թաքցնում է իմպերիալիստական պատերազմ պատրաստող կենտրոնական շտաբի գազանային դեմքը:

Խորհրդային Միության ներկա միջազգային դրությունը պահանջում է մեզանից՝ ամենից առաջ լինել զգոն և աչալուրջ: Խորհրդային Միության բանվորները և աշխատավորները լավ գիտեն, վոր միակ վտանգը, վոր կարող է այժմ խանգարել մեր սոցիալիստական շինարարության հետագա վերելքը՝ արտաքին վտանգն է, իմպերիալիստների ինտերվենցիան: Յեվ Խորհրդային Միության բանվորները, կոլտնտեսականներն ու աշխատավորները պատրաստ պետք է լինեն՝ իրենց դեմ ուղղված առաջին իսկ հարվածին պատասխանելու այնպիսի հակահարվածով, վոր վերջնականապես կործանի կապիտալիզմի ճաքճքած ու խարխուլ շենքը: Իմպերիալիստների դեմ ուղղված մեր պայքարում մենակ չենք լինի: Կապիտալիստական կրիզիսի խորացումը 1932 թվին ավելի յե հասունացնելու հեղափոխական կրիզիսի բոլոր նախադրյալները: Յեթե բուրժուազիան ստեղծված դրությունից յելք է փնտրում իմպերիալիստական պատերազմի մեջ, «Պրոլետարիատը պայքարելով կապիտալիստական շահագործման և պատերազմի վտանգի դեմ՝ յելք է փնտրում հեղափոխության մեջ» (Ստալին): Արագանում է մասսաների շրջադարձը դեպի կոմունիզմը: Կոմինտերնի հատվածները, մեր յեղբայրական կուսակցությունները ամրացնում են կապերը մասսաների հետ, բոլշևիկյան կոփում են ստանում դասակարգային մարտերում, նրանք բոլշևիկանում են, նախապատրաստում հեղափոխական յելքը ներկա կրիզիսից: Կապիտալիստական յերկրների հեղափոխական պրոլետարիատը, Կոմունիստական Ինտերնացիոնալի ղեկավարությամբ հավաքում է իր ուժերը «վերջին և վճռական» մարտի համար: Պատմության անիվի արագացումն ավելի և ավելի մոտեցնում է այդ մարտերին: Համամիութենական բոլշևիկյան բանակի Հայաստանի ջոկատը և նրա ղեկավարությամբ Հայաստանի բանվորները, կոլտնտեսականները, չքավոր և միջակ մասսաները՝ ե՛լ ավելի բարձրացնելով դա-

6378-56
ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека

սակարգային զգոնությունը, ե՛լ ավելի զարկ տալով խորհրդային Միության ռազմական պաշտպանության գործի ուժեղացմանը՝ կազմ ու պատրաստ պետք է լինենք գալիք մարտերի համար (ծափեր):

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՎԵՐԵԼՔԸ

Ընկերնե՛ր, Խորհրդային Միության հաղթական վերելքը, նրա աճման ընդհանուր պատկերն արդեն իսկ բնորոշում են պայքարի և շինարարության այն ուղին, վորով ընթացավ Խորհրդային Հայաստանը վերջին մեկ և կես տարվա ընթացքում, Հայաստանի Կոմունիստական Կուսակցության 7-րդ համագումարից մինչև ներկա 8-րդ համագումարը: Մեր յերկիրը Խորհրդային Միության անբաժան մասնիկն է, նրա բաղկացուցիչ միավորներից մեկը: Խորհրդային Հայաստանի վերելքի ուղիները գնում են զուգահեռ Խորհրդային Միության սոցիալիստական վերելքի մեծ մագիստրալներին, կազմելով նրանց հետ մի միասնական ամբողջություն: Մեր յերկրում կատարվում են սոցիալ-քաղաքական նույն պրոցեսները, դասակարգային-տնտեսական նույն տեղաշարժերը, վորոնք առաջ յեկան Խորհրդային Միության մեջ: Հայաստանի Կոմունիստական Կուսակցությունը բոլշևիկյան համամիութենական մեծ բանակի ջոկատներից մեկն է: Իրենց բոլոր աշխատանքներում մեր կուսակցությունը և նրա Կենտրոնական Կոմիտեն աշխատել են անշեղորեն ղեկավարվել Համամիութենական մարտական շտաբի, լենինյան Կենտկոմի, կուսակցության առաջնորդ ընկեր Ստալինի դիրեկտիվներով և ցուցումներով: Մեր բոլոր աշխատանքները, մեր պայքարն ու շինարարությունն ընթացել են կուսակցության գլխավոր գծի, լենինյան գծի անշեղ կիրառման նշանաբանի տակ: Քիչ չեն, անշուշտ, մեր աշխատանքներում

սխալները, յերբեմն ծանր սխալները և առանձին սայթաքումները, քիչ չեն նաև թերությունները աշխատանքների այս կամ այն բնագավառում: Իր հայտնի վորոշումով Համկոմկուսի Կենտկոմը բոլշևիկյան քննադատության և կոնկրետ ղեկավարման օրինակ ցույց տվեց՝ ընդգծելով Անդրկովկասի կոմունիստական կազմակերպությունների և նրանց թվում նաև Հայկոմկուսի աշխատանքներում կատարված սխալները: Այդ սխալների բոլշևիկյան քննադատությամբ պետք է զբաղվի մեր համագումարը: Սակայն համագումարը միաժամանակ պետք է ի մի ամփոփի նաև մեր հաջողությունները և նվաճումները, իսկ նրանք անվիճելի յեն, խիստ նշանակալից՝ հաշվետու շրջանում: Նրանք ձեռք են բերվել կուսակցական կազմակերպությունների, բանվորական և կոլտնտեսային մասսաների, չքավոր և միջակ գյուղացիության անդուլ և անխոնջ աշխատանքով և համառ պայքարով հանուն կուսակցության լենինյան գծի անաղարտ կիրառման, ընդդեմ դասակարգային թշնամիների և նրանց իդեոլոգիայի, առաջին հերթին՝ ընդդեմ իմպերիալիստների գործակալ, հայ բուրժուազիայի ֆաշիստական կուսակցության՝ Դաշնակցության, ընդդեմ դասակարգային թշնամու գործակալության՝ մեր կուսակցության շարքերում — աջ և «ձախ» ուկլոնիստների, մեծապետական շովինիստների և նացիոնալ-ուկլոնիստների, ընդդեմ անսկզբունք խմբակայինների: Մեր նվաճումները և հաղթանակները, վորոնք Խորհրդային Հայաստանի պատմության մեջ բաց են անում նոր դարագլուխ, արդյունք են միայն և միայն կուսակցության լենինյան գլխավոր գծի կիրառման: Անցնենք մեր աշխատանքների հիմնական հանրագումարներին:

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՃՈՒՄԸ

Ընկերնե՛ր, Խորհրդային Հայաստանի ժողովրդական տնտեսության արագատեմպ աճումը կարելի յե բնորոշել

բազմաթիվ թվերով և փաստերով․ բավական է սակայն կանգ առնել հիմնական ցուցանիշների վրա։ Ամենից առաջ ուշադրավ է ժողովրդական տնտեսության — արդյունաբերության և գյուղատնտեսության — ընդհանուր արտադրանքի բուռն աճումը։ Հնգամյակի առաջին տարվան նախորդող 27–28 թ․ 110 միլիոն ռուբլու ընդհանուր արտադրանքի և անցյալ տարվա 161 միլիոն ռուբլու արտադրանքի փոխարեն, 1931 թվին ժողովրդական տնտեսության ընդհանուր արտադրանքը հասնում է 187 միլիոն ռուբլու (վերահիշյալ և հետեվյալ բոլոր տվյալները համեմատական դարձնելու համար, բերում ենք 26–27 թվի անփոփոխ գներով)։ Վերջին տարվա աճումը կազմում է 26 միլիոն ռուբլի կամ 16,1 տոկոս՝ նախորդ տարվա համեմատությամբ։ Մենք ավելորդ ենք համարում արդեն վորևէ համեմատություն ժողովրդական տնտեսության ներկա մակարդակի և նախախորհրդային դրության միջև, բայց ուշադրավ է, վոր ժողովրդական տնտեսության միայն վերջին տարվա աճման գումարը (26 միլիոն ռուբլի) ամբողջապես ծածկում է ժողովրդական տնտեսության 1919 թվի վողջ արտադրանքը։

Յեթե վերցնենք ժողովրդական տնտեսության առաջատար հատվածը՝ մեր սոցիալիստական արդյունաբերությունը, կտեսնենք, վոր ավելի արագ են դառնում աճման տեմպերը․ սկսելով հնգամյակին նախորդող տարին 28 միլիոն ռուբլու տարեկան արտադրանքով, 1931 թվին մեր արդյունաբերությունը տվեց արդեն 79 միլիոն ռուբլու արտադրանք, նախորդ տարվա համեմատությամբ տալով 47,4 տոկոսի հսկայական աճում։

Համաձայն Խորհրդային Հայաստանի 5-ամյա պլանի, հինգ տարվա ընթացքում, 28–29 թվից մինչև 33 թիվը ներառյալ՝ մեր արդյունաբերությունը տալու յեր 363 միլ․ ռուբլու արտադրանք, մինչդեռ այս տարում սպասվող 145 միլ․ ռուբլու արտադրանքի հետ միասին, մեր արդյունաբերության արտադրանքը 4 տարում կազմելու յե 330 միլ․ ռուբլու մի գումար․ այսպիսով, արդյունաբերական արտա-

դրանքի հնգամյա պլանը կատարվում է գրեթե չորս տարում։

Անվիճելի յե նաև ժողովրդական տնտեսության յերկրորդ հատվածի աճումը․ գյուղատնտեսության ընդհանուր արտադրանքը 27–28 թվի 82 միլիոն ռուբլու փոխարեն 31 թվին կազմում եր 108 միլիոն ռուբ․, աննշան չափով գերազանցելով նախորդ տարվա՝ 30 թվի մակարդակը․ վերջին յերեվույթը բացատրվում է 31 թվի բամբակի բերքահավաքի պլանի հսկայական թերակատարումով և մանավանդ այն անկայունությամբ, վոր տիրում եր անասնապահության բնագավառում, վորը (անասնապահությունը) 1931 թվին հիմնականում գտնվում եր մեր գյուղատնտեսության անհատական սեկտորում։

Ժողովրդական տնտեսության աճման ցայտուն պատկերը տալիս է հիմնական ներդրումների մեծաթափ աճումը տարեց-տարի։ Մեր հնգամյակով յենթադրվում եր հինգ տարվա ընթացքում՝ 28–29 թ․ մինչև 32–33 թվերը՝ ժողովրդական տնտեսության բոլոր բնագավառներում ներդնել 268 միլիոն ռուբլի։ Հնգամյակի իրագործումը տալիս է հետևյալ պատկերը․ 28–29 թվին ունեցել ենք 34 միլիոն ռուբլու հիմնական ներդրում, 29–30 թ․՝ 53 միլիոն ռուբլու, 30 թվի հատուկ կվարտալում՝ 12 միլ․ ռուբ․, 31 թ․՝ 82 միլ․ ռուբլու․ այսպիսով, 3 և մեկ քառորդ տարում կապիտալ ներդրումների հնգամյա պլանը կատարված է 67 տոկոսով․ իրացնելով այս տարի կապիտալ ներդրումների 142 միլիոն ռուբլու պլանը, 4 և մեկ քառորդ տարում կապիտալ ներդրումների ընդհանուր գումարը կազմելու յե 323 միլիոն ռուբլի, ՈՒՐԻՇ ԽՈՍՔՈՎ, 4 ՅԵՎ ՄԵԿ ՔԱՌՈՐԴ ՏԱՐՈՒՄ ՀՆԳԱՄՅԱԿԸ ԳԵՐԱԿԱՏԱՐՎՈՒՄ Ե 20 ՏՈԿՈՍՈՎ (ԾԱՓԵՐ)։ Առանձնապես աչքի յե ընկնում հիմնական ներդրումների հնգամյա պլանի արագատեմպ իրացումն արդյունաբերության և ելեկտրիֆիկացիայի գծով․ արդյունաբերության գծով հիմնական ներդրումների հնգամյա պլանը 3 ու մեկ քառորդ տարում կատարված է 79 տոկոսով, իսկ ելեկտրիֆիկացիայի գծով իրացված է 112 տոկոսով։ Այս թվերը, ըն-

կերնե՛ր, վկայում են այն հսկայական աշխատանքի և շինա
րարության մասին, որ առաջ են տանում Հայաստանի բան
վորները, կոլտնտեսականները և աշխատավոր գյուղացի
ները՝ բոլշևիկների կուսակցության ղեկավարությամբ
բարձրացնելու համար տնտեսությունը, զարգացնելու հա
մար յերկրի արտադրողական ուժերը: Այս աշխատանքներ
արդեն փոխել են և փոխում են մեր յերկրի՝ յերբեմնի խեղ
ու կրակ ցարական գաղութի՝ տնտեսական քարտեզը, նր
տնտեսական աշխարհագրությունը:

Տնտեսական-կուլտուրական վերելքի հոյակապ պատկեր
արտացոլում է նաև մեր բյուջեն. Խորհրդային Հայաստան
միացյալ բյուջեյի մուտքը կազմել է 25–26 թվին 8 միլ. ռ.
26–27 թվին՝ 9 միլ. ռ., 27–28 թվին՝ 12 միլ. ռուբլի, 28–29
թ.՝ 17 միլ. ռ., 29–30 թվին՝ 23 միլ. ռ., իսկ բյուջեյի յել
քը, սկսելով 25–26 թվին 32 միլ. ռուբլով՝ 29–30 թվին կազ
մել է 65 միլ. ռուբլի. բյուջեյի դեֆիցիտը, ինչպես տես
նում եք, առայժմ գնալով աճում է՝ 30 թվին հասնելով 4
միլ. զգալի գումարի: Յեթե բյուջեյի դեֆիցիտը, ըստ էու
քյան, դրական յերևույթ չէ, ապա միանգամայն հասկանալ
յեն նրա պատճառները. այստեղ ցայտուն պարզորոշությամ
հանդես է գալիս Խորհրդային Միության մեջ կիրառվող լե
նինյան ազգային քաղաքականությունը, վորի նպատակն
կարճ ժամանակաշրջանում հատուկ ձեռնարկումների և հա
կացումների միջոցով վերացնել ազգային հանրապետու
թյունների այն հետամնացությունը, վորն արդյունք եր ցա
րական բուրժուական Ռուսաստանի գաղութային քաղաքա
կանության, ինչպես նաև իմպերիալիստների և նրանց կա
մակատար դաշնակների շահատակությունների:

Վոր մեր արդյունաբերությունը, հատկապես հաշվետ
շրջանում, 1931 թվին հսկայական քայլերով առաջ է շարժ
վել՝ այդ մասին վկայում են արդյունաբերության հիմնա
կան ճյուղերի աշխատանքի ցուցիչները. այսպես, 1931 թվ
փաստորեն հանվել է Հայաստանում 77.000 տոնն պղնձա
հանք՝ նախորդ տարվա 59.000 տոննի փոխարեն, 3.225 տոն

և պղինձ, նախորդ տարվա 2.864 տոննի փոխարեն. Արթիկ-տուֆ հանված է 94.000 խոր. մետր, նախորդ տարվա 41.000 խոր. մետրի փոխարեն, պեմզա՝ 169.000 տոնն, 150.000-ի փոխարեն, զտված բամբակ՝ 3.948 տոնն, անցյալ տարվա 3.300 տոննի փոխարեն, բյազ արտադրվել է 31 թ. 8,6 միլ. մետր, 30 թվի 5,9 միլ. մետրի փոխարեն, տրիկոտաժ՝ 284 տոնն՝ 165-ի փոխարեն, կոնսերվ՝ 12 միլիոն տուփ, նախորդ տարվա 6 միլ. տուփի փոխարեն և այլն: Ահա մեր արդյունաբերության լայնացման, նրա արագ աճման փաստական տվյալները:

Մենք բերինք, ընկերնե՛ր, ժողովրդական տնտեսության աճման հիմնական ցուցիչները, բայց բավականանալ միայն աճման ընդհանուր ցուցիչներով՝ մենք չենք կարող. մեզ պետք է հետաքրքրի նաև այն հարցը, թե ի՞նչ գծով, սոցիալական ի՞նչ ուղիներով է կատարվում ժողովրդական տնտեսության վերելքը: Փաստերն ասում են, վոր ժողովրդական տնտեսության աճումն ամենից առաջ ընթանում է յերկրի ինդուստրացման ուղղությամբ, վոր ամրացնում է սոցիալիզմի դիրքերը մեր յերկրում: Հայաստանի արդյունաբերության ընդհանուր արտադրանքը 13 թվին կազմում եր ամբողջ ժողովրդական տնտեսության արտադրանքի 21 տոկոսը, 19 թվին՝ 8 տոկոսը, 28–29 թվին՝ 26 տոկոսը, իսկ անցած 31 թվին՝ 42 տոկոսը: Այսպես աճում է արդյունաբերության տեսակարար կշիռը ժողովրդական տնտեսության մեջ: Գյուղատնտեսության մեջ 1931 թիվը նշանակալից է սոցիալիստական հատվածի հսկայական աճումով. Ներկայումս մեր գյուղատնտեսության կեսից վոչ պակասը գտնվում է արդեն սոցիալիստական հատվածում (կոլտնտեսություններ և խորհտնտեսություններ):

Ահա, ընկերնե՛ր, թվերի ու փաստերի շարանը: Այս թվերը թեև չոր ու ցամաք են հնչում, սակայն մեր յերկրի բանվորների, կոլտնտեսականների, աշխատավորների համար՝ վորպես սոցիալիզմի հաղթական յերաժշտություն. նրանք ցույց են տալիս, թե ինչպես մի յերկիր, վոր 11 տարի

առաջ իմպերիալիստների և նրանց հայկական գործակալ
ների քաղաքականության հետևանքով ապրում էր կործան
ման և բնաջնջման վերջին օրերը, պրոլետարական հեղա
փոխության հաղթանակի շնորհիվ վոչ միայն ազատվե
անխուսափելի կործանումից, այլև կարճ ժամանակում ան
նախընթաց բարձրության հասցրեց իր տնտեսությունը: Ն
ագրարային հետամնաց գաղութից արդեն վերածվում
ինդուստրիալ-ագրարային առաջավոր յերկրի, զարգաց
խորհրդային հայրենիքի արժանի մասի (ծափեր):

Այո՛, ընկերնե՛ր, վոգեվորիչ և խրախուսող են մեր աշ
խատանքի, մեր պայքարի և շինարարության արդյունք
ները: Ինչքան ուզում են, թող վոռնան և վնգստան դաշ
նակները՝ սոցիալիզմի կառուցումը մեր յերկրում առաջ
գնում վիթխարի քայլերով: Բարձրանում է արդյունաբե
րությունը, վերակառուցվում է գյուղատնտեսության տեխ
նիկական բազան. մենք հսկայական ճանապարհ ենք կտր
գյուղի սոցիալիստական վերակառուցման ուղիներով, աճու
է բանվոր դասակարգը մեր յերկրում, բարձրանում է լայ
մասսաների քաղաքական-կուլտուրական մակարդակը:

Այս բոլոր հաջողությունները, սակայն, չպետք է դը
խապտույտ առաջ բերեն մեր շարքերում: Ընդհակառակը
հաջողությունները պետք է հարկադրեն մեզ՝ լինել ավել
պահանջկոտ, ծավալել բոլշևիկյան ամենախիստ քննադա
տություն մեր սխալների և թերացումների շուրջը: Իսկ այ
թերացումները քիչ չեն մեր աշխատանքների գրեթե բոլ
բնագավառներում: Ընդհանուր հաջողությունները յերբ
չպետք է պատճառ հանդիսանան՝ անտեսել կամ թերագն
հատել բազմաթիվ ճեղքվածքներ, վոր ունենք մեր աշխ
տանքներում: Բավական է հիշել միայն, վոր 31 թվին մ
արդյունաբերությունը տալով նախորդ տարվա համեմատ
թյամբ 47 տոկոսի աճում, կատարեց իր արտադրական պլ
նը միայն մոտ 80 տոկոսով. բավական է հիշել, վոր մի
ճեղքվածքներով փակեցին 1931 թիվը մեր արդյունաբերու

թյան կարեվորագույն ճյուղերը՝ պղինձն ու տեքստիլը: Բավական է հիշել այն անհաջողությունը, վոր ունեցանք գյուղատնտեսական ֆրոնտի կարեվորագույն ճակատամասում՝ բամբակի ֆրոնտում: 1931 թվի պլանների այս թերակատարումը պահանջում է մեզանից բոլշևիկյան ինքնաքննադատության լայն ծավալում, և դրա օրինակը պետք է տա մեր ներկա համագումարը: Մեր բոլոր կազմակերպությունները պետք է բոլշևիկորեն յուրացնեն 31 թվի ճեղքվածքների դասերը, պետք է բոլշևիկորեն վերակառուցեն իրենց բոլոր աշխատանքները՝ անպայման ապահովելու համար հընգամյակի վերջին, ավարտական տարվա բոլոր պլանների լրիվ և ամբողջական կատարումը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՄԱՐՏԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Ընկերնե՛ր, մեր յերկիրը դառնում է ինդուստրիալ-ագրարային առաջավոր մի շրջան դառնալու նախօրյակին: Մենք թվեցինք արդյունաբերության գծով ձեռք բերված նվաճումները, վորոնք թե՛ ծավալի և թե՛ վորակի տեսակետից նշանակալից են հատկապես վերջին յերկու տարվա ժամանակաշրջանում: Մեր կուսակցության կենտրոնական շտաբը, Համկոմկուսի Կենտկոմը հնարավոր համարեց Անդրկովկասի կոմ. կազմակերպությունների աշխատանքի վերաբերյալ իր հայտնի վորոշման մեջ, մասնավորապես հիշել «նշանակելի հաջողություններ շինարարության թափի, ինչպես նաև վորակի ասպարեզում, վոր ձեռք է բերել Հայաստանի կուսկազմակերպությունը վերջին տարիների ընթացքում»: Հիշված հաջողությունները, ինչպես շեշտեցինք, չեն կարող առիթ լինել՝ թերագնահատելու կամ սվաղելու, կոծկելու խոշորագույն թերություններ մեր արդյունաբերության աշխատանքներում: Այդ թերություններից գլխավորը հնգամյակի յերրորդ, վճռական տարվա պլանների թերակատարումն է: 1931 թվի արդֆինպլանները պետական արդյունա-

բերությունը կատարեց 80,6 տոկոսով, ժողտնտխորհի ար
դյունաբերությունը նույնիսկ միայն 74,6 տոկոսով, տնայ
նագործական արդյունաբերությունը՝ 80,8 տոկոսով: Վո՞ր
տեղ պետք է փնտրել այս անթույլատրելի յերևույթի պատ
ճառները: Հիմնական պատճառին անցնելուց առաջ՝ յերկու
խոսքով կանգ առնենք չնախատեսված մի քանի դժվարու
թյունների վրա, վորոնք բացասական ազդեցություն գործե
ցին արդյունաբերության և առհասարակ ժողովրդական
տնտեսության պլանների կատարման ընթացքի վրա: Հիշենք
ամենից առաջ Զանգեզուրի յերկրաշարժը. այդ յերկրաշար
ժը հսկայական մի աղետ եր Ղափանի, Գորիսի, Սիսիան
և Մեղրու շրջանների աշխատավորության համար. նրա հե
տևանքները յեթե համեմատաբար այնքան էլ ծանր չեղան
այդ շնորհիվ Խորհրդային Միության կառավարության
հասարակայնության արագ և լայն աջակցության, ինչպե
նաև Զանգեզուրի կուսակցական և խորհրդային կազմակեր
պությունների ու աշխատավորության ամուր կազմակերպ
վածության: Յերկրաշարժից վնասված շրջանների վերա
կանգնման աշխատանքները պահանջեցին հավելյալ բանվո
րական ձեռքեր, շինանյութեր, ֆինանսական միջոցներ,—
մի հանգամանք, վոր չեր կարող բացասական ազդեցությու
չգործել այլ բնագավառների, մանավանդ Ղափանի պղնձա
հանքերի պլանների կատարման ընթացքի վրա:

Յերկաթուղային տրանսպորտի վիճակը և փոխադրում
ների պլանի թերակատարումը նույնպես խանգարեցին արդյու
նաբերության մի շարք ճյուղերի պլանների կատարում
(Արթիկ-տուֆ, պեմզա և այլն): Բացասական ֆակտորների
հիշենք վերջապես շինանյութերի (անտառանյութ, յերկա
և այլն) և առհասարակ արդյունաբերական մատակարարմ
անբավարար դրությունը հաշվետու շրջանում: Ահա բա
ցասական ազդակներից մի քանիսը. խոսելով նրանց մասին
անմիջապես պիտի շեշտենք, սակայն, վոր նրանք վճռակա
նշանակություն չունեն. ավելին. նրանց գործած բացասա
կան ազդեցությունը հնարավոր եր վերացնել, յեթե մի

մեր կազմակերպությունները ներքևից մինչև վերև վերա-
կառուցվեյին համաձայն նոր պայմանների, հայտաբերեյին
և լրիվ օգտագործեյին տեղական հնարավորությունները՝
հետևողականորեն կիրառեյին աշխատանքի բոլոր բնագա-
վառներում ընկ. Ստալինի պատմական վեց ցուցումները:
Հաղթանակի հիմնական լծակների, ընկեր Ստալինի վեց
ցուցումների անբավարար կենսագործումը,— ահա վճռա-
կան տարվա արդֆինպլանների թերակատարման ամենաէյա-
կան ու հիմնական պատճառը: Ամփոփելով 29–30 թվի արդ-
ֆինպլանների կատարումը, ընկ. Ստալինը մի տարի առաջ
հարց եր տալիս—կայի՞ն արդյոք բոլոր անհրաժեշտ պայ-
մանները պլանների լրիվ կատարման համար. այո՛, կային,
պատասխանում է նա. հարց է առաջ գալիս. ինչո՞ւ լրիվ
չկատարվեցին տարեկան պլանները, ի՞նչը խանգարեց, ի՞նչն
եր պակասում: Պակասում եր,—շեշտում է ընկ. Ստալինը,—
յեղած հնարավորությունների օգտագործման կարողու-
թյունը, պակասում եր գործարանների, ֆաբրիկների, շախ-
տերի ճիշտ ղեկավարությունը: Ընկեր Ստալինի պատաս-
խանը միանգամայն ճիշտ է 31 թվի մեր արդֆինպլանների
թերակատարման պատճառների մասին ևս: Յեվ այդ փաստն
առանձնապես աչքի յե ընկնում, յերբ վերլուծում ենք ա-
ռանձին ձեռնարկությունների պլանների կատարման ըն-
թացքը: Սկսենք պղնձից:

ՊՂՆՁԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՅՔԱՐԻ ՄԱՐՏԱԿԱՆ ՃԱԿԱՏՈՒՄ

Ընկերնե՛ր, բնական է և հասկանալի այն ուշադրու-
թյունը, վոր բևեռում ենք պղնձարդյունաբերության վրա:
Պղնձարդյունաբերությունը Հայաստանի արդյունաբերու-
թյան առաջատար ճյուղն է և ունի հետագա զարգացման
հսկայական հեռանկարներ: Պղինձը բացառիկ կարևոր նշա-
նակություն ունի Խորհրդային Միության ինդուստրացման,
ելեկտրիֆիկացիայի, մեքենաշինության, ելեկտրական կա-

ղի զարգացման համար։ Հսկայական է պղնձի դերը նաև մեր յերկրի ռազմական պաշտպանության գործում։ Մինչդեռ Խորհրդային Միությունն զգում է պղնձի հսկայական պակաս։ Բավական է միայն նկատի ունենալ, վոր 1929 թվին Խորհրդային Միությունն սպառել է միայն 130.000 տոնն պղինձ այն ժամանակ, յերբ նույն տարում Հյուսիսային Ամերիկայի Միացյալ Նահանգները գործածել են 1 միլիոն 137.000 տոնն։ Ինչքան էլ համեմատաբար չնչին է պղնձի սպառումը Խորհրդային Միության մեջ, բայց և այնպես մենք սեփական արտադրությամբ դեռ չենք ծածկում սպառման քանակը։ Նույն 1929 թվին Խորհրդային Միության մեջ արտադրված է ընդամենը 46.000 տոնն պղինձ։ Պղնձի պակասը ծածկելու համար, մենք դեռ ստիպված ենք զգալի չափով պղինձ ներմուծել արտասահմանից՝ վճարելով խոշոր գումարներ։ Այս միքանի թվերը բավական են հասկանալու համար այն մեծ պատասխանատվությունը, վոր ընկնում է Հայաստանի Կոմունիստական Կուսակցության վրա՝ պղնձարդյունաբերության զարգացման գծով, նկատի ունենալով այն լայն հնարավորությունները, վոր ունենք այդ ուղղությամբ Հայաստանում։ Ճիշտ է, Ուրալում, Սիբիրում, Ղազախստանում, Միջին Ասիայում հայտաբերվել են պղնձի հսկայական պաշարներ, սկսվել են լայն ձեռնարկումներ՝ զարգացնելու համար պղնձի արտադրանքն այդ շրջաններում, բայց այս բոլորը յերբեք չի նսեմացնում մեր պղնձահանքերի նշանակությունը։

Պղնձարդյունաբերության ֆրոնտը դասակարգային պայքարի կարևորագույն ճակատամասն է. այս ճշմարտությունը գիտակցում են և մեր թշնամիները։ Պատահական յերևույթ չէ, վոր պղնձարդյունաբերությունը մեր տնտեսության այն ճյուղն է, ուր ամենից ավելի ակտիվություն հայտաբերեցին բուրժուական վնասարարները. վնասարարներ՝ Իվանովը, Զլակազովը և ընկ. ջանք չեյին խնայում քայքայելու համար պղնձարդյունաբերությունը, արհեստական արգելակներ դնելու համար նրա զարգացման առաջ

ավելին, նրանց լկտիությունն այնտեղն էր հասնում, վոր համարձակվում էյին ուղղակի առաջարկ մտցնել՝ լիկվիդացիայի յենթարկելու պղնձի գործն Ալլահվերդում, իբր թե պղնձի պաշարների սպառման պատճառով, բայց ըստ էության այդ պաշարը կապիտալիստական տերերի կամ կոնցեսիոներների համար պահպանելու նպատակով։ Ալլահվերդու բանվորները և մեր կուսակցությունը, բարեբախտաբար, կարողացան ժամանակին մերկացնել վնասարարների դեմքը և կործանիչ հարված հասցնել նրանց «պլաններին»։

Պետք է ընդգծել նաև, վոր ժողովրդական տնտեսության այսպես կոչված «վերականգնման» շրջանը քիչ բան տվեց մեր պղնձարդյունաբերության զարգացմանը։ Ֆրանսացի կոնցեսիոներները շահագործում էյին ժամանակին մեր հանքերն ամենավայրենի, գիշատիչ յեղանակով։ Պարզ է, վոր նրանք չթողին քիչ շատ աչքի ընկնող տեխնիկական բազա. պատերազմը և դաշնակների տիրապետությունը վերջնական քայքայման հասցրին պղնձարդյունաբերությունը։ Խորհրդային իշխանության հաստատման առաջին տարիներում բավարար չի յեղել ուշադրությունը դեպի պղնձահանքերի շահագործման գործը։ Մեր կուսակցության նախկին ղեկավարության — նացիոնալ-ուկլոնիստական թեքում տվող ղեկավարության,— սխալներից մեկն էր նաև այս հանգամանքը. Հայաստանի պղնձի նշանակության թերագնահատումն ըստինքյան ուկլոնիստական տենդենց է դրսևորում. չեմ խոսում այն մասին, վոր ժամանակին փոխանակ պղնձարդյունաբերության բարձրացման համար լուրջ միջոցառումների խնդիրը դնելու՝ նախկին ղեկավարության ժամանակ մի պահ մտածում էյին պղնձարդյունաբերությունը նախկին Ֆրանսիացի շահագործողներին կոնցեսիայով տալու հնարավորությունների մասին։

Մեր պղնձարդյունաբերության բարձրացման և վերակառուցման համար լուրջ աշխատանքների սկիզբը դրվում է միայն 1926–27 թվից, և այնուհետև տարեց-տարի աճում է պղնձի արտադրանքը. այսպես, 26–27 թվին Հայաստանը

տվել է 1.449 տոնն պղինձ, 27–28 թվին՝ 1.972 տոնն՝ 28–29 թվին՝ 2.884 տոնն, 29–30 թվին և հատուկ կվարտալում՝ 3.000 տոնն և վերջապես 1931 թվին՝ 3.325 տոնն։

Այսպիսով, թեև աճում է անընդհատ պղնձի արտադրությունը թե՛ Ալլահվերդում և թե՛ Ղափանում, այնուամենայնիվ անբավարար են աճման տեմպերը։ Մանավանդ չափազանց անդոհացուցիչ են 1931 թ. արդֆինպլանների կատարման թե՛ քանակական և թե՛ որակական ցուցիչները, պղնձահանքի հանույթի տարեկան պլանը կատարվել է 74,3 տոկոսով, պղնձի ձուլման պլանը 58 տոկոսով, կարմիր պղնձի արտադրանքը 61,7 տոկոսով։ Որակական ցուցանիշների մասին գաղափար են տալիս հետևյալ թվերը։ Ղափանում մեկ տոնն պղինձը պլանով նախատեսված 1.183 ռուբլու փոխարեն՝ նստում է մեզ վրա 1.622 ռ. այն ժամանակ, երբ պղնձի վաճառման պաշտոնական գինը Խորհրդային Միության մեջ 900 ռուբլի յե։

Այսպիսով, պիտի յեզրակացնենք, վոր միանգամայն անբավարար են 31 թվի արդյունքները պղնձարդյունաբերության ֆրոնտում։ Յեվ դրա հիմնական պատճառը յեղած հնարավորությունների լրիվ օգտագործման կարողության պակասությունն է։ Յեվ իսկապես։ Զափազանց թույլ է ընթացել կապիտալ շինարարությունը պղնձարդյունաբերության մեջ։ Ղափանի յերկաթուղագիծը, վորը պետք է վերջանար անցյալ տարի՝ ավարտվելու յե այս տարվա առաջին կվարտալում միայն. Ղափանի ֆլոտացիայի և Ալլահվերդու մետալաձուլման գործարանների շինարարությունն առաջ է գնում կրիայի քայլերով։ Ընկեր Ստալինի ցուցումների կիրառումը պղնձարդյունաբերության մեջ մնում է միանգամայն անբավարար։ Ղափանի և Ալլահվերդու վո՛չ տնտեսական ղեկավարությունը, վո՛չ պրոֆկազմակերպությունը և վոչ էլ կուսակցական կազմակերպությունը չեն կարողացել բոլշևիկյան գործ դարձնել առաջնորդի ցուցումները, չեն կարողացել վերակառուցվել ըստ նոր

պայմանների պահանջների։ Այլապես ինչո՞վ բացատրել պլանների հսկայական թերակատարումը այն ժամանակ, յերբ և՛ Ալլահվերդին, և՛ Ղափանը հիմնականում ունեցել են պլանով նախատեսված բանվորների քանակը։

Չնայած խոշոր աշխատանքին, վոր կատարեցին բազմաթիվ շրջաններ՝ ապահովելու համար Ալլահվերդին բանվորական ուժով, Ալլահվերդու տնտեսավարները և կազմակերպությունները չկարողացան ամրացնել բանվորների կայուն կադր։ Բանվորների հոսունությունն այստեղ ահռելի չափերի յե հասնում. մի տարվա ընթացքում մոտ 80 տ. փոխվել է Ալլահվերդու բանվորների կազմը։ Հիմնական պատճառը, անշուշտ, վատ աշխատանքն է և աշխատանքի թույլ կազմակերպումը, դիմազրկության և հավասարեցման պրակտիկան, բանվորների նյութական կենցաղային պահանջների անբավարար սպասարկումը և մասսայական-դաստիարակչական աշխատանքի ցածր մակարդակը։ Չենք կարող չհիշել այն խայտառակ յերևույթը, յերբ բնակարանային ծայր աստիճան կարիքի պայմաններում պղնձարդյունաբերության բնակարանային շինարարության պլանը կատարվել է միայն 50 տոկոսով։

Չնայած վորոշ բեկման, վոր ունենք աշխատանքի արտադրողականության բարձրացման գծով, դրությունն այստեղ նույնպես ընդհանուր առմամբ մնում է անբավարար։ Բավական է նկատի ունենալ, վոր մեր հանքափոր բանվորի արտադրողականությունը 30–40 տոկոսով հետ է մնում Ուրալի հանքափորի արտադրողականությունից։ Այստեղ մեղքն այնքան բանվորի վրա չի ընկնում, վորքան հանքերի տեխնիքական ղեկավարության վրա, վոր շատ դեպքերում դոյություն չունենալու չափ թույլ է։ Շնորհիվ հանքերի և գործարանների տեխնիքական ղեկավարության թուլության, մեծ չափերի յեն հասնում մեխանիզմների խանգարման, ավարիաների դեպքերը, մեխանիզմների և բանվորների պարապուրդները, և այլ. այն պատճառով, վոր չկա կոնկրետ ղեկավարություն, կոնտրոլ, հսկողություն, դիմա-

դըրկությունն արմատախիլ չի արված մեխանիզմների նկատմամբ, լուրջ ուշադրություն չեն դարձրել մեխանիզմների մասերի վերանորոգման գործի կազմակերպման վրա:

Կարիք կա՞ չեշտելու նաև, վոր տնտեսական հաշվարկի կիրառումը պղնձարդյունաբերության մեջ դեռ մինչև այժմ էլ ձևական բնույթ է կրում. պղնձարդյունաբերության մեր ղեկավարները ինքնախաբեությամբ են զբաղվում, յերբ զեկուցում են մեզ այն մասին, թե իբր նրանք ամբողջապես կիրառում են տնտեսական հաշվարկը. այդ ի՞նչ տնտեսական հաշվարկ է, յերբ պլանները թերակատարվում են կիսով չափ, յերբ բարձրանում է ինքնարժեքը և այդ բոլորը տնտեսապես չի անդրադառնում պղնձարդյունաբերության առանձին ողակների, առանձին միավորների ֆինանսավորման վրա: Լուրջ, բոլշևիկյան տնտեսական հաշվարկի հիմնական իմաստը կայանում է ինքնարժեքի իջեցման, արդյունաբերության ներքին կուտակումների աղբյուրների լայնացման մեջ, իսկ այդ գծով դեռ վորևե լուրջ քայլ չեն կատարել մեր տնտեսավարները պղնձարդյունաբերության մեջ:

Վերջապես՝ անբավարար պետք է համարել նաև Ղափանի և Ալլահվերդու կուսակցական և պրոֆեսիոնալ կազմակերպությունների վերակառուցման ընթացքը: Բոլշևիկյան վերակառուցման վերջնական ցուցիչ պետք է համարել արդֆինպլանների վորակական և քանակական ցուցիչների կատարումը: Հարցն այդպես դնելով՝ պետք է ընդունենք, վոր և՛ Ղափանը, և՛ Ալլահվերդին հետևողականորեն դեռ չեն կիրառում կուսակցության դիրեկտիվները վերակառուցման մասին, չափազանց թույլ է, իսկ վորոշ միավորներում բացակայում է կուսակցության և պրոֆմիության կազմակերպված սարքին ողակը, վոր պետք է պատասխանատու լիներ տվյալ ողակի կամ բրիգադի արդֆինպլանի կատարման համար: Դրանով է բացատրվում նաև աշխատանքի կարգապահության թուլա-

թյունը, գործալքումների դեպքերի համեմատական ավելացումը, սոցիալիստական աշխատանքի նոր, բարձր ձևերի թույլ պատվաստումը պղնձարդյունաբերության մեջ:

Ահա, ընկերնե՛ր, պղնձարդյունաբերության պլանների թերակատարման հիմնական պատճառները:

Հոկտեմբերի 31-ի հայտնի վորոշման մեջ Համկոմկուսի Կենտկոմն անհրաժեշտ գտավ «սկսել Անդրկովկասում լեռնային արդյունահանող արդյունաբերության (ածխի, գունավոր մետաղների, մանգանի, պղնձի, ալյումինի) լայն զարգացումը: Մասնավորապես պղնձի հանույթն ավելացնելու նպատակով անմիջապես ձեռնարկել Ղափանի և Ալլահվերդու պղնձահանքերի կապիտալ վերակառուցմանն ու վերասարքավորմանը»: Կենտկոմի այս վորոշման կիրառումն առաջին և կարևորագույն խնդիրն է Հայաստանի Կոմկուսակցության համար:

Հիմնական խնդիր առաջադրելով այս տարի վերջացնել բոլոր անհրաժեշտ նախապատրաստական աշխատանքները՝ 33 թվին լայն ծավալ տալու համար պղնձի հանույթին և անպայման իրացնել 32 թ. կապիտալ շինարարության պլանը, վորպես պղնձարդյունաբերության առաջիկա աճման բուռն տեմպերի անհրաժեշտ նախապայման, Կենտկոմը համաձայնեց գունավոր մետաղների գլխավոր վարչության առաջարկին՝ հաստատել պղնձի հանքի պլանը 1932 թվին 4100 տոնն, վորից 2800 տոնն Ալլահվերդում և 1300 տոնն Ղափանում: Ղափանի և Ալլահվերդու ընկերները հայտնում են, վոր նրանք հանդիպական պլանով հասցնում են պղնձարդյունաբերության տարեկան պլանը 4500 տոննի: Մեր համագումարն իրավունք ունի, սակայն, սպասելու Ալլահվերդու և Ղափանի կուսկազմակերպություններից, բանվորներից և մասնագետներից, վոր նրանք բոլշևիկյան պայքարով և՛լ ավելի կլայնացնեն հանդիպական պլանը, կտան խորհրդային յերկրին այս տարի 5000 տոնն պղինձ—վոչ պակաս: Նախորդ տարվա փաստական հանույթի համեմատությամբ պղնձի հանույթն աճելու յե

այդպիսով 70 տոկոսով: Պղնձի պլանի կատարումը և գերակատարումը վոչ միայն Ալլահվերդու և Ղափանի, այլև Հայաստանի բոլշևիկների և կոմյերիտականների պատվի խնդիր պիտի դառնա:

Ապահովելու համար այս տարվա պլանների կատարումը, մանավանդ 33 թվին եռակի թռիչք ապահովելու համար պղնձարդյունաբերության գծով՝ անհրաժեշտ է.—

1. Արագ թափով առաջ մղել կապիտալ շինարարության գործը. մենք պահանջում ենք գունավոր մետաղների գլխավոր վարչությունից՝ բաց թողնել 32 թվի կապիտալ շինարարության համար 13 միլ. ռուբլուց վոչ պակաս: Պետք է ասել, վոր Մոսկվայի մի շարք տնտեսական հիմնարկներում գոյություն ունեյին մեր պղնձահանքերի նշանակության թերագնահատման տենդենցները. նույնիսկ կենտկոմի պարզորոշ պահանջից հետո էլ մարդիկ չեն ուզում բոլշևիկյան տեմպեր ծավալել պղնձարդյունաբերության վերակառուցման և վերասարքավորման համար: Պետք է հաղթահարել կապիտալ շինարարության նկատմամբ մի շարք հիմնարկություններում նկատվող օպորտունիստական դանդաղկոտությունը. այս տարվա առաջին կվարտալում պետք է ավարտվի Ղափանի յերկաթուղին, յերկրորդ կիսամյակի սկզբին՝ Ֆլոտացիոն գործարանը և Ալլահվերդու նոր պղնձաձուլարանը: Լայն ծավալ պիտի ստանա բնակարանային և կոմունալ շինարարությունը Ղափանում և Ալլահվերդում: Ղափանի հանքերի հիմնական վերակառուցումը պետք է ընթանա արագ և մեծ թափով. ահա մեր առաջին պահանջը պղնձի գծով:

2. Ուժեղացնել յերկրաբանական–հետախուզական աշխատանքները, վորոնք պղնձարդյունաբերության հիմքն են կազմում, բայց մինչև այժմ հետ են մնացել թե գոյություն ունեցող արտադրության չափից և թե մանավանդ կառուցվող գործարանի պահանջից: 1931 թվի 11 ամսում հետախուզական աշխատանքները կատարվել են տարեկան պլանի 60 տոկոսով (6683 մետր), իսկ հանքերի պատ-

րաստման պլանը՝ 51 տոկոսով (2326 մետր): Կենտկոմը հաստատեց հետախուզական–յերկրաբանական աշխատանքների լայն ծրագիր 32 թվի համար. այդ ծրագիրը, վոր կազմել ենք այն հաշվով, վորպեսզի 33 թվի սկզբին ունենանք առնվազն յերկու տարվա պաշար, պետք է կատարվի լրիվ և ամբողջությամբ:

3. Ըստ էության և հետևողականորեն կիրառել ընկ. Ստալինի ցուցումներն արդյունաբերության բոլոր ողակներում, ամրացնել տնտեսական հաշվարկը, վերջ տալ դիմազրկությանն ու հավասարեցմանը, ամրացնել բանվորական կադրերը, լայնացնել վորակյալ բանվորների պատրաստման գործը, բարձրացնել ինժեներ–տեխնիկական կազմի աշխատանքների վորակը, բարձրացնել աշխատանքի կարգապահությունը և արտադրողականությունը, վերակառուցել կուսակցական և մասսայական աշխատանքները՝ ապահովելու համար պլանների վոչ միայն քանակական, այլև վորակական ցուցանիշների կատարումը:

Պղնձարդյունաբերությունը պետք է մնա կենտրոնական բոլոր հիմնարկների ուշադրության կենտրոնում:

Մենք պետք է պայքարենք՝ ամենալայն չափով օգտագործելու համար մեր պղնձահանքերը և դարձնելու Հայաստանը Խորհրդային Միության պղնձարդյունաբերության հիմնական բազաներից մեկը: Լավագույն ուժերը, լավագույն մասնագետները, պղնձի ֆրոնտին: Կենտկոմի և ընկ. Ստալինի ցուցումների բոլշևիկյան կիրառմամբ Ղափանի և Ալլահվերդու բոլշևիկներն ու հարվածայինները պետք է միանգամընդմիշտ ջնջեն ճեղքվածք բառը պղնձի ֆրոնտի բառարանից:

ՅԵՐԿՐԻ ԵԼԵԿՏՐԻՖԻԿԱՑԻԱՆ ԱՌԱՋԻՆ ԳԾԻ ՎՐԱ

Հայտնի յե ելեկտրիֆիկացիայի նշանակությունը, վորպես մեր տնտեսության վերակառուցման և մեծաթափ աճման կարևորագույն լծակ: Մեր յերկրի բնական պայ-

այդպիսով 70 տոկոսով: Պղնձի պլանի կատարումը և գերակատարումը վոչ միայն Ալլահվերդու և Ղափանի, այլև Հայաստանի բոլշևիկների և կոմյերիտականների պատվի խնդիր պիտի դառնա:

Ապահովելու համար այս տարվա պլանների կատարումը, մանավանդ 33 թվին վճռական թռիչք ապահովելու համար պղնձարդյունաբերության գծով՝ անհրաժեշտ է.—

1. Արագ թափով առաջ մղել կապիտալ շինարարության գործը. մենք պահանջում ենք գունավոր մետաղների գլխավոր վարչությունից՝ բաց թողնել 32 թվի կապիտալ շինարարության համար 13 միլ. ռուբլուց վոչ պակաս: Պետք է ասել, վոր Մոսկվայի մի շարք տնտեսական հիմնարկներում գոյություն ունեյին մեր պղնձահանքերի նշանակության թերագնահատման տենդենցները. նույնիսկ կենտկոմի պարզորոշ պահանջից հետո էլ մարդիկ չեն ուզում բոլշևիկյան տեմպեր ծավալել պղնձարդյունաբերության վերակառուցման և վերասարքավորման համար: Պետք է հաղթահարել կապիտալ շինարարության նկատմամբ մի շարք հիմնարկություններում նկատվող ոպորտունիստական դանդաղկոտությունը. այս տարվա առաջին կվարտալում պետք է ավարտվի Ղափանի յերկաթուղին, յերկրորդ կիսամյակի սկզբին՝ Ֆլոտացիոն գործարանը և Ալլահվերդու նոր պղնձաձուլարանը: Լայն ծավալ պիտի ստանա բնակարանային և կոմունալ շինարարությունը Ղափանում և Ալլահվերդում: Ղափանի հանքերի հիմնական վերակառուցումը պետք է ընթանա արագ և մեծ թափով. ահա մեր առաջին պահանջը պղնձի գծով:

2. Ուժեղացնել յերկրաբանական-հետախուզական աշխատանքները, վորոնք պղնձարդյունաբերության հիմքն են կազմում, բայց մինչև այժմ հետ են մնացել թե գոյություն ունեցող արտադրության չափից և թե մանավանդ կառուցվող գործարանի պահանջից: 1931 թվի 11 ամսում հետախուզական աշխատանքները կատարվել են տարեկան պլանի 60 տոկոսով (6683 մետր), իսկ հանքերի պատ-

րաստման պլանը՝ 51 տոկոսով (2326 մետր): Կենտկոմը հաստատեց հետախուզական-յերկրաբանական աշխատանքների լայն ծրագիր 32 թվի համար. այդ ծրագիրը, վոր կազմել ենք այն հաշվով, վորպեսզի 33 թվի սկզբին ունենանք առնվազն յերկու տարվա պաշար, պետք է կատարվի լրիվ և ամբողջությամբ:

3. Ըստ էության և հետևողականորեն կիրառել ընկ. Ստալինի ցուցումներն արդյունաբերության բոլոր ողակներում, ամրացնել տնտեսական հաշվարկը, վերջ տալ դիմազրկությանն ու հավասարեցմանը, ամրացնել բանվորական կադրերը, լայնացնել վորակյալ բանվորների պատրաստման գործը, բարձրացնել ինժեներ-տեխնիկական կազմի աշխատանքների վորակը, բարձրացնել աշխատանքի կարգապահությունը և արտադրողականությունը, վերակառուցել կուսակցական և մասսայական աշխատանքները՝ ապահովելու համար պլանների վոչ միայն քանակական, այլև վորակական ցուցանիշների կատարումը:

Պղնձարդյունաբերությունը պետք է մնա կենտրոնական բոլոր հիմնարկների ուշադրության կենտրոնում:

Մենք պետք է պայքարենք՝ ամենալայն չափով ոգտագործելու համար մեր պղնձահանքերը և դարձնելու Հայաստանը Խորհրդային Միության պղնձարդյունաբերության հիմնական բազաներից մեկը: Լավագույն ուժերը, լավագույն մասնագետները, պղնձի ֆրոնտին: Կենտկոմի և ընկ. Ստալինի ցուցումների բոլշևիկյան կիրառմամբ Ղափանի և Ալլահվերդու բոլշևիկներն ու հարվածայինները պետք է միանգամընդմիշտ ջնջեն ճեղքվածք բառը պղնձի ֆրոնտի բառարանից:

ՅԵՐԿՐԻ ԵԼԵԿՏՐԻՖԻԿԱՑԻԱՆ ԱՌԱՋԻՆ ԳԾԻ ՎՐԱ

Հայտնի յե ելեկտրիֆիկացիայի նշանակությունը, վորպես մեր տնտեսության վերակառուցման և մեծաթափ աճման կարևորագույն լծակ: Մեր յերկրի բնական պայ-

ժանները լայն հնարավորություն են տալիս օգտագործելու ջրի ուժը, ելեկտրական էներգիայի արտադրման համար: Յեվ ելեկտրիֆիկացիայի գծով մենք ունենք խոշոր հաջողություններ: Յես արդեն հիշեցի, վոր ելեկտրոշինարարության կապիտալ ներդրումների հնգամյակը Հայաստանում գերակատարվեց յերեք տարում. մեր ելեկտրական կայանների ընդհանուր ուժը 31 թվին կազմում եր 19·486 կիլովատ՝ 28–29 թվին 9·702 կիլովատի փոխարեն. 28–29 թ. արտադրված 28·400·000 կիլովատ ժամ էներգիայի փոխարեն 31 թվին արտադրվել ե 49·261·000 կիլովատ ժամ ելեկտրական ուժ: Առաջխաղացումն անվիճելի յե: Սակայն ելեկտրիֆիկացիայի ներկա տեմպերն արդեն հետ են մնում ժողովրդական տնտեսության աճման տեմպերից. ելեկտրական ուժն արդեն այժմ մեր տնտեսության «նեղ» տեղերից մեկն ե. կառուցման մեջ գտնվող կայանների ամբողջ ուժն արդեն բաժանված ե գոյություն ունեցող սպառող կամ կառուցվող միավորների վրա: Յեվ չնայած դրան՝ սկսված կայանների կառուցման տեմպը չափազանց անբավարար ե:

Ձորագեսը, վոր ավարտված պետք ե լիներ անցյալ տարվա վերջին կվարտալում, գործի յե դրվում միայն այժմ. Ձորագեսի բացումը՝ թեև փոքր ինչ ուշացած՝ հիմնականում սարքավորման անկանոն ստացման պատճառով՝ աչքի ընկնող հաղթանակ ե Հայաստանի բանվորների և աշխատավորների համար. Ձորագեսի բացումը լավագույն նվերն է, վոր ստանում է համագումարը յերկրի ինդուստրացման և ելեկտրիֆիկացիայի գծով (ծափեր):

Հաշվետու շրջանում ավարտվեց Իջևանի, Դիլիջանի և Գորիսի ելեկտրոկայանների կառուցումը և գործարկումը. սկսվեցին Քանաքեռգեսի, Յերևանի յերկրորդ կայանի, Մեղրու, Սիսիանի, Քեշիշքենդի կայարանի կառուցման աշխատանքները: Սակայն այդ աշխատանքների տեմպն անբավարար ե: Մանավանդ հսկայական նշանակություն ունեցող Քանաքեռգեսի և յերկրորդ Ձորգեսի կառուցման աշխատանքներն անմխիթար դրության մեջ են գտնվում. յերկրորդ Ձորգեսը, վոր պիտի ավարտված լիներ 1931 թվի վերջերին և վորը սարքավորումով լիովին ապահովված ե՝ դեռ հեռու յե պատրաստ լինելուց: Քանաքեռգեսի կառուցման անցյալ տարվա պլանը կատարվեց հազիվ 40–45 տոկոսով՝ վտանգելով կայանի վորոշված ժամկետին գործի գնելը: Կառուցման տեմպերը իջեցնում ե ղեկավարությունը, վորը մեծ չափով դեռ տեղ ունի ելեքտրաշինարարության ղեկավար օղակներում, բանվորական ուժի պակասը, վոր առաջ ե գալիս շնորհիվ այն հանգամանքի, վոր կառուցվող կայանների ղեկավարությունը չի ապահովում ընկեր Ստալինի առաջին պայմանի կիրառումը՝ բանվորական ուժի կազմակերպված հավաքագրության ու ամրացման մասին, կառուցողական աշխատանքների մեքենայացման խոշոր հետամնացությունը, թեև Քանաքեռգեսը, օրինակ աշխատանքների մեքենայացման խոշոր հնարավորություններ ունի, և վերջապես մասսայական–քաղաքական աշխատանքների թուլությունը կառուցող բանվորների մեջ: Այսպիսով, մենք տեսնում ենք, վոր ելեկ. շինարարության ճեղքվածքների պատճառը վատ աշխատանքն ե և վատ ղեկավարությունը. հանդուրժել գոյություն ունեցող պակասությունները այս բնագավառում՝ չի կարելի այլևս վոչ մի օր. Կենտկոմը վերջերս հատուկ վորոշումներով մի շարք միջոցառումներ մշակեց՝ արագացնելու համար Քանաքեռգեսի կառուցումը: Շինարարության ղեկավարությունն ու կուսակցական և պրոֆեսիոնալ կազմակերպությունները բոլշևիկյան աշխատանքով պիտի ապահովեն Կենտկոմի դիրեկտիվների կատարումը: Սկսված բոլոր կայանների կառուցումը և գործարկումը պետք ե կատարվի ճիշտ նախատեսված ժամկետներին: Այս պահանջը կատարելու բոլոր անհրաժեշտ պայմանները մենք ունենք, մնում ե ընկ. Ստալինի ցուցումների կիրառմամբ բարձրացնել կառուցման տեմպերը, վերացնել անցյալ տարվանից մնացած ճեղքվածքները, իջեցնել շինարարության ինքնարժեքը, ժամանակին գործի գնել կայանները: Քանաքեռգեսի, ինչպես նաև մյուս ելեք-

տրակայանների կառուցման վրա աշխատող բանվորները պետք է լավ իմանան, վոր կայանների ժամանակին գործարկելուց է կախված մեր յերկրի արդյունաբերության հետագա զարգացումը:

Հաշվետու շրջանում հիմնականում դրական վճիռ ստացավ Սևանա լճի ջրի պաշարի օգտագործման խնդիրը. Սևանի պրոբլեմի լուծումը բաց է անում աննախընթաց լայն հեռանկարներ մեր յերկրի էլեկտրիֆիկացիայի, վոռոգման, արտադրական ուժերի զարգացման համար: Ի՞նչ ուղղությամբ է օգտագործվելու Սևանի ջրի հսկայական պաշարը: Կենտկոմը սկզբից ևեթ այն կարծիքին եր, վոր Սևանի ջրի պաշարի օգտագործումը պետք է գնա էլեքտրիֆիկացիայի և վոռոգման աշխատանքների սերտ շաղկապման, կոմպլեկտավորման գծով, ամեն պարագային նախապատվություն տալով էլեքտրիֆիկացիային: Այդ նշանակում է, վոր Սևանից բաց թողնվող ջուրն էլեքտրիֆիկացիայի համար հնարավոր պայմաններում առավելագույն չափով օգտագործվելուց հետո միայն օգտագործվելու յե վոռոգման նպատակներով: Սևանի օգտագործման այդ տեսակետը մանրամասն ուսումնասիրությունից հետո հավանություն գտավ խորհրդային և կուսակցական վերադաս օրգանների կողմից: Սևանի ջրի վրա կառուցվող կայանների բացառիկ առավելությունը կայանում է նրանում, վոր նրանք հնարավորություն կտան կանոնավորել էլեքտրական ցանցի աշխատանքը, բեռնավորելով ցանցը տարվա այն ժամանակներին, յերբ ջրի պակասության պատճառով պակասում է մյուս էլեկտրոկայանների ուժը: Նախագծվում է Սևանի ջրի վրա, Զանգուի գծով կառուցել հուժկու էլեկտրոկայանների լայն մի ցանց: Նրանցից առաջինը Քանաքեռգեսն է, վոր արդեն կառուցվում է. յերկրորդը լինելու յե Քաղսի, Գյումուշի կայանի կառուցման աշխատանքները, վոր սկսում ենք այս իսկ տարի. այս կայաններին հետևելու յեն Քարվանսարայի, Լճի և այլն, ընդհանուր թվով 10 կայան: Սևանի սխեմի կայանները, ըստ նախնական տվյալների, տալու յեն

մոտ 500 հ. կիլովատ էլեկտրական ուժ, արտադրելով տարեկան 2,5 միլիարդ կիլովատ ժամ էլեկտրական ուժ: Դնեպրոստրոյի ծավալի մի գործ է սա, վորի իրականացումը պահանջում է 2–300 միլ. ռուբլու ներդրումներ: *Ավելացրեք սրան և վոռոգման խնդիրը՝ կայաններում օգտագործված ջրի միջոցով՝ և պարզ կլինեն այն հսկայական հեռանկարները, վորոնք բացվում են մեր առաջ Սևանի պրոբլեմի լուծմամբ:* Սևանի պրոբլեմի ծավալի աշխատանքները Հայաստանում, ինչ խոսք՝ հնարավոր են միայն սոցիալիզմի կառուցման պայմաններում, վորպես օրգանական մասը Անդրկովկասի և Խորհրդային Միության տնտեսական շինարարության ընդհանուր պլանի:

Ահա, ընկերնե՛ր, մի աշխատանք, վոր սոցիալիստական վոգևորության նոր ալիք պիտի բարձրացնի մեր բանվորների, կոլտնտեսականների, գիտական-տեխնիկական ուժերի մեջ: Լենինը ժամանակին կուսակցության յերկրորդ ծրագիր համարելով էլեկտրիֆիկացիայի ծրագիրը, առաջարկում եր այն դասավանդել դպրոցական բոլոր հիմնարկներում: Իրավունք չունե՞նք արդյոք պահանջելու, վորպեսզի Հայաստանի էլեկտրիֆիկացիայի մեծ ծրագիրը, վոր հիմքից փոխելու յե ամբողջ յերկրի տնտեսական պատկերը, լայն մասսայականացման ու դասավանդման առարկա դառնա: Էլեքտրիֆիկացիայի հիմնական պլանի մասսայականացումն այդ պլանի կատարման համար մասսաների մոբիլիզացիայի սկիզբը պիտի դնի:

Կենտրոնացնելով ուշադրությունը Սևանի սխեմի վրա՝ աչքաթող չպիտի արվի, սակայն, շրջանային նշանակություն ունեցող փոքր կայանների շինարարությունը և, առաջին հերթին, Ղափանի արդյունաբերությունը սպասարկող մի ուժեղ կայանի կառուցումը Զանգեզուրում, վորը պետք է սկսենք 33 թվի հենց սկզբից:

Յերկրի էլեկտրիֆիկացիայի աշխատանքները պետք է մնան մեր պայքարի և շինարարության առաջին գծի վրա:

տրակայանների կառուցման վրա աշխատող բանվորները պետք է լավ իմանան, որ կայանների ժամանակին գործարկելուց է կախված մեր յերկրի արդյունաբերության հետագա զարգացումը:

Հաշվետու շրջանում հիմնականում դրական վճիռ ստացավ Սևանա լճի ջրի պաշարի օգտագործման խնդիրը: Սևանի պրոբլեմի լուծումը բաց է անում աննախընթաց լայն հեռանկարներ մեր յերկրի էլեկտրիֆիկացիայի, ոռոգման, արտադրական ուժերի զարգացման համար: Ի՞նչ ուղղությամբ է օգտագործվելու Սևանի ջրի հսկայական պաշարը: Կենտկոմը սկզբից ևեթ այն կարծիքին էր, որ Սևանի ջրի պաշարի օգտագործումը պետք է գնա էլեկտրիֆիկացիայի և ոռոգման աշխատանքների սերտ շաղկապման, կոմպլեկտավորման գծով, ամեն պարագայում նախապատվություն տալով էլեկտրիֆիկացիային: Այդ նշանակում է, որ Սևանից բաց թողնվող ջուրն էլեկտրիֆիկացիայի համար հնարավոր պայմաններում առավելագույն չափով օգտագործվելուց հետո միայն օգտագործվելու յե ոռոգման նպատակներով: Սևանի օգտագործման այդ տեսակետը մանրամասն ուսումնասիրությունից հետո հավանություն գտավ խորհրդային և կուսակցական վերադաս օրգանների կողմից: Սևանի ջրի վրա կառուցվող կայանների բացառիկ առավելությունը կայանում է նրանում, որ նրանք հնարավորություն կտան կանոնավորել էլեկտրական ցանցի աշխատանքը, բեռնավորելով ցանցը տարվա այն յեղանակներին, յերբ ջրի պակասության պատճառով պակասում է մյուս էլեկտրոկայանների ուժը: Նախագծվում է Սևանի ջրի վրա, Զանգուի գծով կառուցել հուժկու էլեկտրոկայանների լայն մի ցանց: Նրանցից առաջինը Քանաքեռգեսն է, որ արդեն կառուցվում է. յերկրորդը լինելու յե Քաղսի, Գյումուշի կայանի կառուցման աշխատանքները, որ սկսում ենք այս իսկ տարի. այս կայաններին հետևելու յեն Քարվանսարայի, Լճի և այլն, ընդհանուր թվով 10 կայան: Սևանի սիստեմի կայանները, ըստ նախնական տվյալների, տալու յեն

մոտ 500 հ. կիլովատ էլեկտրական ուժ, արտադրելով տարեկան 2,5 միլիարդ կիլովատ ժամ էլեկտրական ուժ: Դնեպրոստրոյի ծավալի մի գործ է սա, վորի իրականացումը պահանջում է 2–300 միլ. ռուբլու ներդրումներ: Ավելացրեք սրան և ոռոգման խնդիրը՝ կայաններում օգտագործված ջրի միջոցով՝ և պարզ կլինեն այն հսկայական հեռանկարները, վորոնք բացվում են մեր առաջ Սևանի պրոբլեմի լուծմամբ: Սևանի պրոբլեմի ծավալի աշխատանքները Հայաստանում, ինչ խոսք՝ հնարավոր են միայն սոցիալիզմի կառուցման պայմաններում, վորպես օրգանական մասը Անդրկովկասի և Խորհրդային Միության տնտեսական շինարարության ընդհանուր պլանի:

Ահա, ընկերնե՛ր, մի աշխատանք, վոր սոցիալիստական վոգևորության նոր ալիք պիտի բարձրացնի մեր բանվորների, կոլտնտեսականների, գիտական-տեխնիկական ուժերի մեջ: Լենինը ժամանակին կուսակցության յերկրորդ ծրագիր համարելով էլեկտրիֆիկացիայի ծրագիրը, առաջարկում էր այն դասավանդել դպրոցական բոլոր հիմնարկներում: Իրավունք չունե՞նք արդյոք պահանջելու, վորպեսզի Հայաստանի էլեկտրիֆիկացիայի մեծ ծրագիրը, վոր հիմքից փոխելու յե ամբողջ յերկրի տնտեսական պատկերը, լայն մասսայականացման ու դասավանդման առարկա դառնա: Էլեկտրիֆիկացիայի հիմնական պլանի մասսայականացումն այդ պլանի կատարման համար մասսաների մոբիլիզացիայի սկիզբը պիտի դնի:

Կենտրոնացնելով ուշադրությունը Սևանի խնդրի վրա՝ անցքաթող չպիտի անել, սակայն, շրջանային նշանակություն ունեցող փոքր կայանների շինարարությունը և, առաջին հերթին, Ղափանի արդյունաբերությունը սպասարկող մի ուժեղ կայանի կառուցումը Զանգեզուրում, վորը պետք է սկսենք 33 թվի հենց սկզբից:

Յերկրի էլեկտրիֆիկացիայի աշխատանքները պետք է մնան մեր պայքարի և շինարարության առաջին գծի վրա:

ՆՈՐ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆԸ ԲԱՅԼՇԵՎԻԿՅԱՆ ՏԵՄՊ ՅԵՎ ՎՈՐԱԿ

Ընկերնե՛ր, նոր շինարարության պլանների կատարումը մեզ համար ամեն տեսակետից վճռական նշանակություն ունի. մինչդեռ 1931 թվի արդյունքներն այս ասպարեզում շատ հեռու յեն գոհացուցիչ լինելուց: Հիշենք միայն, վոր նոր շինարարության 1931 թվի 74 միլիոնի պլանն իրացվել ե՝ նախնական տվյալներով՝ հազիվ 50 տոկոսով: Հայբանշինկոոպը կատարել ե իր պլանը 80 տոկոսով, Հայպետշինը՝ 45 տոկոսով, Քանաքեռգեսը՝ 43 տոկոսով, Յերեվանի քաղխորհուրդը՝ 46 տոկոսով և այլն: Ինչպես տեսնում եք, ավելի հեռուն գնալ չի կարելի: Ինչո՞վ բացատրել պլանների նման թերակատարումը ժողովրդական տնտեսության կարևորագույն բնագավառում: Վոմանք կարծում են, վոր այստեղ խնդիրը միայն ներմուծվող շինանյութերի պակասության մեջն ե. սխալ ե, ընկերներ, շինանյութերի պակասը, իհարկե, վորոշ դեր խաղաց շինարարության պլանների թերակատարման խնդրում. սակայն ամենակարևորն այստեղ այն ե, վոր մենք՝ չնայած մասնակի հաջողություններին՝ դեռ չենք տիրել, ինչպես վոր հարկն ե, շինարարության տեխնիկային, չենք կարողանում լիովին օգտագործել այն առավելությունները, վոր ունենք շինարարության համար. ընկ. Ստալինի նշանավոր ցուցմունքները դեռ գործ չեն դառել շինարարության մեջ. կառուցող օրգաններն օպորտունիստորեն թերագնահատում են աշխատանքների մեքենայացման հնարավորությունները: Չկա բանվորների կազմակերպված հավաքագրում. կառուցող բանվորների վորակավորման գործում տիրում ե ինքնահոսը, իրենք կառուցող օրգանները, չեն մտածում բանվորական կադրեր պատրաստելու մասին: Շինարարությունը շատ անգամ ընդհատվում ե նույնիսկ տեղական շինանյութերը ժամանակին չպատրաստելու կամ աշխատանքի վատ կազմակերպման պատճառով: Մարդիկ դանդաղվում են անտառանյութի կամ յերկաթի վատ մատակարարման մասին, բայց յերբ ճարվում ե յերկաթը, մեկ ել հանկարծ իրար են անցնում. բանից դուրս ե գալիս, վոր յերկաթը ճարվեց, բայց ավազ չկա. ավազը ճարում են՝ և ի՞նչ—շենքն ելի չի բարձրանում—քար չկա կամ տրանսպորտը քարհանքից քար չի հասցնում. և այսպես անվերջ, սկսած շրջանային կենտրոնների շինարարությունից մինչև համամիութենական նշանակություն ունեցող նոր կառուցումները: Ընկերնե՛ր, այսպես շարունակել չի կարելի. պետք ե վճռականապես վերջ տալ կառուցող օրգանների օպորտունիստական անճարակությանն ու անպլանայնությանը: 31 թվի դասերը շինարարության համար բացառիկ նշանակություն ունեն: Կենտկոմը և Ժողկոմխորհը վերջերս հատուկ վորոշում ընդունեցին 32 թվի շինարարության նախապատրաստման մասին: Բայց նախապատրաստման տեմպը դեռ շարունակում ե մնալ անբավարար: Կուսակցական կազմակերպությունները, ինչքան ել դա տարորինակ ե, անհրաժեշտ ուշադրություն չեն նվիրում շինարարության կոնկրետ ղեկավարությունն ապահովելու խնդրին: Շինարարության մեջ ամենից ավելի տեղ ունեն ինքնահոսը, անպլանայնությունը, պարտիզանշչինան: Հանդուրժել այս յերևույթները շինարարության մեջ նաև 1932 թվին՝ չենք կարող վոչ մի դեպքում: 1932 թվին մենք պետք ե իրացնենք մոտ 100 միլիոն ռուբլու նոր շինարարության պլան: Շինարարության ինքնարժեքի իջեցման գործում պետք ե անենք այս տարի լուրջ քայլեր: Առանց ուժերի բայլշևիկյան լարման, առանց իսկական վերակառուցման, հնարավոր չի լինի ապահովել աշխատանքի պահանջվող տեմպ և վորակ շինարարության չափազանց լայն ֆրոնտի վրա: Այս տարի ավարտելու յենք ցեմենտի և ցիանամիդի գործարանները, վորոնց գործի գնելը ձգձգվեց վոչ միայն սարքավորումը ժամանակին չստանալու, այլև կառուցող օրգանների օպորտունիստական անճարակության հետևանքով: *Ավարտում ենք յերկրորդ Յերգեսը, ավարտելու յենք Քանաքեռգեսի կառուցողական աշխատանքները, Յերևանի մի շարք գոր-*

ծարանները (կարի, ծխախոտի և այլն), սկսում ենք Քաղսի-Գյումուշի շինարարությունը, Լենինականի տեքստիլի նոր մանարանի հսկա շենքի կառուցման աշխատանքները, պղնձի արդյունաբերության կապիտալ շինարարությունն ստանում է լայն ծավալ, սկսում ենք Յերևանի քիմիական կոմբինատի և շարունակում Ալլահվերդու կոմբինատի կառուցումը, սկսում ենք Լենինականի մսի կոմբինատի և շաքարի գործարանի շինարարությունը և այլն, և այլն: Վերջապես, մեծ դարկ ենք տալու բնակարանային և կոմունալ շինարարությանը, նոր կառուցումներին՝ շրջանային կենտրոններում:

Այս վիթխարի աշխատանքների պլանի իրագործումն ապահովելու համար համագումարը պետք է պահանջի բոլոր կազմակերպություններից՝ անմիջապես բոլշևիկորեն գործի անցնել: Պետք է վերանայել կառուցող կազմակերպությունների բոլոր օղակների անձնական կազմը, շինարարության ֆրոնտն ուղարկել լավագույն կոմունիստ տնտեսավարների, մինչև շինարարական սեզոնի բացումը նախապատրաստել բոլոր պրոեկտները, շինանյութերը, պատրաստել ու ամրացնել յուրաքանչյուր շինարարական միավորին անհրաժեշտ թվով բանվորներ, վերակառուցել կառուցող բանվորների միության և շինարարական օրգանների կից կուսկազմակերպությունների աշխատանքները՝ հարյուր տոկոսով ապահովելու համար նոր շինարարության 1932 թվի մեծ պլանների կատարումը: Կուսակցական կազմակերպությունների աշխատանքը գնահատելու համար ամենից առաջ յելակետ պիտի ընդունենք շինարարության պլանների քանակական և որակական ցուցիչները — *այս պետք է լավ հիշեն բոլոր կուսակցական կազմակերպությունները:*

ՀԱՆԵԼ ՏՐԱՆՍՊՈՐՏԸ «ՆԵՂ» ԴՐՈՒԹՅՈՒՆԻՑ

Տրանսպորտը կազմում է ներկայումս մեր բոլոր աշխատանքների ամենանեղ տեղը: Նրա ներկա դրությունն ուղղակի արգելակի դեր է խաղում մեր տնտեսության բարձրացման, արդֆինպլանների կատարման համար: Արթիկտուֆի և Անի-պեմզայի պլանների թերակատարման գործում պատասխանատվության մեծ մասն ընկնում է յերկաթուղային տրանսպորտի վրա: Տրանսպորտը նեղ դրությունից դուրս հանելու համար մեր ներկա աշխատանքները պետք է համարել անբավարար: Անդրկովկասյան յերկաթուղիների դիրեկցիայի ուշադրությունը 4-րդ շրջանի նկատմամբ թույլ է: Գծի վերակառուցման աշխատանքներն ընթանում են շատ դանդաղ. մինչև այժմ դեռ չենք կարողանում ծանրաքարշ շոգեշարժեր և վագոններ բաց թողնել Լենինականից Յերևան: Մինչդեռ ավարտելով Լենինական-Յերևան յերկաթգծի վերակառուցումը, բաց թողնելով այդ մասում ուժեղ շոգեշարժեր և մեծ տարողության վագոններ՝ հնարավոր կլինի գեթ մասամբ մեղմել փոխադրությունների դանդաղության սուր դրությունը: Անբավարար դրության մեջ են մնում 4-րդ շրջանի աշխատանքները: Համկոմկուսի Կենտկոմի հոկտեմբերյան պլենումի վորոշումների թույլ կիրառման պատճառով թերակատարվում է փոխադրումների պլանը, արմատապես չի առողջանում շոգեշարժային պարկը, ընդհակառակը, պատահարների և խորտակումների դեպքերի բազմացումը կասկած չի թողնում, վոր վատ են աշխատում ինչպես գծի տնտեսական-վարչական ղեկավարությունը, նմանապես և գծի կուսակցական և պրոֆեսիոնալ կազմակերպությունները: Մեր համագումարը վճռականորեն պիտի պահանջի գծի կուսակցական կազմակերպություններից և կուսակցական ղեկավարությունից՝ ինչ գնով էլ լինի, անմիջական և արմատական բեկումն առաջ բերել յերկաթուղու աշխատանքներում:

Յերկաթուղային նոր շինարարության հիմնական խընդիրը մեզ համար մնում է Յերևան—Աղստաֆա յերկաթուղու կառուցումը, վորի կառուցման հարցը դրինք կուսակցության նախորդ 7-րդ համագումարում: Այդ գծի կառուցման տնտեսական կարևոր նշանակությունը և այժմեյականությունն ընդունում են վերադաս խորհրդային և կուսակցական օրգանները. հաշվետու շրջանում սկսվեցին գծի կա-

ռուցման նախնական հետազոտական աշխատանքները. այդ աշխատանքների թափը պետք է ավելի ուժեղացնել. դժբախտաբար հնարավոր չեղավ դծի կառուցման աշխատանքները մտցնել 1932 թվի կապիտալ շինարարության պլանում, մնում է լայն ծավալով շարունակել և ավարտել հետազոտական աշխատանքները՝ նոր հնգամյակի հենց սկզբից անմիջական շինարարությանը ձեռնարկելու համար:

Ցերկաթուղային տրանսպորտի ներկա դրությունը, թվում է թե պետի հարկադրեր մեզ ամենալուրջ ուշադրությունը նվիրել անուղ ճանապարհներին: Մինչդեռ այստեղ դրությունն անմխիթար է: Համամիութենական նշանակություն ունեցող ճանապարհների տարածությունը վերջին 4 տարում մնացել է անփոփոխ, փոխ չափով ավելացել է հանրապետական նշանակություն ունեցող ճանապարհների տարածությունը. 27–28 թվի 440 կիլոմետրի փոխարեն այժմ ունենք 548 կիլոմետր. ամենաբացասականը, սակայն, այն է, որ տեղական նշանակություն ունեցող ճանապարհները վերջին չորս տարում մնացել են սառած կետի վրա թե՛ ավելացման և թե՛ բարեկարգման տեսակետից: Այստեղ խնդիրը միայն նրանում չէ, որ քիչ են կապիտալ ներդրումները ճանապարհների շինարարության գծով: Ներդրումներն աճում են տարեցտարի, թեև աճման տեմպը հետ է մնում պահանջից: Հիմնական խնդիրը կայանում է նրանում, որ շրջանային և գյուղական օրգանները թերագնահատում են ներքին միջոցների լայն մոբիլիզացիան՝ ոպորտունիստական ինքնահոսի թողնելով ճանապարհների շինարարության և նորոգման գործը: Ներկայումս, երբ ավելանում են հնարավորություններն ավտոտրանսպորտի լայնացման ուղղությամբ՝ պետք է պահանջենք բոլոր շրջանային օրգաններից՝ շրջադարձ կատարել, յերեսով դեպի ճանապարհների շինարարությունն ու նորոգումը: 1932 թիվը բեկման տարի պետք է լինի նաև այս գծով. յենթադրվում է 2623 կիլոմետր տեղական ճանապարհներից 19 կիլոմետրը խճել և 442 կիլոմետրը գրունտային ճանապարհների վերածել. այս աշխա-

տանքների կատարումը շրջանային բոլոր օրգանների ուշադրության կենտրոնում պետք է լինի: Մեր ներկա համագումարը իր ամբողջ հիմնավորությամբ պետք է հայտարարի, որ յուրաքանչյուր շրջանում ճանապարհների դրությունը շրջանի խորհրդային և կուսակցական ղեկավարության, գյուղխորհուրդների, կոլտնտեսությունների աշխատանքի կարևոր մեկ վկայականն է լինելու:

ՀԱՂԹԱՆԱԿԻ 6 ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՄԲ ԱՊԱՀՈՎԵԼ ԱՐԴՖԻՆՊԼԱՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄԸ

Ընկերնե՛ր, մենք խոսեցինք արդեն արդյունաբերության արդֆինպլանների խոշոր թերակատարման մասին, որ ունեցանք 1931 թվին. թվեցինք նաև այդ խայտառակ յերևույթի հիմնական պատճառները, որոնցից ամենահիմնական պատճառն Ստալինի վեց ցուցումների թույլ կատարումն է: Պղնձարդյունաբերությունից հետո իր ճեղքվածքներով աչքի յե ընկնում մեր սոցիալիստական արդյունաբերության հսկան՝ Լենինականի տեքստիլ գործարանը. տեքստիլի պլանների թերակատարումը,— իսկ պլանը տեքստիլը կատարեց 85 տոկոսով,—չունի որևէ արդարացում. այստեղ հիմնականն աշխատանքի թույլ կազմակերպումն է, տեխնիկական ղեկավարության թուլությունը, կադրերի պատրաստման գործում յեղած ոպորտունիստական դանդաղկոտությունը, ինչպես նաև մասսայական քաղաքական աշխատանքի անհանդուրժելի դրությունը:

Ընդունված է վոմանց կողմից, արդֆինպլանների թերակատարումը բացատրել բանվորական ուժի իբր թե մեծ պակասով: Փաստերն ասում են, որ մեր տնտեսավարներն իրավունք չունեն արդարանալ բանվորական ուժի չգոյությամբ: Փաստերն ասում են, որ ժողտնտխորհի ձեռնարկությունները 31 թվին ունեյին պլանով յենթադրվող բանվորական ուժը գրեթե լրիվ, իսկ Մատժողկոմատի ձեռնարկությունները բանվորական ուժի ավելցուկ են տալիս 17

տոկոսով՝ պլանային յենթադրությունների համեմատ: Խնդիրը, ուրեմն, նրանում չէ, վոր բանվորներ չկային, խնդիրը բանուժի հոսունության մեջ է, խնդիրը գործազրկումների, պարապուրդի, աշխատանքի կարգապահության թուլության մեջ պետք է փնտրել: Նույն Լենինականի տեքստիլում բանվորների հոսունությունն ուղղակի անհավատալի չափերի յե հասնում. Ժողտնտխորհի գործարաններում 31 թ. 11 ամսվա ընթացքում ունեցել ենք 26.000 չաշխատած մարդ-որ: 31 թվի առաջին կիսամյակին մեր արդյունաբերության մեջ յուրաքանչյուր բանվորին ընկնում է 3,28 որ գործազրկում, մինչդեռ 30 թվի նույն ժամանակաշրջանում գործազրկման այդ թիվը կազմում է 2.14 որ: Բավական են թվերը: Թվերը կասկած չեն թողնում, վոր սոցմրցումը և հարվածայնությունը, վորոնց մեջ՝ պաշտոնական տվյալներով ներգրավված եր բանվորների 70 տոկոսը, վորոշ չափով և վորոշ ողակներում ձևական բնույթ ունեն: Թվերն ասում են, վոր չափազանց թույլ է պայքարը գործազրկության դեմ, թույլ է աշխատանքի կազմակերպումը և կոնկրետ ղեկավարությունը: Համաձայն մեր Պետպլանի տվյալների՝ գործավարձային սիստեմի կիրառումը Լենտեքստիլում 31 թվին գտնվում եր ավելի վատ վիճակում՝ քան 1930 թվին: Յեթե այդ այդպես է՝ պարզ է, թե ինչու Լենտեքստիլը, վոր անցյալ համագումարի գովասանքին արժանացավ պլանների կատարումով՝ այս համագումարի առաջ պարզերես չի կարող գալ:

Ընթացիկ, 1932 թվին մեր արդյունաբերությունը հսկայական թռիչք է կատարելու. նա պիտի տա 145 միլիոն ռուբլու արտադրանք՝ կրկնապատկելով 1931 թվի փաստական արտադրանքը: Այդ պլանը կատարելու, աճման այդպիսի տեմպ ապահովելու համար անհրաժեշտ է վերակառուցվել վոչ թե խոսքով, այլ գործով: Պետք է անխնա պայքար ծավալել ստալինյան վեց պայմանների կատարման նկատմամբ յեղած ձևական վերաբերմունքի կոնկրետ արտահայտությունների և նրանց կրողների դեմ: Աջ ոպոր-

տունիզմի անթույլատրելի արտահայտություն պետք է համարել տնտեսական որգանների թույլ վերակառուցումը, տնտեսական հաշվարկը չկիրառելը, ստալինյան վեց պայմանների անտեսումը: Յեռամսյակային, ամսական, տասնորյա և որական պլանները պետք է հասցվեն մինչև աշխատանքի ամենաներքին ողակները, մինչև դազգյահ, բրիգադ, հերթափոխություն: Բանվորների յուրաքանչյուր բրիգադ, յուրաքանչյուր գիտակից բանվոր, յենթավարպետ, վարպետ, մասնագետ պետք է լավ իմանա, վոր պլանների կատարումը կարելի յե ապահովել միայն բոլշևիկյան պայքարի միջոցով. այդ պայքարը պետք է ծավալվի ամենից առաջ գործազրկումների դեմ, աշխատանքի կարգապահության խախտման, ծուլության, թափթփվածության դեմ, վորպես բուրժուական-կուլակային ազդեցությունների անմիջական հետևանք՝ բանվորների անկայուն տարրերի վրա: Այդ պայքարը պետք է ծավալվի հանուն իսկական հարվածայնության ու սոցիալիստական մրցման արմատացման, ընդդեմ ձևական ու կեղծ հարվածայնության և աչքակապության: Այդ պայքարը պետք է ծավալվի հանուն հաղթանակի ստալինյան վեց պայմանների անշեղ ու անարգել կիրառման, հանուն ինքնահոսի վոչնչացման բոլոր բնագավառներում. այդ պայքարը պետք է ծավալվի բանվորական մասսաների դասակարգային զգոնության և գիտակցության բարձրացման գծով, բանվորական նոր, յերիտասարդ կադրերի կոմունիստական վերադաստիարակության գծով, դասակարգային թշնամուն՝ դաշնակին, վնասարարին, ինչպես և աջ ու «ձախ» ոպորտունիստին տեղնուտեղը դիմակազերծ անելու ու կործանիչ հարված հասցնելու գծով:

Մասսաների ուժերի լարումով և բոլշևիկյան մոբիլիզացիայով միայն հնարավոր է ապահովել ավարտական տարվա պլանների կատարումը:

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Ընկերնե՛ր, Համկոմկուսի Կենտկոմն իր հայտնի վորոշման մեջ ընդգծեց, վոր «Անդրյերկոմը և ազգային կոմկուսները նշանակելի աշխատանք ծավալելով գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման ուղղությամբ՝ ընդգրկել են աշխատանքի առավելապես տեխնիկական կողմը, չեն ապահովել գյուղացիության (չքավոր, միջակ մասսաների) ճիշտ քաղաքական ղեկավարությունը»: Սկզբից ևեթ պետք է ընդունենք, վոր գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման հանրագումարներն ամբողջապես հաստատում են Համկոմկուսի վերոհիշյալ յեզրակացությունը: Գյուղի սոցիալիստական վերակառուցման աշխատանքներում կատարվել են քաղաքական կոպիտ սխալներ, վորոնք և հայտաբերվեցին Կենտկոմի ու ընկ. Ստալինի կողմից: Այդ սխալներին մենք մանրամասն կանդրադառնանք զեկուցման հետևյալ մասում: Այժմ կանգ առնենք գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման ընդհանուր հանրագումարների և հիմնական խնդիրների վրա:

Հաշվետու շրջանում շարունակվել է գյուղատնտեսության ընդհանուր աճումը՝ նրա սոցիալիստական վերակառուցման հիման վրա: Աճել է ցանքադաշտերի ընդհանուր տարածությունը 28–29 թվի 334,800 հեկտարի փոխարեն՝ 1931 թվին ունեցել ենք 381,800 հեկտար ցանք: Մասնավորապես աչքի յե ընկնում տեխնիկական կուլտուրաների աճումը՝ 1931 թ. նախորդ տարվա համեմատությամբ 54 տոկոսով ավելացել է տեխնիկական մշակույթների (բամբակ, ծխախոտ) ցանքը: Հսկայական աշխատանք է կատարվել վերակառուցելու համար մեր գյուղատնտեսության տեխնիկական բազան: Գյուղատնտեսության սոցիալիստական հատվածը (խորհտնտեսությունները և կոլտնտեսությունները),

վոր դեռ անցյալ համագումարի ժամանակ համեմատաբար չնչին մեծություն եր՝ ներկայումս կազմում է արդեն գյուղատնտեսության ընդհանուր ծավալի կեսից վոչ պակաս մասը: Գյուղատնտեսության ամենանեղ տեղը ներկայումս կազմում է անասնապահությունը: Պետք է նշել, վոր գյուղատնտեսության մեջ առանձնապես աչքի յե ընկնում վորոշ անհամապատասխանություն, վոր կա աշխատանքների լայնացման, քանակական աճման և արդյունքների վորակի միջև, մի հանգամանք, վոր ստիպում է մեզ այս տարի գյուղի սոցիալիստական վերակառուցման աշխատանքների ծանրության կենտրոնում դնել վորակի, բերքատվության խնդիրը: Վորակի նշանակությունը գյուղատնտեսական հիմնական կուլտուրաների նկատմամբ՝ ամենից ավելի ցայտուն կերպով հանդես է գալիս բամբակամշակության բնագավառում:

ԲԱՄԲԱԿԻ ՖՐՈՆՏՈՒՄ

Չնայած բամբակի ֆրոնտի խոշոր կարևորության, չկարողացանք քիչ թե շատ գոհացուցիչ արդյունքներ ստանալ այս տարվա բամբակի կամպանիայից: Ընդհակառակը, պետք է ընդունենք, վոր այս գծով 1931 թվին խայտառակ անհաջողության մատնվեցինք: Սկսելով բամբակացանը մեծ վոգևորությամբ, կատարելով ցանքի պլանը, բամբակացան շրջանների կուսակցական կազմակերպությունները չկարողացան ապահովել կոլտնտեսությունների տնտեսական-կազմակերպչական ամրացումը, չկարողացան մասսաներին կազմակերպել բամբակի մշակման, նրա բերքատվության բարձրացման կոնկրետ խնդիրների շուրջը: Կուսակցական կազմակերպությունների թափթփվածությունից և անզգոնությունից ոգտվեցին դասակարգային թշնամին — դաշնակ-կուլակային տարրերը, վորոնք հասկանալով բամբակի ֆրոնտի նշանակությունը մեզ համար, կատաղի պայքար են մղում բամբակի մշակույթի ընդարձակման և բերքատվության բարձրացման դեմ:

1931 թ. բամբակի հանձնման (գնման) մեր պլանը կատարվեց 41,1 տոկոսով, կենտրոնի պլանը՝ 62 տոկոսով, ըստ շրջանների՝ ունենք հետևյալ պատկերը — Ղամարլուն՝ 51,3 տոկոս, Էջմիածինը՝ 46,5 տոկոս և Ղուրդուղուլին՝ 28,5 տոկոս: Ամենից բացասական յերևույթն այն է, վոր բերքատվության չափով և բամբակի հանձնման (գնման) պլանի կատարումով կոլտնտեսությունները զգալապես հետ մնացին անհատական տնտեսություններից՝ կատարելով բամբակի հանձնման պլանի միայն 32,4 տոկոսը:

Ինչո՞վ բացատրել իրերի նման դրությունը բամբակի ֆրոնտում: Դժվար թե գտնվի մեր շարքերում վորևե մեկը, վոր այս հարցին պատասխանելու համար խոսք բանա ոբյեկտիվ պատճառների մասին: Խոսում են կլիմայական անբարենպաստ պայմանների մասին, այն մասին, վոր բամբակ ցանելու ժամանակ տեղում եյին հորդառատ անձրևներ, վոր սովորականից շուտ այս տարի սկսվեց սառնամանիքը և այլն: Այո՛, անվիճելի յե, վոր կլիմայական պայմանները, այս տարի համեմատելով միջին սովորականին, ավելի անբարենպաստ եյին: Բայց անուղղելի ոպորտունիստը միայն կարող է բացատրել բամբակի ցածր բերքատվությունը կլիմայական պատճառներով այն ժամանակ, յերբ նույն պայմաններում առանձին կոլտնտեսություններ և աշխատավորական տնտեսություններ կարողացան ստանալ բարձր բերքատվություն և ապահովել պլանների կատարումը: Մի՞թե փաստ չէ, վոր որինակ, Վարմաղյար գյուղի կոլտնտեսությունը կարողացավ լավ աշխատանքով ստանալ մեկ հեկտարից միջին հաշվով 10 ցենտներ բամբակ, վոր Ողուրբեկլու, Մուղան, Ալիբեկլու և մի շարք այլ գյուղերի կոլտնտեսություններ և անհատական տնտեսություններ կարողացան գերակատարել բամբակի հանձնման տարեկան պլանն այն ժամանակ, յերբ նույն կլիմայական պայմաններում Վերին Նեջըլուն, որինակ, մեկ հեկտարից՝ վատ աշխատանքի պատճառով՝ ստացավ 1,5 ցենտներ բերք, կատարելով տարեկան պլանի 12 տոկ. միայն: Ուրեմն վոչ թե կլիմայական պատճառ-

ները, այլ աշխատանքի վորակն է, բամբակի մշակման վորակն է այստեղ հիմնականը: Բամբակի վորակավոր մշակման դեպքում հենց նույն անբարենպաստ կլիմայական պայմաններում հնարավոր եր ստանալ շատ ավելի բարձր բերք, քան թե ստացանք մենք, մանավանդ Ղուրդուղուլու շրջանում:

Կենտկոմի կողմից կազմակերպված հատուկ հետազոտությունը ցույց տվեց, վոր բամբակի ցածր բերքատվության պատճառներն սկսվում են ամենից առաջ վարի ցածր վորակից. վարի վորակն այնքան վատ է յեղել, վոր բամբակի շատ դաշտերում մնացել են բավական զգալի չափով չհերկված անկյունամասեր, վորոնք կրճատել են բամբակի ցանքի փաստական տարածությունը. բամբակի դաշտերի ընտրությունը յեղել է ձևական, շատ դեպքերում բամբակի համար ընտրված են միանգամայն անպետք հողամասեր. ցանքը յեղել է չափազանց անորակ և գրեթե բոլոր շրջաններում վերջացել է սահմանված ժամկետից շատ ուշ. փոխանակ ավարտելու ցանքը մայիսի 10-ին, գրեթե բոլոր շրջաններում ավարտվել է հունիսի սկզբներին միայն: Բարձրորակ բամբակի «նավրոցկի» սերմը, վորի բույսի հասունացման համար պահանջվում է ավելի յերկար ժամանակ՝ ցանվել է ավելի արագ հասնող «կինգ» սերմից ավելի ուշ: Վոչ մի շրջան ժամանակին չի կատարել կուլտիվացիայի և քաղհանի աշխատանքները. դրությունն այս գծով մանավանդ խայտառակ է յեղել Ղուրդուղուլու շրջանում: Մոլախոտերի բուռն աճումն անձրևային յեղանակների պատճառով շատ տեղերում ուղղակի ուժասպառ է արել բամբակենուն, բամբակի նոսրացման, ջրելու և այլ աշխատանքները նույնպես կատարված են առանց պլանի և վոչ պետք յեղած ժամանակին: Յեզրակացություն — չափազանց թույլ է կազմակերպված յեղել բոլշևիկյան պայքարը բարձր բերքատվության համար, աշխատանքի վորակը բամբակի մշակման բոլոր պրոցեսներում ուղղակի մոռացության է մատնված — և այս խոշորագույն թերությունը շատ շուտով յեկավ վրեժ

ճանելու թերացումներից՝ իջեցնելով բամբակի բերքատվությունը:

Յեթե առհասարակ թույլ է յեղել կուսակցական կազմակերպությունների աշխատանքը բամբակացան շրջաններում՝ չքավոր-միջակ մասսաներին բամբակի բերքատվության կոնկրետ խնդիրների շուրջը կազմակերպելու ուղղությամբ՝ ապա ուղղակի անթույլատրելի դրության մեջ է յեղել աշխատանքի կազմակերպումը կոլտնտեսություններում, մինչդեռ այդ գործը հիմնականում հավասար է կոլտնտեսությունների կազմակերպչական-տնտեսական և քաղաքական ամրացմանը: Այո՛, ընկերնե՛ր, պետք է խոստովանել, վոր բամբակացան շրջանների կուսակցական կազմակերպությունները չկարողացան անցյալ տարի բոլշևիկորեն պայքարել կոլտնտեսությունների ամրացման համար, նրանք չկարողացան հայտաբերել և տեղնուտեղը արմատախիլ անել կուլակային ազդեցության արտահայտությունները կոլտնտեսություններում: Այսպես, ընկերներ, ինչպես վորակել աշխատանքից խուսափելու և գործալքման բազմաթիվ դեպքերը կոլտնտեսություններում, հավասարեցման և մանավանդ դիմազրկության լայն պրակտիկան, աշխատանքները ժամանակին չկատարելը, կոլտնտեսականի աշխատանքի ցածր վորակը, յեթե վոչ՝ վորպես կուլակի ազդեցության վորոշակի արտահայտությունները կոլտնտեսություններում: Դժբախտաբար շրջանային կուսակցական օրգանների անզգոնությունը և կարճատեսությունն այնքան խորն եր, վոր ժամանակին նրանք չկարողացան ընդհանրացնել առանձին թերացումները, տալ նրանց սկզբունքային քաղաքական վորակում, սրել մասսաների ուշադրությունը կուլակային, մանր-բուրժուական յերևույթների դեմ կոլտնտեսություններում, հաղթահարել դիմազրկությունը կոլտնտեսության աշխատանքներում, կազմակերպել կոլտնտեսական աշխատանքը: Նման խայտառակություն ավելի ևս աններելի յե այն պատճառով, վոր բամբակացան շըրջանների կոլտնտեսականները և աշխատավոր գյուղացիությունն ստանում են հսկայական ոժանդակություն և արտոնություններ պրոլետարական պետությունից, ստանում են եժան գներով արդյունաբերական ապրանք, հաց, ստանում են լայն վարկավորում, մեքենատրակտորային կայաններն ահագին բարձրության են հասցնում այդ շրջանների մեքենայական բազան: Բամբակացան շրջանների կուսակցական կազմակերպություններին չենք կարող չմեղադրել կուլակի դեմ մղած պայքարի թուլության համար: Այդ յերևում է վոչ միայն կոլտնտեսությունների աշխատանքների թուլությունից, այդ յերևում է նաև նրանից, վոր բամբակացան շրջաններում կուլակները կատարել են բամբակի հանձնման կայուն առաջադրանքները միայն 33 տոկոսով:

Կուլակային հավասարեցումն աշխատանքի վարձատրության ժամանակ և դիմազրկությունն աշխատանքներում՝ դեռևս մեծ չափով շարունակում են գոյություն ունենալ կոլտնտեսություններում և բամբակի ֆրոնտի ճեղքվածքի հիմնական պատճառներից են: Վերցրեք վորևէ կոլտնտեսություն — իրար կողքի ընկած յերկու դաշտերից կոլտնտեսությունը մեկից ստացել է բավարար բերք, մյուսից՝ դրեթե վոչինչ. հարցրեք կոլտնտեսության վարչությանը, անձնապես վո՞ր կոլտնտեսականը, վո՞ր բրիգադը կամ վո՞ր տրակտորիստն ու գյուղատնտեսը պատասխանատու յեն բերք չտված դաշտի համար: Դժվար թե վորևէ պատասխան ստանաք, վորովհետև չկա աշխատանքի վորակի հաշիվ, վորովհետև բրիգադների կազմը հոսուն է, վորովհետև բրիգադները աշխատանքի սկզբից մինչև վերջը՝ բերքը հավաքելիս՝ չեն ամրացվում կոնկրետ հողամասերի, վորովհետև դեռ չի արմատացել անհատական գործավարձը, իսկ առանց այս բոլորի՝ գործավարձը պարապ խոսքի յե վերածվում:

Այսպիսով, պետք է յեզրակացնենք, վոր Ղուրդուղուլու, Եջմիածնի, Ղամարլվի և Վեդու կուսկազմակերպությունները 1931 թվին չկարողացան դեռևս շոշափելի արդյունք ձեռք բերել կոլտնտեսությունների ամրացման բնագավառում:

Կոլտնտեսության ամրացման առաջին ցուցանիշը՝ պետության նկատմամբ կոլտնտեսության ստանձնած պարտականությունների կատարումն է, իսկ այդ պարտականությունները խայտառակ կերպով թերակատարվեցին բամբակացան բոլոր շրջաններում: Ոպորտունիստական ինքնահոսը կոլտնտեսական աշխատանքի կազմակերպման գործում, դիմազրկությունը և կոնկրետ պատասխանատվության բացակայությունը, մասսայական քաղաքական աշխատանքների թուլությունը կոլտնտեսային և չքավոր ու միջակ գյուղացիության մեջ և թույլ պայքարը կուլակի ու նրա ագենտությունների դեմ՝ ահա պայմաններ, վորոնք սպառիչ բացատրություն են տալիս այն խայտառակությանը, վորը կայանում է մեկ հեկտարից հազիվ 5 *ցենտներ բամբակ ստանալու մեջ:*

Ընկերնե՛ր, 1931 *թվի բամբակի կամպանիայի դասերը խիստ ուսանելի յեն մեր բոլոր կազմակերպությունների համար: Ամենից առաջ այդ դասերից բոլշևիկյան հետևություններ պիտի անեն բամբակացան շրջանների կուսակցական, խորհրդային, կոմյերիտական ու կոլտնտեսական կազմակերպությունները: Նրանք պարտավոր են բոլշևիկյան իսկական ինքնաքննադատության լայն ծավալմամբ բամբակի ֆրոնտի անցյալ տարվա ճեղքվածքի պատճառները հասցնել մինչև վերջին կոլտնտեսականի, վերջին աշխատավոր գյուղացու գիտակցության: Կենտկոմը հաստատեց այս տարվա բամբակացանի պլանը՝* 30·000 *հեկտար: Այդ նշանակում է՝ իրագործելով բամբակի մշակության քանակական աճման պլանը՝ աշխատանքի ծանրության կենտրոնը պետք է դարձնենք բամբակի բերքատվության բարձրացման գործը.* այդ նշանակում է՝ ապահովել 30·000 հեկտար հողամաս բամբակի տակ առնելը՝ շեշտը դնելով ամենից առաջ բամբակի ցանքի և մշակման աշխատանքների ՎՈՐԱԿԻ վրա: *Նախապատրաստել բամբակի ցանքի համար ամենալավորակ դաշտերը, ապահովել դաշտերի վորակավոր հերկը՝ պատասխանատու դարձնելով տրակտորային*

յուրաքանչյուր բրիգադի տվյալ դաշտերի հերկի վորակի համար, ցուցանիշ ընդունելով հետագա բերքատվությունը, ամրացնել առանձին հողամասերի՝ հատուկ բրիգադներ, վորոնք կատարում են տվյալ դաշտում բոլոր աշխատանքները՝ բամբակի մշակման սկզբնական պրոցեսներից մինչև վերջը. հետևողականորեն կիրառել անհատական գործավարձը բոլոր ողակներում, բերքի վերջնական բաշխման ժամանակ հաշվի առնել տվյալ բրիգադի հողամասից ստացված բերքը, կատարել բոլոր աշխատանքները (վարը, ցանքը, կուլտիվացիան, քաղհանը, նոսրացումը, ջրելը և այլն) համաձայն ագրոտեխնիկայի պահանջների և ժամանակին,— միայն այս պահանջների լիակատար կենսագործումը կապահովի բամբակի բարձր բերքատվությունը. իսկ համագումարը պետք է պահանջի բամբակացան շրջանների կազմակերպություններից՝ այս տարի բամբակի բարձր բերքատվությամբ վերացնել անցյալ տարվա ամոթալի բիծը:

1931 *թվի բամբակի կամպանիայից համապատասխան դասեր պիտի անեն բոլոր շրջանային կազմակերպությունները. բոլշևիկյան զգոնությամբ պիտի քննել ու հայտաբերել կոլտնտեսական և գյուղական որգանների առանձին ողակների թերությունները, հետամնացությունը, նեխման յերևույթները, կուլակային, մանր-բուրժուական տենդենցների դրսևորումները, անխնա պայքարել տեղ-տեղ նկատվող աչքակապության, բարեհոգության տրամադրությունների դեմ, պայքարել կոլտնտեսությունների կազմակերպչական-տնտեսական ամրացման համար, հայտաբերել և դուրս շպրտել կոլտնտեսություններից դասակարգային թշնամուն՝ դաշնակին, յենթակուլակին—ահա ինչ գործնական հետևություններ պիտի անեն բոլոր շրջանային կազմակերպությունները բամբակի անցյալ տարվա կամպանիայի դասերից:*

Այսպիսով, բամբակի ֆրոնտի հիմնական խնդիրն է՝ ջախջախելով կուլակ-դաշնակցական տարրերի դիմադրությունը և ամրացնելով կոլտնտեսությունները, առավելա-

փույն չափով ոգտագործել բոլոր հնարավորությունները, վոր ունենք Հայաստանում՝ կիրառելու համար կուսակցության լոզունգը՝ բամբակի անկախություն ապահովելու, Անդրկովկասը բամբակի յերկրորդ հիմնական բազա դարձնելու մասին:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ ԱՅԳԵԳՈՐԾՈՒԹՅԱՆԸ ՅԵՎ ՇԵՐԱՄԱՊԱՀՈՒԹՅԱՆԸ

Մեր գյուղատնտեսության կարևոր ճյուղերն են նաև այգեգործությունն ու շերամապահությունը, վորոնք, սակայն, մինչև վերջին շրջանը վրիպում եյին լուրջ ուշադրությունից: Նախախորհրդային շրջանում հասնելով լիակատար քայքայման՝ այգեգործությունը խորհրդային իշխանության շրջանում աստիճանաբար վերականգնվում ե: Սակայն, վերջին տարիներում այգիների և խաղողի տարածությունն աճման առանձին նշաններ չի տալիս:

Ունենք 10–12·000 հեկտար խաղողի և 4·500 հեկտար պտղատու ծառերի այգիների գրեթե անփոփոխ տարածություն. նշանակում ե՝ սոցիալիստական վերակառուցման պրոցեսը նոր միայն իր շրջանակի մեջ ե առնում այգեգործությունն ու խաղողի մշակությունը. նշանակում ե՝ մանր գյուղացիական տնտեսությունն այն հիմքը չե, վորի վրա հնարավոր ե բարձրացնել ապրանքային խոշոր այգեգործական տնտեսություն: Համկոմկուսի Կենտկոմն առաջարկեց մեզ՝ Միության Մատժողկոմատի հետ միասնաբար մշակել խաղողի և պտղատու ծառերի տարածությունների ընդարձակման պրակտիկ ձեռնարկումներ: Ցելնելով այս դիրեկտիվից և մեր հնարավորություններից, մենք հաստատեցինք այգեգործության զարգացման ձեռնարկումների պլանը 1932 թվի համար. տնկելու յենք 2300 հեկտար նոր այգի և 1325 հեկտար խաղող, մեծ մասամբ խորհտնտեսությունների գծով: Այս ծրագիրն իրագործելի յե և պետք ե իրագործվի. յերկրորդ հնգամյակում պետք ե տնկենք 50·000

հեկտար նոր այգի և 18·000 հեկտար խաղող: Անհրաժեշտ ե, վորպեսզի Հողժողկոմատը, Կոլտնտկենտրոնը և այգեգործական շրջանների կազմակերպություններն անմիջապես գործի անցնեն՝ իրագործելու համար այգեգործության զարգացման պլանը. առանձին ուշադրություն պետք ե դարձնել նոր այգիների համար լավ վորակի տնկիներ պատրաստելուն և այգեգործական կոլտնտեսությունների տնտեսական ամրացման աշխատանքներին: Չենք կարող այստեղ չհիշատակել այն խայտառակությունը, վոր կատարվեց Ղամարլվի շրջանում. մի շարք կոլտնտեսություններ այդ շըրջանում անցյալ աշնանը չկատարեցին խաղողի այգիների մի վզալի մասի թաղման աշխատանքները՝ ցրտահարման և փչացման անմիջական վտանգի յենթարկելով այդ այգիները. այս աններելի, հանցագործության աստիճանի հասնող հանցանքի համար պատասխանատու յե Ղամարլվի ամբողջ կուսակցական կազմակերպությունը: Չենք կարող չհիշատակել նաև անուշադիր, վորոշ դեպքերում հանցագործ վերաբերմունքը՝ այգիների ներկա տարածությունը պահպանելու, պտղատու ծառերը բժշկելու, այգիների վերանորոգման կարևորագույն խնդիրներում: Պետք ե վերջ տալ նման վերաբերմունքին մեր գյուղատնտեսության այս ճյուղի նկատմամբ. 1932 թիվը բեկման տարի պետք ե լինի այգեգործության համար ևս. մեր կազմակերպությունները չպետք ե մոռանան, վոր այգեգործությունը հսկայական նշանակություն ունի բանվոր դասակարգի մատակարարման գործի բարելավման համար: Ոգտագործելով Հայաստանի բնական բարենպաստ պայմանները՝ մենք պետք ե ուժեղ զարկ տանք պտղաբուծությանը և խաղողի մշակմանը՝ բավարարելու համար բանվոր դասակարգի մրգի պահանջը և հումք տալու համար կոնսերվի աճող արդյունաբերությանը:

Այս տարի առաջին լուրջ քայլերը պետք ե անենք նաև շերամապահության զարգացման գծով. մեր մի շարք շըրջաններ՝ Մեղրին, Ղափանը, Գորիսը, Շամշադինը, Իջևանը և այլն բացառիկ նպաստավոր պայմաններ ունեն՝ շերամա-

մապահությունը, վորպես տնտեսության հիմնական մի ճյուղ, զարգացնելու համար: Գրեթե բոլոր մյուս շրջանները պետք է, վոր նույնպես զբաղվեն շերամապահությամբ, վորպես տնտեսության հիմնական ճյուղերին զուգընթաց ոժանդակ կուլտուրա: 32 թվին Հայաստանում Կենտկոմի վորոշմամբ պետք է տնկենք 650 հեկտար թթենի, վորից 400 հեկտարը կոլտնտեսությունների գծով. կուսակցական կազմակերպությունները պետք է տեղական նախաձեռնության լայն ծավալմամբ գերակատարեն այս պլանը: Վատ չէր լինի, յեթե համագումարն ուղղակի պահանջ դներ, վորպեսզի մեր բոլոր ջրանցքների և առուների ափերն ու ճանապարհները ծառազարդվեյին թթենիներով:

Այսպիսով, տեսնում ենք, վոր պտղաբուծության և շերամապահության գծով 1932 թվին մեր առաջ դրվում են նոր և կարևոր խնդիրներ, վորոնց լուծմանը պիտի լծվեն կուսակցական կազմակերպությունները:

ԱՐԱԳԱՑՆԵԼ ՎՈՌՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՏԵՄՊԸ

Ընկերնե՛ր, մեր գյուղատնտեսության վերակառուցման, նոր, բարձրարժեք կուլտուրաների տարածման կարևորագույն լծակների թվում առաջին տեղերից մեկը բռնում են վոռոգման աշխատանքները: Ընկ. Լենինն իր ժամանակին հատկապես դրեց Անդրկովկասի կուսկազմակերպությունների առաջ վոռոգման խնդիրը, վորպես մի խնդիր, վոր «կվերստեղծի յերկիրը, կվերածնի նրան, կթաղի անցյալը, կամրացնի անցումը դեպի սոցիալիզմ»: Կենտկոմը հոկտեմբերի 31-ի իր վորոշման մեջ մասնավորապես ընդգծեց, վոր «կենտրոնական խնդիրը, վորից կախված է Անդրկովկասի գյուղատնտեսական տեխնիկական վերակառուցման հաջողությունը ջրային տնտեսության վճռական վերակառուցումն է,—տնտեսություն, վոր դարձել է նեղ տեղ գյուղատնտեսության վերելքի գործում»:

Պարզ է, ուրեմն, բացառիկ այն ուշադրությունը, վոր պետք է դարձնել ջրային տնտեսության, մասնավորապես նոր վոռոգումների աշխատանքի վրա: Վոր այս ասպարեզում մենք բավական աչքի ընկնող աշխատանք արդեն կատարել ենք՝ այդ մասին վկայում են թվերը. 1925 թվին ջրվող 87·000 հեկտարի փոխարեն, այս տարի ունենք վոռոգվող 144·600 հեկտար, վորից դաշտային շրջաններում՝ մոտ 69·000 հեկտար: Աչքի յե ընկնում վոռոգման աշխատանքների ծավալի լայնացումը, մանավանդ վերջին տարիներում: Անցյալ տարի վերջացավ Փոքր Սարդարաբադի ջրանցքի կառուցումը, վորը վոռոգում է 25·000 հեկտար, վորից նոր հողեր՝ մոտ 8·000 հեկտար: Վերջացավ, վերջապես, Կարճևանի ջրանցքի կառուցումը, լայն թափով առաջ են գնում Ղռերի վոռոգման աշխատանքները: Այսպիսով, անվիճելի յեն մեր նվաճումները վոռոգման գծով: Սակայն այս ասպարեզում ունենք նաև մի շարք աչքի ընկնող թերություններ. ամենից առաջ՝ վատ է տեղական ցանցի դրությունը, մինչդեռ լավացնելով տեղական ցանցի վորակը՝ ավելի լավ ոգտագործելով գոյություն ունեցող ջրային հնարավորությունները՝ կարելի յե առանց մեծ ծախսերի ավելացնել վոռոգվող հողերի տարածությունը. իզուր չէ, վոր Համկոմկուսի Կենտկոմը մատնանշում է, թե ջրային աշխատանքների ասպարեզում «ամենամոտիկ խնդիրը հանդիսանում է գոյություն ունեցող վոռոգման ցանցի վճռական բարելավումն ու ռացիոնալացումը (ջրային ուղիների մաքրելն ու կարգի բերելը, ջրհանների վերասարքավորելն ու մեքենայացնելը, ջրոռոգման սիստեմի կազմակերպելը և այլն)»: Պետք է ընդունենք, վոր շրջանային կուսակցական և խորհրդային որգանները դեռ մինչև այժմ էլ թերագնահատում են աշխատանքի այս կողմը: Զափազանց թույլ է տեղական ուժերի միջոցների մոբիլիզացիան ջրային ուղիների մաքրման, լայնացման, կարգի բերելու, ջուրը տնտեսելու համար: Ամենափոքր աշխատանքի համար, վոր կարելի յե շատ անգամ անել մի գյուղխորհրդի նախաձեռնությամբ և գյուղի ուժերով, մարդիկ սպասում են պետական

բյուջեյից հատկացումների. մինչդեռ Կենտկոմը պարտավորեցնում է մեզ՝ «այս գործի համար մոբիլիզացիայի յենթարկել ՏԵՂԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ»: Այս աշխատանքների թուլությունը բացատրվում է նաև շրջանային նորակազմ ջրային ապարատի թուլությամբ: Պետք է պահանջել շրջաններից ավելի յեռանդուն աշխատանք՝ բարելավելու համար տեղական ցանցի դրությունը, օգտագործելով այդ նպատակով տեղական միջոցներ. պետք է պահանջել Հայջրտնտեսությունից՝ ուժեղացնել ղեկավարությունը ջրային շրջանային ապարատի նկատմամբ՝ ամենից առաջ շեշտը դնելով գոյություն ունեցող ջրային ցանցի վորակը բարձրացնելու և բարելավելու խնդրի վրա:

Յերկրորդ — վոռոգման մի շարք աշխատանքներ սկսվել են առանց նախնական լուրջ ուսումնասիրության: Տնտեսական պարտիզանականության և անպլանության որինակ կարող է հանդիսանալ Կարճևանի ջրանցքը, վորը վերջապես ավարտվել հսկայական քաշքշումներից և նախահաշվով սահմանված գումարից ուղղակի անհավատալի չափով գերածախս կատարելուց հետո: Գործը մինչև վերջ չհասցնելու և կատարված ծախսերի դեմ եֆեկտ չտալու որինակ կարող է տալ Նվջիլարի ջրանցքը, վորի վոռոգելիք մոտ 2000 հեկտարը դեռ մինչև այժմ էլ մնում է անմշակ, հողի լավացման և մելիորատիվ մի շարք աշխատանքներ չկատարելու հետևանքով:

Յերրորդ — թույլ է նոր վոռոգման ցանցի լիակատար իրացման գործը. Այղր-լճի ջրանցքը, վոր համաձայն նախագծի պետք է ջրեր 6000 հեկտար հող, ջրում է մինչև այժմ 2000 հեկտարից վոչ ավելի. անբավարար պետք է համարել նաև Փոքր Սարդարաբադի ջրանցքի վոռոգելիք նոր տարածությունների իրացման տեմպը: Ինչ վերաբերում է վոռոգման ներկայումս ընթացող ամենախոշոր աշխատանքներին՝ Ղոերի վոռոգմանը՝ ապա հայտնի յե, վոր այդ աշխատանքների ներկա թափը նույնպես շատ հեռու յե բավարար լինելուց. գրեթե լրիվ ծախսելով անցյալ տարվա

պլաններով նախատեսված գումարը՝ Ջրային Տնտեսությունը վերջացրեց տարին՝ աշխատանքների պլանի խոշոր թերակատարումով՝ վտանգելով այս տարի սպասվող նոր տարածությունների վոռոգումը: Ինչպես շինարարության մեջ, այստեղ ևս թերակատարման պատճառը թույլ ղեկավարությունն է, աշխատանքի մի շարք ողակներում ինքնահոսի տիրապետությունը, բանվորական ուժի հավաքագրման, աշխատանքի մեքենայացման խնդրում ընկ. Ստալինի ցուցումների կենսագործման միանգամայն անբավարար ընթացքը: Պետք է շեշտել նաև այն հանգամանքը, վոր շրջանային կուսակցական և խորհրդային օրգանները սովորություն են դարձրել ինչքան կարելի յե հեռու մնալ ջրաշինարարական աշխատանքների կոնկրետ ղեկավարումից, մի յերևույթ, վոր առանձնապես աչքի յե ընկնում Կոտայքի և Ղամարլուի շրջաններում:

Համկոմկուսի Կենտկոմի հոկտեմբերի 31-ի վորոշումը պահանջում է վերևից մինչև ներքև ուժեղացնել ղեկավարությունը ջրաշինարարական աշխատանքների նկատմամբ. կուսակցական և հասարակական կազմակերպությունները պետք է մոտենան այս աշխատանքներին այնպես, ինչպես նրանք մոտից հետևում են առանձին գործարանների արդֆինպլանների կատարման ընթացքին, և այս աշխատանքներում նույնպես ապահովեն ստալինյան պայմանների անշեղ կենսագործումը, շին. պլանների լրիվ կատարումը:

1932 թիվը պետք է անցնի վոռոգման աշխատանքների ծավալը զգալի չափով լայնացնելու նշանաբանի տակ: Լայն ֆրոնտով շարունակելու յենք Ղոերի շինարարությունն այն հաշվով, վորպեսզի 33 թվին վերջնականապես ավարտենք այդ աշխատանքները: Ավարտելու յենք Զանգիբասարի և Սև-Ջրի ճահիճների չորացման և վոռոգման նախապատրաստական աշխատանքները: Կարիք չկա բացատրելու այդ աշխատանքների տնտեսական նշանակությունը. կատարելով այդ աշխատանքները՝ մենք բերրի դաշտերի կվերածենք Արարատյան դաշտում տասնյակ հազարավոր հեկտար ճահ-

ճայած կամ աղով պատած հողեր, մենք կառողջացնենք մալարիայի դարավոր բույները, հսկայական զարկ կտանք տեխնիկական բույսերի՝ բամբակի, այգեգործության զարգացմանը: Համագումարը պետք է պահանջ դնի՝ արագացնել ջրաշինարարական և վոռոգման աշխատանքների տեմպը: Միաժամանակ, Սևանի պրոբլեմի լուծման զուգակցությամբ, պետք է, վոր Հայջրտնտեսությունն արագացնի մեծ Սարդարաբադի վոռոգման խնդրի ուսումնասիրությունը և նախագծումը: Հայաստանի հողերի վոռոգման այս վերջին և ամենախոշոր պրոբլեմը պետք է կազմի յերկրորդ հնգամյակի վոռոգման աշխատանքների հիմնական մասը: Մեծ աշխատանքների յերկրորդ հնգամյակը պետք է վերածի վողջ Արարատյան դաշտը կոլտնտեսային և խորհտնտեսային, բամբակի և այգեգործության ծաղկած մի յերկրի:

ԱՆԱՍՆԱԲՈՒԾՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՈՒՄԸ ՅԵՎ ԱՃՈՒՄԸ ԳՅՈՒՂԱՏԸՆՏԵՍԱԿԱՆ ՖՐՈՆՏԻ ԱՄԵՆԱԿԱՐԵՎՈՐ ԽՆԴԻՐՆ Է

Ընկերնե՛ր, վճռելով հիմնականում հացահատիկային պրոբլեմը և հսկայական նվաճումներ կատարելով տեխնիկական մշակույթների տարածման գծով, կուսակցությունն իր ամբողջ մեծությամբ դրեց անասնաբուծության պրոբլեմի լուծման խնդիրը: 16-րդ համագումարում ընկեր Ստալինը կանգ առնելով անասնաբուծության ասպարեզում գոյություն ունեցող դրության վրա, կուսակցության ուշադրությունը սրեց «անասնաբուծության սկսված կրճատման բացահայտ նշանների վրա»: Դուրս է գալիս,—ասում է ընկ. Ստալինը,—վոր անասնաբուծության ասպարեզում փոխանակ 26 թվի նորման գերազանցելու, վերջին տարում ունենք այդ նորմայից ցածրանալու բացահայտ նշաններ: Նկատի ունենալով մսի պրոբլեմի լուծումը՝ ընկեր Ստալինն առաջադրեց անասնաբուծության և տեխնիկական պրոբլեմների միաժամանակ լուծման խնդիրը: Այդ պրոբլեմը լուծելու

համար պետք էր ընթանալ նույն ճանապարհով, վորով ընթացանք հացահատիկային պրոբլեմի լուծման ասպարեզում, խորհրդային և կոլեկտիվ տնտեսություններ կազմակերպելու ճանապարհով:

Ի՞նչ դրության մեջ է անասնաբուծության ֆրոնտը մեզ մոտ, Հայաստանում: Մեր կուսակցական կազմակերպությունները պետք է վոր առանձին պատասխանատվություն զգան անասնաբուծության պրոբլեմի լուծման գործում. չէ՞ վոր մեր յերկիրը չեշտված անասնապահական յերկիր է, մեր 26 շրջաններից մոտ 20-ը հիմնականում անասնապահական շրջաններ են, մեր յերկրի բնական պայմանները լայն հնարավորություն են տալիս անասնաբուծության զարգացման համար: Ամփոփելով կենտկոմի և տեղական կազմակերպությունների աշխատանքներն անասնապահության սոցիալիստական վերակառուցման գծով՝ գալիս ենք այն յեզրակացության, վոր մինչև վերջին տարին անասնապահության խնդիրները չեն արժանացել անհրաժեշտ ուշադրության. միայն 1931 թվից է, վոր ստեղծվում է վորոշ, պետք է ասել, դեռևս անբավարար բեկում այդ ուղղությամբ: Յեվ իսկապես, անասնապահության ֆրոնտում մինչև վերջին տարին շարունակվում է անասունների թվի կրճատումը:

1931 թվին ունեյինք Հայաստանում 757.800 գլուխ խոշոր յեղջյուրավոր անասուն, վոր կազմում է 30 թվի քանակի 96,7 տոկոսը, նրանց թվում կովեր և մատղաշ գոմեշներ՝ 233.100, կամ 30 թվի քանակի 100,4 տոկոսը: Մանր յեղջյուրավոր անասուններ 31 թվին ունեյինք 1.490.000 գլուխ, կամ նախորդ տարվա քանակի 92,8 տոկոսը: Այսպիսով տեսնում ենք, վոր դեռ 1931 թվին շարունակվել է անասունների ընդհանուր թվի վորոշ կրճատում՝ բացի կովերից: Չափազանց բացասական այս յերևույթի հիմնական պատճառը մի կողմից անհատական տնտեսությունների անկայունությունն է, մյուս կողմից՝ կուլակային վնասարարական աշխատանքը՝ վոր կայանում է անասունների անխնա մորթելու մեջ և վորին դեռ այս կամ այն չափով յենթարկվում են առանձին

միջակ անտեսությունները։ Պետք է շեշտենք, վորպես ամենաբացասական յերևույթ, վոր տեղական կուսակցական և խորհրդային օրգանները դեռ մինչև այժմ ել չկարողացան լուրջ միջոցներ ձեռք առնել կուլակային վնասարարության դեմ, և անասունների անխնա վոչնչացման յերևույթները դեռ նկատվում են առանձին շրջաններում։

Անասունների ընդհանուր թվի վերոհիշյալ կրճատման ֆոնի վրա աչքի յե ընկնում կոլտնտեսական և խորհտնտեսական անասնաբուծության աճումը. 1931 թվին կոլտնտեսություններում հանրայնացված խոշոր անասունների թիվը հասնում եր 87·000-ի, վոր կազմում է նախորդ տարվա 196 տոկոսը, մանր անասուններինը՝ 141·000, կամ նախորդ տարվա 195%-ը։ Խորհտնտեսություններում ունենք 16·700 գլուխ խոշոր (նախորդ տարվա համեմատությամբ 439 տոկոս) և 35·000 գլուխ մանր (նախորդ տարվա համեմատությամբ 218 տոկոս) անասուններ։ Այն ժամանակ, յերբ 1929 թվին սոցիալիստական սեկտորն ուներ յերկրի խոշոր անասունների ընդհանուր թվի 1,3, իսկ մանր անասունների՝ 1,2 տոկոսը, 1931 թվին կոլտնտեսությունների և խորհտնտեսությունների խոշոր անասունների հոտը կազմում է յերկրի այդ անասունների ընդհանուր թվի 13,7, իսկ մանր անասունների հոտը՝ ընդհանուր քանակի 11,9 տոկոսը։

Այսպիսով, անվիճելի յեն նախնական մի շարք նվաճումներ, վոր ունենք անասնաբուծության սոցիալիստական վերակառուցման գծով։ Ավելի զգալի հաջողություններ ձեռք բերելու համար անհրաժեշտ է զարկ տալ անասնապահական կոլտնտեսային ֆերմաներին, կաթնատնտեսական խոշոր խորհտնտեսությունների հետագա շինարարությանը։ 1931 թվին ունեյինք յոթ խոշոր անասնապահական (կաթնատնտեսական) խորհտնտեսություններ՝ 1929 թվի 3 տնտեսության փոխարեն, և կոլտնտեսային ապրանքային ֆերմաներում՝ 10·500 գլուխ կով, 57·341 վոչխար և 2·847 մայր խոզ։ Այս տարի պետք է կազմակերպենք մի շարք նոր խորհտնտեսություններ և մանավանդ զգալի չափով բարձրացնենք կոլտնտեսային ֆերմաների թիվը։ Անասնաբուծության զարգացման 32 թվի պլանը կատարելու համար համագումարը պետք է պահանջի շրջանային և տեղական բոլոր կազմակերպություններից իսկական շրջադարձ — յերեսներս դեպի սոցիալիստական անասնաբուծություն։

Ամենից առաջ պետք է զարկ տանք շինարարությանը, նկատի ունենալով, վոր անցած տարի խոշոր թերացումներ ունեցանք այս գծով. խորհտնտեսություններում գոմերի շինարարության անցյալ տարվա պլանը կատարվեց հազիվ 40 տոկոսով, կոլտնտեսային ֆերմաներում՝ 25–30 տոկոսով։ Խորհտնտեսության հոտի մի զգալի մասը դեռ այժմ պահվում է գյուղացիական գոմերում, անհարմար պայմաններում։ Շատ սխալ է, մանավանդ կոլտնտեսային ֆերմաների նկատմամբ, յերբ փոխանակ օգտագործելու տեղական շինանյութերը, տեղական անտառները, մարդիկ զարմանալի հանգստությամբ նստում են և սպասում, վորպեսզի Լոռու կամ Դիլիջանի ամենահեռավոր գյուղի գոմի համար անտառանյութ գա հասնի Վորոնեժից։

Նման տրամադրությունները պատճառ յեղան անցյալ տարի գոմերի շինարարության համար հատկացված բավական խոշոր վարկերի չօգտագործման։ Նկատի ունենալով անցյալ տարվա փորձը՝ կոլտնտեսությունները և խորհտնտեսությունները պետք է անմիջապես սկսեն շինանյութերի պատրաստումը, բանվորական ուժի հավաքագրումը՝ այս տարի լայն ծավալով իրագործելու համար նոր շինարարությունը։ Շինարարությունն այս տարի պիտի ավարտվի այնպիսի ծավալով, վորպեսզի 1933 թվի աճած հոտն ամբողջապես տեղավորվի զոոտեխնիկական պահանջներին միանգամայն համապատասխան պայմաններում։

Յերկրորդ կարևորագույն խնդիրն այս բնագավառում կերի բազայի լայնացման խնդիրն է՝ խոտհարքների և արոտների ներկա դրությունը միանգամայն անբավարար է և չի ապահովում գոյություն ունեցող հոտը բավականաչափ կերով։ Մինչդեռ կերի բազայի ընդարձակման և կայունաց-

ման գծով անասնապահական շրջանների կազմակերպությունները մինչև այժմ գրեթե վոչինչ չեն արել. այս տարի Կենտկոմը հաստատեց 20.000 հեկտար խոտ ցանելու պլանը՝ անցյալ տարվա 6000 հեկտարի փոխարեն. Մենք սպասում ենք, վոր շրջանային կազմակերպությունները վոչ միայն տեղական միջոցների մոբիլիզացիայով կապահովեն այս պլանի կատարումը, այլև հանդիպական ավելի լայն պլաններ կառաջադրեն: Նույնը և սիլոսի գծով, վոր անցյալ տարի առաջին անգամ Հայաստանի գյուղում մասսայական նվաճումներ գործեց: Անասնապահական հիմնական շրջանները (Ստեփանավան, Մարտունի, Աղբաբա, Ախտա) այս տարի ստանում են մեքենատրակտորային կամ խոտհնձի կայաններ. մեքենայական բազայի լայնացումն այս շրջաններում հնարավոր է դարձնում բնական խոտհարքների և արոտատեղիների մշակումը և կարգի բերումը: Յես չեմ խոսում անասունների ցեղի ազնվացման, զոոմինիմումի լայն կիրառման, անասնապահական կադրերի պատրաստման և մի շարք այլ խնդիրների մասին. անասնաբուծության կոնկրետ խնդիրների մասին մեր համագումարը լսելու յե հաղորդում ընկ. Գուլոյանի հատուկ զեկուցումը:

Անհրաժեշտ է շեշտել միայն, վոր թերևս վոչ մի բնագավառում վորակի խնդիրն այնքան կարևոր նշանակություն չունի, վորքան հատկապես անասնաբուծության բնագավառում: Վորովհետև վորակի անտեսումը, դիմազրկությունը խորհտնտեսությունների և կոլտնտեսային ֆերմաների հոտերի նկատմամբ անբուժելի չարիք է, այդ փչացնում է անասուններին և իջեցնում կաթնատվությունը: Ահա թե ինչու ստալինյան պայմանների կիրառումն այստեղ նմանապես հաղթանակի հիմնական բանալին է: Ահա թե ինչու աշխատանքի վորակի խնդիրն ամենաայժմեյական խնդիրն է անասնաբուծության ֆրոնտում և այդ խնդրի լուծումից է կախված կաթնատվության բարձրացումը, անասունների քաշի աճումը: Կասկած չի կարող լինել, վոր պայքարելով վորակական բարձր ցուցանիշների համար՝ կարճ ժամանակում անասնաբուծության վորակական ցուցանիշների տեսակետից մենք կարող ենք հասնել և անցնել անասնապահության բուրժուական առաջավոր յերկրներից, վորոնցից դեռ շատ ենք հետ մնում:

Պատահական չե, վոր մեր կուսակցության ներկա համագումարը հատկապես զբաղվելու յե անասնապահության խնդիրներով: Կուսկազմակերպությունների և մասսաների ուշադրությունը և յեռանդը անասնաբուծության զարգացման և սոցիալիստական վերակառուցման կոնկրետ խնդիրներին գամելով՝ մեր համագումարն այս մարտական փրոնտում նոր, բոլշևիկյան բեկման սկիզբն է դնելու: Յերբեք չպետք է մոռանալ, վոր մեր յերկրի գյուղատնտեսության զարգացման ուղիները մեծ չափով զուգադիպում են անասնաբուծության զարգացման ուղիներին: Այս ուրեմն՝ կրկնակի անթույլատրելի յե այս ֆրոնտի նշանակության թերագնահատումը. այդ թերագնահատումն ամենախիստ տեսակի օպորտունիզմ է: Ուրեմն պետք է պահանջենք, վոր կուսակցական կազմակերպությունները ծավալեն ու կատաղի պայքար մղեն դասակարգային թշնամու վոտնձգությունների դեմ անասնապահության ֆրոնտում, ջախջախիչ հարված տան կուլակներին և յենթակուլակներին՝ անասունների վոչնչացման առաջն առնելով. 1932 թիվը պետք է վերջ տա մեր յերկրի անասունների հոտի կրճատմանը և սկիզբը դնի նրա աճմանը. պետք է պահպանել, ամրացնել ու այդ հիման վրա ծավալել խորհտնտեսային և կոլտնտեսային անասնապահությունը՝ շեշտը դնելով վորակի վրա. պիտի պահանջենք բոլշևիկորեն լծվել կերի բազայի կայունացման աշխատանքներին, պիտի պահանջենք, վոր մեր խորհտնտեսությունները և անասնապահական կոլտնտեսությունները լի ու լի կատարեն իրենց բոլոր պարտավորությունները պետության նկատմամբ: Բոլշևիկյան աշխատանքով և պայքարով Հայաստանի կոմունիստական կուսակցությունը պիտի կատարի իր վրա ընկած պարտավորությունը՝ մսի, կաթի, յուղի, բրդի և կաշու մթերումների լուծման գործում:

ման գծով անասնապահական շրջանների կազմակերպությունները մինչև այժմ գրեթե վոչինչ չեն արել. այս տարի Կենտկոմը հաստատեց 20.000 հեկտար խոտ ցանելու պլանը՝ անցյալ տարվա 6000 հեկտարի փոխարեն. մենք սպասում ենք, վոր շրջանային կազմակերպությունները վոչ միայն տեղական միջոցների մոբիլիզացիայով կապահովեն այս պլանի կատարումը, այլև հանդիպական ավելի լայն պլաններ կառաջադրեն: Նույնը և սիլոսի գծով, վոր անցյալ տարի առաջին անգամ Հայաստանի գյուղում մասսայական նվաճումներ գործեց: Անասնապահական հիմնական շրջանները (Ստեփանավան, Մարտունի, Աղբաբա, Ախտա) այս տարի ստանում են մեքենատրակտորային կամ խոտհնձի կայաններ. մեքենայական բազայի լայնացումն այս շրջաններում հնարավոր է դարձնում բնական խոտհարքների և արոտատեղիների մշակումը և կարգի բերումը: Ցես չեմ խոսում անասունների ցեղի ազնվացման, զոոմինիմումի լայն կիրառման, անասնապահական կադրերի պատրաստման և մի շարք այլ խնդիրների մասին. անասնաբուծության կոնկրետ խնդիրների մասին մեր համագումարը լսելու յե հողժողկոմ ընկ. Գուլոյանի հատուկ զեկուցումը:

Անհրաժեշտ է շեշտել միայն, վոր թերևս վոչ մի բնագավառում վորակի խնդիրն այնքան կարևոր նշանակություն չունի, վորքան հատկապես անասնաբուծության բնագավառում: Վորովհետև վորակի անտեսումը, դիմազրկությունը խորհտնտեսությունների և կոլտնտեսային ֆերմաների հոտերի նկատմամբ անբուժելի չարիք է, այդ փչացնում է անասուններին և իջեցնում կաթնատվությունը: Ահա թե ինչու ստալինյան պայմանների կիրառումն այստեղ նմանապես հաղթանակի հիմնական բանալին է: Ահա թե ինչու աշխատանքի վորակի խնդիրն ամենաայժմեական խնդիրն է անասնաբուծության ֆրոնտում և այդ խնդրի լուծումից է կախված կաթնատվության բարձրացումը, անասունների քաշի աճումը: Կասկած չի կարող լինել, վոր պայքարելով վորակական քարձր ցուցանիշների համար՝ կարճ ժամանա-

կում անասնաբուծության վորակական ցուցանիշների տեսակետից մենք կարող ենք հասնել և անցնել անասնապահության բուրժուական առաջավոր յերկրներից, վորոնցից դեռ շատ ենք հետ մնում:

Պատահական չէ, վոր մեր կուսակցության ներկա համագումարը հատկապես զբաղվելու յե անասնապահության խնդիրներով: Կուսկազմակերպությունների և մասսաների ուշադրությունը և յեռանդն անասնաբուծության զարգացման և սոցիալիստական վերակառուցման կոնկրետ խնդիրներին գամելով՝ մեր համագումարն այս մարտական ֆրոնտում նոր, բոլշևիկյան թեկման սկիզբն է դնելու: Ցերբեք չպետք է մոռանալ, վոր մեր յերկրի գյուղատնտեսության զարգացման ուղիները մեծ չափով զուգադիպում են անասնաբուծության զարգացման ուղիներին: Այս ուրեմն՝ կրկնակի անթույլատրելի յե այս ֆրոնտի նշանակության թերագնահատումը. այդ թերագնահատումն ամենախիստ տեսակի ոպորտունիզմ է: Ուրեմն պետք է պահանջենք, վոր կուսակցական կազմակերպությունները ծավալեն ու կատաղի պայքար մղեն դասակարգային թշնամու վոտնձգությունների դեմ անասնապահության ֆրոնտում, ջախջախիչ հարված տան կուլակներին և յենթակուլակներին՝ անասունների վոչնչացման առաջն առնելով. 1932 թիվը պետք է վերջ տա մեր յերկրի անասունների հոտի կրճատմանը և սկիզբը դնի նրա աճմանը. պետք է պահպանել, ամրացնել ու այդ հիման վրա ծավալել խորհտնտեսային և կոլտնտեսային անասնապահությունը՝ շեշտը դնելով վորակի վրա. պիտի պահանջենք բոլշևիկորեն լծվել կերի բազայի կայունացման աշխատանքներին, պիտի պահանջենք, վոր մեր խորհտնտեսությունները և անասնապահական կոլտնտեսությունները լի ու լի կատարեն իրենց բոլոր պարտականությունները պետության նկատմամբ: Բոլշևիկյան աշխատանքով և պայքարով Հայաստանի կոմունիստական կուսակցությունը պիտի կատարի իր վրա ընկած պարտականությունը՝ մսի, կաթի, յուղի, բրդի և կաշվի պրոբլեմների լուծման գործում:

ԲՈԼՇԵՎԻԿՅԱՆ ՏԵՄՊՈՎ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՎՈՒՄ Ե ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲԱԶԱՆ

Ընկերնե՛ր, հայտնի յեն մեր նվաճումները գյուղի սոցիալիստական վերակառուցման գծով. այդ նվաճումներին համապատասխանում ե հսկայական այն աշխատանքը, վոր կատարել ե մեր կուսակցությունը Հայաստանում՝ վերակառուցելու համար գյուղատնտեսության տեխնիկական բազան, նոր մեքենաներով վերազինելու համար նոր, խորհրդային, կոլտնտեսային գյուղը. իր նոր մեքենայական բազայով մեր գյուղն այժմ անհնար ե համեմատության մեջ դնել նախախորհրդային գյուղի հետ, վորի հիմնական ինվենտարը չութն եր և փայտե փոցխը: Բամբակացան շրջանների հիմնական քաշող ուժն արդեն տրակտորն ե. անցյալ տարի ունեյինք մեքենատրակտորային 4 կայան, այս գարնանը կազմակերպում ենք ևս 3 նոր ՄՏ կայան և 2 խոտհնձի մեքենայական կայան: 29 թվին Հայաստանի տրակտորային պարկի ընդհանուր ուժը 400 ձիու ուժ եր, 30 թվին՝ 870, 31 թվին՝ 1·685 ձիու ուժ. այս տարի տրակտորների ընդհանուր ուժը հասնելու յե 4·525 ձիու ուժի: *Նախախորհրդային գյուղի նահապետական գործիքները փոխվել են այժմեյական գյուղատնտեսական աշխատանքի արտադրողականությունը բարձրացնող մեքենաներով.* վերջին 5 տարվա ընթացքում մեր գյուղը ստացել ե 29·696 յերկաթե գութան, վորից 16·500–ը 1930 և 31 թ. թ., 7·722 փոցխ, վորից 6·600–ը վերջին յերկու տարում, 1344 հացահատիկային շարքացան, 1·267 բամբակի շարքացան, 6·300 կուլտիվատոր, 890 սերմազտիչ, 2·500 մաղող մեքենաներ, 2·370 նոր տեսակի սայլեր և այլն: Հինգ տարվա ընթացքում մեծ արտոնությունների և վարկի կարգով Հայաստանի գյուղն ստացել ե 3 և կես միլիոն ռուբլու գյուղատնտեսական գործիքներ վորից 2 միլիոն 600·000 ռուբլու՝ 1930 և 31 թվերին:

Գյուղատնտեսական մեքենաների ներմուծումը շարունակվելու յե առաջիկայում ավելի արագ թափով այս տարի

Հայաստանի դաշտերից իսպառ վերանում են արորը և փայտե փոցխը. *կոլտնտեսությունների ցանքն ամբողջությամբ կատարվելու յե շարքացանով. հարյուր տոկոսով ապահովվում ե սերմացուի զտումը, լուրջ քայլեր են արվելու խոտհնձի մեքենայացման գծով և այլն: Սակայն, ընկերներ, բավական չե միայն գյուղատնտեսական բարդ գործիքները գյուղը հասցնել. անհրաժեշտ ե միաժամանակ բարձրացնել կոլտնտեսական գյուղացու տեխնիկական մակարդակը, առանց դրան, ինչպես արդեն ասում ենք, հնարավոր չե ապահովել ներմուծված բարդ մեքենաների նորմալ աշխատանքը և բեռնվածությունը: Բարդ մեքենայի աննշան մի մասի փչանալու կամ խանգարվելու պատճառով, որերով և շաբաթներով անգործ ընկած են մնում բազմաթիվ մեքենաներ: Արժեքավոր մեքենաները տուժում են վատ խնամքի, մեքենաների նկատմամբ դիմազրկության յերևույթների լայն տարածման հետևանքով:* Պետք ե բոլոր շրջաններում և խոշոր կոլտնտեսություններում հատուկ աշխատանք սկսել՝ բարձրացնելու համար կոլտնտեսականի տեխնիկական մակարդակը: ԿՈԼՏՆՏԵՍԱԿԱՆԸ ՊԵՏՔ Ե ՏԻՐԱՆԱ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԵՔԵՆԱՅԻ ՏԵԽՆԻԿԱՅԻՆ: *Միայն այս դեպքում գյուղատնտեսական աշխատանքի արտադրողականության բարձրացման լայն հնարավորությունները,—վոր բացվում են շնորհիվ գյուղատնտեսության տեխնիկական բազայի վերակառուցման,—իսկական իրականություն կդառնան:*

ՀԱՑԱՀԱՏԻԿԱՅԻՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՆԵՐԻ ԹԵՐԱԳՆԱՀԱՏՄԱՆ ԴԵՄ

Տեխնիկական բարձրարժեք կուլտուրաների և անասնապահության զարգացման մեր պահանջը վոմանք այնպես են հասկանում, թե իբր տեխնիկական կուլտուրաների ընդարձակումը պետք ե դնել զուտ հացահատիկային կուլտուրաների կրճատման հաշվին. տեղ-տեղ նկատվում են հացահա-

տեխնիկական կուլտուրաների նշանակության թերագնահատման տրամադրություններ։ Այդ տրամադրություններն արդեն դուրս են բերել իրենց արտահայտությունը հացահատիկային կուլտուրաների վերջին տարիներում փոքր ինչ կրճատման նշաններում։ Մեզ թվում է, թե չենք կարող նորմալ համարել այս յերևույթը։ Ինչ կասկած, վոր տեխնիկական կուլտուրաների համար (բամբակ, ծխախոտ և այլն) պետքական բոլոր հողամասերը պետք է տրամադրվեն այդ կուլտուրաներին, ինչ կասկած, վոր ցանովի խոտաբույսերի մշակությունը դնալով ավելի ու ավելի պիտի ծավալվի անասնապահական շրջաններում։ Սակայն սա դեռ չի նշանակում, վոր տեխնիկական մշակույթների և խոտաբույսերի տարածության լայնացման զուգընթաց՝ պետք է կրճատվեն հացահատիկային կուլտուրաները. ընդհակառակը, նրանք նույնպես պետք է աճեն նոր, այժմ չօգտագործվող տարածությունները ցանքաշրջանառության մեջ առնելու միջոցով։ Անվիճելի յե, վոր այս գծով հնարավորությունները դեռ այնքան էլ շատ չեն սպառվել։ Ահա թե ինչու վնասակար ու անթույլատրելի պետք է համարել հացահատիկային կուլտուրաների կրճատման տրամադրությունները։ Հացահատիկային կուլտուրաների թերագնահատման յերևույթը արտահայտությունը նրանց բերքատվության բարձրացման աշխատանքներն ու հնարավորություններն անտեսելու մեջ է կայանում։ Մինչդեռ այս գծով մենք շատ հետ ենք մնում, այնինչ ագրոտեխնիկական մի շարք վոչ այնքան դժվար ձեռնարկությունների միջոցով հնարավոր է կարճ ժամանակում բարձրացնել ցորենի բերքատվությունը։ Համագումարը պետք է պահանջի կուսակցական և խորհրդային կազմակերպություններից, լայն ծավալելով տեխնիկական կուլտուրաների մշակույթները, յերբեք աչքաթող չանել հացահատիկային կուլտուրաները՝ շեշտը դնելով մանավանդ նրանց բերքատվության բարձրացման աշխատանքների վրա։

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՄՐԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ

Ընկերնե՛ր, գյուղի սոցիալիստական վերակառուցման ներկա դրության պատկերը լրիվ չի լինի, յեթե յերկու խոսքով առանձնապես կանգ չառնենք գյուղատնտեսության վերակառուցման հիմնական լծակի՝ խորհտնտեսությունների ներկա դրության վրա։ Խորհտնտեսությունների շինարարությունը քանակի գծով բավական լայն ծավալ է ստացել. 1929 թվի 15 խորհտնտեսությունների փոխարեն ունենք այժմ 45 խորհտնտ. 1932 թվին խորհտնտեսությունների թիվը յերևի մինչև 60-ի կհասնի։ Ըստ մասնագիտացման՝ խորհտնտեսությունների մեծ մասը, 16 միավոր, անասնապահական ուղղության են, ապա գալիս են այգեգործական, թռչնաբուծական, մերձքաղաքային տնտեսություններ, բամբակի խորհտնտեսություն և այլն։ Այսպիսով տեսնում ենք, վոր խորհտնտեսությունների քանակական աճման տեսակետից դրությունը վատ չէ։ Սակայն, յերբ ծանոթանում ենք յուրաքանչյուր խորհտնտեսության կոնկրետ դրությանը՝ իսկույնևեթ աչքի յե ընկնում մի հիմնական հանգամանք՝ դրեթե բոլոր խորհտնտեսությունները, թերևս բացառությամբ մի յերկուսի, վորպես տնտեսական միավորներ, դեռ չեն ամրացել և տնտեսապես կազմակերպվել։

Յեթե խորհտնտեսությունների դրության հիմնական ցուցանիշը կազմում է պլանների կատարումը՝ պետության հանդեպ ստանձնած պարտականությունների կատարումը՝ ապա մեր խորհտնտեսությունների շատ փոքր մասը միայն կարելի յե այս կամ այն չափով ամրացված համարել։ Վերցնենք բամբակի խորհտնտեսությունը. սա մեր ամենահին տնտեսություններից մեկն է, ճիշտ է, մի շարք անգամներ վերակազմության յենթարկված։ Այդ խորհտնտեսությունը բամբակի հանձնման պլանն անցյալ տարի կատարեց միայն 24,5 տոկոսով։ Նման խայտառակության հիմնական պատճառը աշխատանքի վատ կազմակերպումն էր՝ չնայած վոր

խորհտնտեսության շրջակա գյուղերում, այդ գյուղերի բամբակի կարկտահարման պատճառով, բավական թվով աշխատող ձեռքեր անգործ եյին մնում: Խորհտնտեսության ղեկավարությունը և Ղուրդուղուլու շրջանային կուսակցական և խորհրդային որգաններն անճարակ յեղան խորհտնտեսությունն աշխատող ձեռներով ապահովելու գործում. բամբակի մշակման բոլոր աշխատանքները թերակատարվեցին, քաղհանը, ջրելը և այլն ժամանակին չկատարվեցին, բերքահավաքը գնում եր ինքնահոսի կարգով. դիմազրկություն խորհտնտեսություններում՝ ինչքան ուզես, և ահա հետևանքները—միջին բերքատվությունը մեկ հեկտարից յերկու ցենտներ: Վերցնենք անասնապահական խորհտնտեսությունները. չնայած այն հանգամանքին, վոր անասնապահական խորհտնտեսություններին հաշվետու շրջանում նվիրված եր բացառիկ ուշադրություն, վոր յերկարատև գործուղումների կարգով խորհտնտեսություններում ամիսներով աշխատել են մի շարք ընկերներ կենտրոնական հիմնարկներից՝ գրեթե վոչ մի խորհտնտեսություն ժամանակին չկարողացավ ավարտել վոչ շինարարությունը, վոչ էլ հիմնական աշխատանքների (ցանքը, բերքահավաքը, խոտի հնձելը և հավաքելը, սիլոսը և այլն) պլանը, չնայած վոր պլաների կատարման հիմնական նախապայմանները կային: Անասունների խնամքի վորակը, որինակ Աղբաբայի և Մարտունու խորհտնտեսություններում, խայտառակ դրության մեջ է գտնվում մինչ այժմ: Հորթերի սատկումը դեռևս մեծ չափերի յե հասնում:

Խորհտնտեսությունների ներկա, ընդհանուր առմամբ անմխիթար դրության հիմնական պատճառները ստալինյան պայմանները չկիրառելն է և խորհտնտեսությունների ղեկավարող կադրերի խոշոր հոսունությունը: Խորհտնտեսությունների ղեկավարները, մասնագետները, միջին ղեկավար կազմը փոխվում է այնպիսի արագությամբ, վոր անհնար է խոսել քիչ թե շատ պատասխանատու և կոնկրետ ղեկավարության մասին: Նման պայմաններում գրեթե վոչ մի

խորհտնտեսություն չի ամրացրել տնտեսական հաշվարկը, վոր և առաջացնում է խորհտնտեսությունների մեծ մասի ֆինանսական դրության անկայունությունը: Դիմազրկությունը և աշխատանքի վարձատրման հավասարեցումն իջեցնում են աշխատանքի արտադրողականությունը, չեն նպաստում աշխատանքի վորակի, որինակ՝ անասունների խնամքի բարելավմանը, հսկայական տեղ են թողնում անպատասխանատվության, փչացումներին, պետական գույքի վատնման, մանր-բուրժուական, կուլակային ազդեցությունների արտահայտման: Նման դրությունն այլևս անհանդուրժելի հանցանք կլինի:

Մեր համագումարը պետք է պահանջի կուսակցական բոլոր կազմակերպություններից, համագումարից անմիջապես հետո կիպ մոտենալ յուրաքանչյուր առանձին խորհտնտեսության ամրացման կոնկրետ աշխատանքներին: Պետք է ամենից առաջ վերանայել և յերկար ժամանակով ամրացնել խորհտնտեսությունների բարձր, միջին և ստորին ողակների ղեկավար կադրերը՝ պայքարելով այդ կադրերի հոսունության դեմ: Մինչև գարնան բացվելը բոլոր խորհտնտեսությունները պետք է ապահովվեն ինչպես ղեկավար, նույնպես և մասնագիտական կադրերով գեթ նվազագույն չափով: Յուրաքանչյուր խորհտնտեսություն պետք է ապահովված լինի կուսակցական և պրոֆմիութենական կազմակերպությունների ամուր ղեկավարներով: Անմիջապես յուրաքանչյուր խորհտնտեսության համար կոնկրետ միջոցառումներ պետք է մշակվեն և կիրառվեն՝ կենսագործելու համար խորհտնտեսության բոլոր ողակներում ընկ. Ստալինի վեց ցուցումները՝ բոլոր խորհտնտեսությունները պետք է անցնեն տնտեսական հաշվարկի և խնայողության խիստ ռեժիմով ու պլանների կատարումով ամրացնեն ֆինանսական դրությունը և հնարավորություններ ստեղծեն ներքին կուտակումներ կատարելու համար: Այժմյանից խորհտնտեսություններն արտադրական պլանները կազմելու և քննելու աշխատանքներին զուգընթաց՝ պետք է ռեալ մի-

ջոցների դիմեն, ապահովելու համար առաջիկա գարնան և հետագայի աշխատանքները կայուն բանվորական ուժով։

Միայն բոլշևիկյան աշխատանքով և պայքարով նպայքարելով կուլակային-բուրժուական ազդեցությունների և օպորտունիզմի դեմ,— վոր իսկական խորհրդային տնտեսություններ պիտի դառնան այն միավորները, վորոնցից մի զգալի մասը դեռևս անունով է միայն խորհրդային տնտեսություն։ Մենք պետք է նախազգուշացնենք խորհրդային տնտեսությունների բոլոր ղեկավարներին, վոր նրանց բոլշևիկյան կայունության և հաստատության ցուցանիշը պիտի համարենք միայն պլանների կատարումը թե վորակական և թե քանակական ցուցանիշներով, ուրիշ խոսքով՝ խորհտնտեսությունների տնտեսական և կազմակերպչական ամրացումը վոչ թե խոսքով, այլ գործով։ Խորհրդային տնտեսության այն ղեկավարը, վոր առաջիկա յերեք ամսում շոշափելի բեկում չի մտցնի խորհտնտեսության մեջ՝ ապահովելու համար 32 թվի պլանների կատարումը՝ արժանի չի վոչ միայն տնտեսական որգանի ղեկավարի, այլև բոլշևիկյան կուսակցության մարտիկի կոչմանը։

Վճռական միջոցներ են պետք, վերջապես, խորհրդային տնտեսությունները շրջակա կոլտնտեսությունների և աշխատավոր գյուղացիության համար որինակելի տնտեսություն, առաջ մղիչ ուժ դարձնելու համար։

ԿՈԼՏՆՏՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ՀԵՐԹԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Ընկերնե՛ր,—հայտնի յեն այն կոպիտ սխալները, վոր կատարվեցին 1930 թվի գարնանը՝ Անդրկովկասում և Հայաստանում կոլտնտշինարարության ասպարեզում։ Մեր կուսակցության անցյալ, 7-րդ համագումարը տվեց այդ սխալների գնահատականը։ Համագումարն արձանագրեց, վոր մեր բոլոր շրջաններում 1930 թվի գարնանը կոպիտ կերպով խախտել եյին կոլտնտշինարարության լենինյան հիմնական սկզբունքները․ ամենուրեք խախտվել եր կոլտնտշինարարության կամավորության սկզբունքը․ խախտվել եր կոլտնտշինարարության մեջ առանձին շրջանների կոնկրետ առանձնահատկությունները հաշվի առնելու լենինյան պահանջը և վերջապես խախտվել եր կոլտնտշինարարության մեջ հերթական աստիճանների վրայից, դեռ չհասունացած, ամենաբարձր աստիճանների վրա ցատկելու անթույլատրելի լինելու լենինյան պահանջը։ «Ձախ» օպորտունիստական այս սխալները, ինչպես հայտնի յե, վոչ միայն մեծ հարված հասցրին կոլտնտշինարարության ամրացմանը և առողջ զարգացմանը, այլև քաղաքական լուրջ բարդությունների պատճառ դարձան։ Կուսակցության նախորդ համագումարը մեր առաջ խնդիր դրեց՝ վճռական միջոցներով վերջ տալ կատարված սխալներին և քյալլագյոզություններին, ապահովել գյուղում լենինյան քաղաքականության անշեղ կիրառումը, չդեկրետավորել կոլտնտշարժումը, առաջ չվազել, մասսաներից կտրվելով, այլ խորը, անդուլ աշխատանքով համոզել գյուղի հիմնական մասսաներին մեր լոզունգների ճշտությունը և գլխավորելով մասսաներին՝ առաջնորդել նրանց դեպի մեր լոզունգների կիրառումը։

Նախորդ համագումարից հետո անցած շրջանում կուսակցության Կենտրոնական Կոմիտեյի ուշադրության կենտրոնը կազմել է գյուղը, գյուղում կատարված սխալների ուղղումը, ընկ. Ստալինի այդ ուղղությամբ տված հայտնի ցուցումների կատարումը դժվար թե փորձ լինի ժխտել հսկայական այն աշխատանքը, վոր կատարվել է Հայաստանում կոլտնտշինարարության վերոհիշյալ սխալների ուղղման համար․ կատարված է հսկայական աշխատանք, սակայն, ասել, վոր այդ ասպարեզում հասել ենք լիակատար հաջողության, վոր չեն յեղել սխալների կրկնման, ռեցիդիվի բավական տարածված յերևույթներ, վոր «ձախ» սխալների ուղղման ընթացքում մի շարք շրջաններում չեն սայթաքել դեպի այդ սխալների «ուղղման» աջ պրակտիկան՝ դժբախտաբար չենք կարող։

Այս թե ինչու Համկոմկուսի Կենտկոմն իր հոկտեմբերի 31-ի վորոշման մեջ կրկին անգամ ամենասուր կերպով դրեց մեր առաջ կոլտնտշինարարության ասպարեզում կատարված սխալները մինչև վերջ ուղղելու հրամայական անհրաժեշտությունը: Ընդգծելով, վոր մեր աշխատանքներում կատարված քաղաքական լուրջ սխալներից ամենահիմնականը հանդիսանում է գյուղացիական հարցում կատարված սխալը՝ Կենտկոմը շեշտեց, վոր այդ սխալի արտահայտությունն է նաև մի շարք շրջանների արագ կոլեկտիվացումը, առանց բավարար, լուրջ նախապատրաստական աշխատանքի, առանց կազմակերպված կոլեկտիվ տնտեսությունների կազմակերպչական-քաղաքական և տնտեսական ամրապընդման: Կենտրոնական Կոմիտեյի այս գնահատականն ամբողջապես ճիշտ և տեղին է Հայաստանի կոլտնտշինարարության գործնականի նկատմամբ: Չե՞ վոր չնայած Կենտկոմի բազմաթիվ նախազգուշացումներին, դեռ մինչև վերջերս ել մի շարք շրջաններում, որինակ՝ Աշտարակում, Բասարգեչարում, Վեդիի շրջանում և այլն՝ շարունակվելիս է յեղել «կոլեկտիվացման տոկոսներին» յետևից վազելու մանր-բուրժուական կիսատրոցկիստական պրակտիկան: Չե՞ վոր դեռ մինչև վերջերս ել մի շարք շրջաններ չեն յուրացրել Համկոմկուսի Կենտկոմի օգոստոսի 2-ի վորոշումն այս մասին, վոր ներկայումս կազմակերպված կոլտնտեսությունների տնտեսական, կազմակերպչական ամրացումն է հիմնական խնդիրը, և կտրում, անջատում են կոլտնտեսությունների աճման խնդիրը նրանց ամրացման աշխատանքներից: Վերջապես, չե՞ վոր դեռ մինչև անցյալ ամառ մեր կենտրոնական մի շարք որգաններ՝ Պետպլանը, Հողժողկոմատը, ինքը՝ Կոլտնտկենտրոնը՝ ըստ եյության շարունակում եյին կոլտնտշինարարության դեկրետավորման «ձախ» պրակտիկան՝ վերևից սահմանելով առանձին շրջանների և նույնիսկ գյուղերի կոլեկտիվացման ստուգիչ թվերը: Չեմ խոսում ել այն մասին, վոր հաշվետու շրջանում քիչ չեն յեղել նաև դեպքեր, յերբ առանձին շրջաններում (որինակ՝ Ղարաքիլիսայում, Ախտայում և այլն) և գյուղերում փորձեր են յեղել «ուղղել» սխալներն աջ պրակտիկայով, բոլորովին ինքնահոսի թողնելով կոլտնտեսությունների ամրացման աշխատանքները:

Ի՞նչ ունենք ներկայումս կոլտնտշինարարության ֆրոնտում: Անժխտելի յե, վոր պայքարելով վերոհիշյալ սխալների դեմ՝ Կենտկոմի ղեկավարությամբ մեր կազմակերպությունները աչքի ընկնող մի շարք թերություններից բացի, ունեն նաև նվաճումներ և հաջողություններ: Ժամանակին փոխելով մի շարք շրջանների ղեկավարությունը, կոլտնտշինարարության գծով կատարած սխալների և թերությունների պատճառով, մենք սրեցինք կուսկազմակերպությունների ուշադրությունը կոլտնտշարժման առողջ զարգացման հիմնական խնդիրների վրա: 1930 թ. աշնանը կոլեկտիվացված եյին Հայաստանի բոլոր գյուղական տնտեսությունների 8,9 տոկոսը. ներկայումս մեր բոլոր գյուղական տնտեսությունների 40 տոկոսն ամրացված են կոլեկտիվ տնտեսությունների մեջ: 30 թ. 380 կոլտնտեսությունների փոխարեն ունենք այժմ 900 կոլտնտեսություն, վորոնք միացնում են 65.592 տնտեսություն: Այստեղ ուշագրավ է կոլտնտեսությունների վոչ միայն քանակի աճումը, այլև նրանց խոշորացումը. 30 թ. յուրաքանչյուր կոլտնտեսություն միջին թվով միացնում եր 39 տնտեսություն, ներկայումս՝ 73 տնտեսություն. մի տարում կոլտնտեսությունների քանակն աճել է 2 և կես անգամ, իսկ կոլտնտեսություններում միացած տնտեսությունների թիվը՝ 4 անգամից ավելի: Բամբակացան շրջաններում կոլեկտիվացված է բոլոր աշխատավորական տնտեսությունների 55 տոկոսը. այդ շրջանների համատարած կոլեկտիվացումը և այդ հիման վրա կուլակության լիկվիդացիան, վորպես դասակարգ՝ այս տարի մեր աշխատանքների որակարգի անմիջական խնդիրն է դառնում: Գոյություն ունեցող կոլտնտեսություններից 90 տոկոսը գյուղատնտեսական արտելներ են, կոլտնտշինարարության

ներկա շրջանի հիմնական ձևը, այն ժամանակ, երբ 30 թ. միայն կոլտնտեսությունների 60 տոկոսն էր կազմում գյուղատնտեսական արտելը: Գյուղացիության հիմնական մասսաների դեպի սոցիալիզմը շրջադարձի մասին վկայում է ոչ միայն կոլեկտիվացման աճումը հաշվետու շրջանում, այլ նաև միջակ գյուղացիության ավելի լայն ընդգրկումը կոլտնտեսություններում. այն ժամանակ, երբ դեռ անցյալ տարվա ամառը կոլտնտեսություններում միացած բոլոր տնտեսությունների 32 տոկոսն էին կազմում միջակ տնտեսությունները՝ ներկայումս վերջինների տեսակարար կշիռը կոլտնտեսություններում կազմում է արդեն 43 տոկոսը: Կոլտնտեսությունների աճման և տնտեսական վարչ. ամրացման տեսակետից պերճախոս են հետևյալ տվյալները. 500 հեկտարից ավելի հացահատիկային ցանքս ունեյին 30 թ. միայն 3 կոլտնտեսություն, 31 թվին՝ 30 կոլտնտեսություն, 250 հեկտարից ավելի բամբակ ունեյին 30 թ. 4 կոլտնտեսություն, 31 թ.՝ 13 կոլտնտեսություն. 100-ից ավելի համայնացված կով ունեյին 30 թվին՝ 25 կոլտնտեսություն, 31 թ.՝ 80 կոլտնտեսություն, 500-ից ավելի հանրայնացված ոչխար ունեյին 30 թ. 16 կոլտնտեսություն, 31 թ.՝ 159 կոլտնտեսություն: Կոլտնտեսությունները կազմակերպել են 31 թ. 120 կաթնատնտեսական ապրանքային ֆերմաներ, ոչխարաբուծական՝ 100 ֆերմա, խոզաբուծական՝ 40 և այլն. Կոլտնտեսությունները թերակատարում տալով մի շարք կուլտուրաների, օրինակ՝ բամբակի մթերման պլաններում՝ գերակատարեցին կաթնամթերքների, ծխախոտի, մսի մթերման պլանները: Այսպիսով, տեսնում ենք մասնակի հաջողություններ կոլտնտշինարարության բնագավառում: Սակայն կոլտնտշարժման և շինարարության ներկա դրությունն ընդհանուր առմամբ դեռևս բավարար համարել չենք կարող. ընդհակառակը, պետք է շեշտենք, որ անհրաժեշտ է դեռևս հսկայական աշխատանք՝ սխալների մնացորդների և հետքերի վերջնական վերացման, Կենտկոմի օգոստոսի 2-ի և հոկտեմբերի 31-ի որոշումների կենսագործման գծով, որ-

պեսզի ամուր, տնտեսապես կայուն, բարձր արտադրողականության և ապրանքայնության օրինակելի տնտեսություններ դառնան մեր կոլտնտեսությունները:

Իր որոշման մեջ Կենտկոմը 2½ ամիս առաջ պահանջ դրեց «անմիջապես կոնկրետ ղեկավարության կարգով ուղղել մի շարք շրջաններում կոլտնտեսական շարժման ասպարեզում թույլ տրված սխալները և կենտրոնացնել ջանքերը կոլտնտեսությունների կազմակերպչական, տնտեսական ու քաղաքական ամրացման համար՝ շերտավորելով ձեռնարկումներն ըստ համապատասխան շրջանների»: Կենտկոմի այս դիրեկտիվը կատարելու համար՝ բոլոր շրջաններում ծավալեցինք հատուկ աշխատանք, կայացան մի շարք խորհրդակցություններ, հայտաբերվեցին և ուղղվեցին Աշտարակի և Վեդու շրջաններում կատարված սխալները, կենտրոնական օրգանների (Պետպլանի, Հողժողկոմատի) սխալները և այլն. Բայց որևէ չափով հանգստանալ ձեռք բերված արդյունքների վրա՝ չենք կարող. ավելին. պետք է ընդունենք, որ մինչև այժմ կատարված աշխատանքը միանգամայն անբավարար է, գյուղում կատարված սխալների վնասակար ուղղման աշխատանքներն ընթանում են դանդաղ և թույլ՝ թե՛ տեղական և թե՛ կենտրոնական օրգանների կողմից. կուսակցական կազմակերպությունները գյուղում դեռ չեն ըմբռնել և յուրացրել, որ իրենց աշխատանքի հիմնական օղակը ներկա շրջանում կոլտնտեսային շինարարության որակական ամրացումն է:

Կոլեկտիվ տնտեսությունների որակական ամրացման առաջին պայմանն աշխատանքի ճիշտ կազմակերպումն է կոլտնտեսություններում: Աշխատանքի կազմակերպման ղեկավարող սկզբունքը գործավարձային սիստեմն է, որի ամրացումը կոլտնտեսություններում անբավարար է և շատ դեպքերում՝ միայն ձևական բնույթ է կրում. կոլտնտեսությունների պաշտոնական տվյալներով մեր կոլտնտեսությունների 80 տոկոսում աշխատանքները կազմակերպված

են և վարձատրվում գործավարձային սիստեմով. հավատալ այդ «տվյալներին»՝ ամենավատ տեսակի ինքնախաբեություն կլիներ. բավական է լինել նույնիսկ լավ համարվող կոլտնտեսություններում՝ տեսնելու համար գործավարձի խախտման և վատ վորակի անթիվ որինակներ: Առաջին պահանջը, վոր պիտի դնի համագումարը կուսակցական կազմակերպությունների առաջ՝ գործավարձի ըստ եյության ամրացումն է. անհրաժեշտ է մինչև գարնանացանի սկսելը բոլոր կոլտնտեսություններում անխտիր վերանայել աշխատանքային նորմաները, աշխատանքի արտադրողականության բարձրացման նշանաբանի տակ. աշխատանքային որերի հաշվառումը կատարելիս, մանավանդ տարեկան արդյունքների վերջնական բաշխման ժամանակ, անպայման պետք է յելնել յուրաքանչյուր կոլտնտեսականի և կոլտնտեսական բրիգադի աշխատանքի շոշափելի արդյունքներից, որինակ՝ անասնապահական կոլտնտեսություններում հաշվի առնել առանձին բրիգադների հանձնարարված անասունների առողջական դրությունը, քաշի և կաթնատվության ավելացումը, հորթերի խնամումը և աճումը և այլն: Բամբակացան կոլտնտեսություններում աշխորերի վերջնական բաշխումը կատարելիս, հաշվի առնել յուրաքանչյուր բրիգադի հանձնարարված հողամասերից ստացված բերքի քանակն ու վորակը. նույնը և այգեգործական ու բոլոր մյուս կոլտնտեսություններում:

Յերկրորդ՝ կոլտնտեսային աշխատանքի ճիշտ կազմակերպման համար անհրաժեշտ է մինչև վերջը վերացնել դիմազրկությունը կոլտնտեսային աշխատանքի բոլոր ողակներում, պայքարել բրիգադների կազմի հոսունության դեմ, կազմակերպել բրիգադներ վոչ թե ազգակցական կամ թաղային նշաններով, այլ արտադրական սկզբունքով, ամրացնելով ամեն մի բրիգադ առանձին հողամասի՝ աշխատանքի սկզբից մինչև բերքահավաքը, ամեն մի կոլտնտեսությունում յուրաքանչյուր կովը, հորթը, աշխատող անասունը,

ամեն մի դաշտ, ամեն մի ծառ կոլտնտեսության այգում, կոլտնտեսային տրանսպորտի ամեն մի ողակ, գյուղատնտեսական բոլոր գործիքները պետք է ամրացվեն առանձին բրիգադների և կոլտնտեսականների, վորոնք նյութապես պատասխանատու պետք է լինեն իրենց հանձնարարված կենդանի կամ մեռյալ ինվենտարի դրության և օգտագործման վորակի ու տնտեսական եֆեկտավորության համար:

Յերրորդ՝ կոլտնտեսային աշխատանքի ճիշտ կազմակերպման համար անհրաժեշտ է բարձրացնել աշխատանքային կարգապահությունը կոլտնտեսություններում. սա մեր կոլտնտեսությունների ամենաթույլ կողմն է ներկայումս: Կարելի յե բերել տասնյակ և հարյուրավոր որինակներ, թե ինչպես կոլտնտեսային աշխատանքի ամենայեռուն շրջանում տասնյակ և հարյուրավոր կոլտնտեսականներ չեն դուրս գալիս աշխատանքի, լքում են աշխատանքները՝ փչացման և կորստի վտանգի յենթարկելով կոլտնտեսային արտադրությունը: Մի՞թե նման խայտառակությամբ չի բացատրվում բամբակի ֆրոնտի այս տարվա ամոթալի ճեղքվածքը: Ընկե՛րներ, աշխատանքի կարգապահության թուլությունը, գործալքումները կուլակի ազդեցության ամենացայտուն արտահայտությունն են կոլտնտեսություններում: Առանց անխնա մերկացնելու կուլակային այդ ազդեցությունները, առանց տնտեսապես խփելու և բարոյապես անարգելու կուլակի դասակարգային պատվերը կատարող ծույլ, աշխատանքից խուսափող գործը լքող «կոլտնտեսականին», առանց կոլտնտեսության շարքերից դեն շպրտելու անուղղելի ծույլերին, կուլակի անմիջական ագենտներին, անհնար է աշխատանքի ճիշտ կազմակերպումը կոլտնտեսություններում, ապա ուրեմն՝ վերջիններիս ամրացումը:

Չորրորդ՝ կոլտնտեսական աշխատանքի ճիշտ կազմակերպման, կոլտնտեսային աշխատանքի արտադրողականության բարձրացման համար անհրաժեշտ է ավելի լայն ծավալել և խորացնել սոցիալիստական աշխատանքի ձևերը կոլ-

տնտեսություններում. ամոթ է ասել, վոր Հայաստանի կոլտնտեսականների ընդհանուր քանակի միայն 7 տոկոսն է առայժմ հարվածային. Հարվածայնությունը և սոցմրցակցությունը կոլտնտեսություններում վոչ այնքան գործնական, վորքան դեկլարատիվ բնույթ են կրում. մինչդեռ կոլտնտեսականները պետք է հասկանան, վոր «կոմունիզմն սկսվում է այնտեղից, յերբ առաջ է գալիս ծանր աշխատանքը հաղթահարող, շարքային բանվորների անձնազոհ հոգացողությունն աշխատանքի արտադրողականության բարձրացման համար, յուրաքանչյուր փութ հաց, ածուխ, յերկաթ և այլ մթերքներ պահպանելու համար» (Լենին), յերբ աշխատանքի վրա չեն նայի վորպես չարիք, այլ կհամարեն աշխատանքը պատվի և հերոսության գործ, յերբ իրենց՝ հազարավոր և տասնյակ հազարավոր կոլտնտեսականների շրջանում ծայր կառնի հարվածային, բարձրորակ, գիտակցական աշխատանքի նոր ալիք:

Հինգերորդ՝ *ամրացնել կոլտնտեսությունը՝ նշանակում է լայնացնել նրա տնտեսական հիմքերը, նշանակում է ապահովել կոլտնտեսային անընդհատ լայնացող վերարտադրությունը. մինչդեռ այս ուղղությամբ շատ դանդաղ են շարժվում մեր կոլտնտեսությունները. բավական է ասել, վոր անցյալ տարվա ամառվա տվյալներով մեր կոլտնտեսություններն ունեյին հանրայնացված՝ Հայաստանի կովերի ընդհանուր քանակի* 9 *տոկոսը, աշխատող անասունների* 20 *տոկոսը, ցանքսերի* 23 *տոկոսը, վոչխարների* 19 *տոկոսը: Պետք է ասել, վոր նոր շինարարության գծով, մանավանդ անասնապահական շրջաններում կոլեկտիվ տնտեսությունները* 1931 *թվին շատ քիչ, ուղղակի աննշան բան արին: Պետք է անմիջապես սկսել յուրաքանչյուր կոլտնտեսության այս տարվա արտադրական պլանի կազմումը և մասսայական քննությունը, խնդիր դնելով լայնացնել կոլտնտեսության արտադրությունը բոլոր գծերով, սկսել նոր շինարարություն, սկիզբը դնել տնտեսության նոր ճյուղերի, մանավանդ զարկ տալ բոլոր գծերով ապրանքային ֆերմաների կազմակերպմանը և կառուցմանը՝ առաջատար սկզբունք դնելով՝ ամենից առաջ ապահովել պրոլետարական պետության առաջ յուրաքանչյուր կոլտնտեսության պարտականությունների կատարումը: Վերջնականապես պետք է կանոնադրությամբ ձևակերպել դեռևս չձևակերպված և կանոնադրությունը լրիվ չիրագործող կոլտնտեսությունները՝ կատարելով կանոնադրության բոլոր կետերը՝ ամենից առաջ կոլտնտեսության անբաժանելի ֆոնդեր ստեղծելու ուղղությամբ:*

Վեցերորդ՝ *աշխատանքի ճիշտ կազմակերպման տարրական պայմանը կոլտնտեսությունները ամուր և վստահելի ղեկավար կադրերով ապահովելն է և հաշվառքի կազմակերպումը կոլտնտեսություններում. մինչդեռ այս գծով նույնպես շարունակում ենք կաղալ. պետք ընդունենք, վոր մինչև վերջերս կուսակցական կազմակերպությունները անուշադիր վերաբերմունք են ցույց տվել կոլտնտեսային կադրերի ընտրման և ամրացման գործին: Այժմ, յերբ կոլտնտեսությունները միացնում են արդեն մեր բոլոր գյուղական տնտեսությունների* 40 *տոկոսը, յերբ բարդանում և դժվարանում է կոլտնտշարժման ղեկավարումը, պետք է պահանջենք կոլտնտշարժման համար տրամադրել բոլոր գյուղերում և շրջաններում ամենաուժեղ, ամենակայուն և կարող բոլշևիկների: Չի կարելի մատների արանքով նայել կոլտնտեսության բրիգադիրի, վարչության անդամի, նախագահի ընտրության գործին: Շրջանային կուսակցական և կոլտնտեսային օրգանները պետք է առաջիկա ամսում վերանայեն կոլտնտեսային կադրերը ներքևից մինչև վերև՝ ապահովելով կոլտնտեսության բոլոր օղակներում ամուր ղեկավարություն,* համարձակ առաջ քաշելով ղեկավար աշխատանքի՝ արդեն յեռանդուն, աշխատանքում փորձված հարվածային

կոլտնտեսականների: Կոլտնտկենտրոնը Կենտկոմի հաստատած պլանով պետք է անհապաղ ձեռնամուխ լինի կոլտնտեսային կադրերի վերապատրաստման գործին՝ ամենից առաջ նպատակ դնելով ապահովել բոլոր կոլտնտեսությունները հաշվապահական անհրաժեշտ կադրերով:

Ընկերներ, կոլտնտշինարարության աճումը ջախջախիչ հարվածներ տվեց դասակարգային թշնամուն. բայց շարունակվում է, և վորպես պատասխան մեր արագատեմպ հարձակման, տեղ-տեղ ավելի ակտիվանում է դասակարգային թշնամու դիմադրությունը. այդ դիմադրությունն արտահայտվում է մեռնող դասակարգերի կողմից վոչ միայն կոլտնտեսությունների գույքի հրկիզման, ակտիվ, լավագույն կոլտնտեսականների սպանության, մահափորձերի միջոցով. այդ դիմադրությունն արտահայտվում է նաև կոլտնտեսության ներսում, ուր դասակարգային պայքարի էլեմենտներ դեռ տեղ են գտնում: Կուլակային դաշնակցական էլեմենտների դիմադրությունը մեր առաջխաղացման դեմ՝ կոլտնտեսություններում արտահայտվում է զանազան ձևերով. աշխատանքի թույլ կազմակերպումը կոլտնտեսություններում, աշխատանքից խուսափելը, ծուլությունը կուլակի ազդեցության արտահայտությունն են. դրվողական, կորզողական ձգտումները պրոլետարական պետության հանդեպ, ստացած վարկերը ժամանակին չվերադարձնելը, վարկերը ըստ նպատակին չծառայեցնելը կուլակի ազդեցության արտահայտությունն են կոլտնտեսությունում. մթերումների պլանի կատարման դիմադրելը, սպառողական կարիքների հոգալուն առաջին տեղը տալը՝ փոխանակ ամենից առաջ բանվոր դասակարգի նկատմամբ իր պարտքը կատարելու՝ կուլակային ազդեցության արտահայտությունն են կոլտնտեսություններում. հավասարեցման, դիմազրկության յերևույթները կոլտնտեսությունում՝ ջուր են ավելացնում կուլակի ջրաղացին. կանանց աշխատանքի թերագնահատումը, արտադնացների աշխատանքին դեմ դուրս գալը՝ կուլակային տրամադրու-

թյուններ են: Տեսնում եք, ընկերներ, արտահայտության ինչպիսի բազմազան ձևեր է գտնում կուլակի դիմադրությունը կոլտնտեսությունների ամրացմանը: Առանց վճռական պայքարի, առանց հայտաբերելու և տեղնուտեղը դիմակազերծ անելով ջախջախելու կուլակային ազդեցության վերոհիշյալ և այլ արտահայտությունները կոլտնտեսություններում՝ անհնար է կոլտնտեսությունների իրական ամրացումը: Կոլտնտեսությունների ամրացումը հնարավոր է միմիայն պայքարի և բոլշևիկյան ղեկավարության միջոցով. յեթե ինքնահոսն առհասարակ ամենախորթ և անհարազատ յերևույթն է բոլշևիկյան աշխատանքի և ղեկավարության մեթոդների համար, ապա ինքնահոսն ուղղակի կործանիչ ֆակտոր է ամենից առաջ կոլտնտշինարարության մեջ, ուր դասակարգային թշնամին անմիջապես օգտվում է մեր ամեն մի սխալից ու սայթաքումից:

Կոլտնտեսային շինարարության բոլոր պահակներից, յուրաքանչյուր կոլտնտեսականից պահանջվում է բարձր պահել դասակարգային զգոնությունը. կուլակը և նրա գործակալները փորձ են անում սողոսկել կոլտնտեսություն՝ այն ներսից պայթեցնելու համար. տվյալներ ունենք այն մասին, վոր օգտվելով մեր տեղական կազմակերպությունների անուշադիր վերաբերմունքից, մանավանդ ուր վազել են տոկոսների հետևից, կուլակին և նրա գործակալներին հաջողվել է այս կամ այն չափով խցկվել կոլտնտեսություն. Եջմիածնի Հայթաղ գյուղում հենց վոր 5 խորթ տարրեր հաջողեցին կոլտնտեսություն մտնել՝ նկատվեցին կոլտնտեսությունից դուրս գալու նշաններ. Եջմիածնի, Ապավնատուն, Խզնաուզ, Աղջաղալա, Գոխս, Գրամփա և Սամաղար գյուղերի կոլտըտեսություններում նկատվում է կուլակային տարրերի ներկայությունը և աշխատանքը: Իջևանի շրջանի Լալիքենդ գյուղում նոյեմբերին կոլտնտեսություն են խցկվել մոտ 10 խորթ էլեմենտներ. նույնը նաև Սև-Քարում: Աղբաբայի շրջանում կոլտնտեսություններում հայտաբերվել են 59 կու-

լտկ-ուռճացած տնտեսություններ, Արթիկի շրջանի կոլտնտեսություններում 65 խորթ անձինք, Լենինականում 57 խորթ էլեմենտներ, վորոնցից 25-ը նախկին կուլակներ: Շահրիարի կոլտնտեսությունում նստած են 4 նախկին կուլակներ և այլն, և այլն: Մի՞թե պարզ չէ, թե ինչու այդպիսի մեծ ցանկությամբ կուլակը կամ նախկին կուլակը ձգտում է կոլտնտեսություն մտնել: Պետք է լինել զգույշ, զգոն և ուշադիր: Կուլակային տարրերին, կոլտնտեսությունը քայքայող տարրերին պետք է դուրս շպրտել կոլտնտեսականների շարքերից: Նոր ընդունելությունների ժամանակ չպետք է տարվել քանակով: Չպետք է յերբեք մոռանալ, վոր տվյալ շրջանում հիմնականը՝ արդեն կազմակերպված կոլտնտեսությունների ամրացումն է:

Բայց վոր մեր ընկերները շատ դեպքերում մոռանում են այս հիմնական ճշմարտությունը՝ այդ մասին վկայում են փաստերը: Յեվ վոչ միայն մոռանում են, այլև վորոշ դեպքերում շարունակում են այս կամ այն ձևով տուրք տալ «ձախ» ռեցեդիվներին, խախտել կոլտնտշարժման կամավորության սկզբունքը. Բասարգեչարի Սարիյաղուբ գյուղում գյուղխորհրդի նախագահն անցյալ հոկտեմբերին ուռճացածների շարքն եր դասել բոլոր այն միջակ տնտեսություններին, վորոնք հրաժարվում եյին առայժմ կոլտնտեսություն մտնել: Նույն շրջանի Ղրխբուլաղում շրջանային կենտրոնի ներկայացուցիչը, խոստանում եր ազատել բոլոր հարկերից նրանց, ովքեր կոլտնտեսություն կմտնեն: Դիլիջանի շրջանի Թոխլուջա գյուղում կոլտնտեսության նախագահը և գյուղխորհրդի նախագահը նոյեմբեր ամսին գիշերները տնետուն եյին շրջում և հարկադրում գյուղացիներին անմիջապես կոլտնտեսություն մտնել՝ սպառնալով հակառակ պարագայում նրանց կուլակների շարքը դասել և այլն, և այլն: Կարելի յե դեռ յերկարացնել այս խայտառակությունների շարանը: Նրանք կասկած չեն թողնում այն մասին, վոր տեղերում մինչև այժմ էլ դեռ շարունակվում են «ձախ» ոպորտունիստա-

ների քյալլագյոզությունները, և կուսակցության քաղաքականությունը վարկաբեկող ոպորտունիստները վորոշ դեպքերում նույնիսկ մնում են անպատիժ: Ժամանակը չէ՞ արդյոք վճռական միջոցներով վերջ դնել այս խայտառակություններին՝ ապահովելու համար կուսակցության գծի անաղարտությունը գյուղական աշխատանքներում: Միայն ծավալելով բայլշևիկյան պայքար գլխավոր վտանգ աջ թեքման դեմ, վոր չի տեսնում կուլակի դիմադրությունը և ինքնահոսի յե թողնում կոլտնտեսության ամրացման աշխատանքները,— և «ձախ» թեքման դեմ, վոր խախտելով լենինյան սկզբունքները, կոլտնտշինարարության մեջ և դատարկախրճչյուն «տոկոսների» հետևից վազելով՝ նույնպես խանգարում է կոլտնտեսությունների ամրացման աշխատանքները՝ հնարավոր են նոր հաղթանակներ կոլտնտեսական շինարարության մեջ:

Մի անգամ էլ կրկնենք, ընկերներ, ուշադրությո՛ւն կոլտնտեսության աշխատանքի կազմակերպման ու բերքի բաշխման գործին: Նախանցյալ տարի բերքի բաշխումը հիմնականում կատարվեց «ըստ ուտող շնչերի» մանր-բուրժուական կուլակային սկզբունքի. իսկ անցյալ տարի, չնայած կուսակցության վճռական վորոշումներին, տեղ-տեղ դեռ շարունակվում եր բերքի «հավասար» բաշխումը՝ ծանր հարված տալով կոլտնտեսությունների ամրացմանը. այսպես.—

Բոյուք-Վեդու կոլտնտեսությունում գործավարձի սիստեմը բոլորովին գոյություն չի ունեցել: Կոլտնտեսության ցանքը միայն բամբակն է յեղել, իսկ մյուս բոլոր ցանքերն ու անասունները յեղել են կոլտնտեսականների անհատական սեփականությունը, ուստի և կոլտնտեսականները գնացել են իրենց աշխատանքին ու ձգձգել կոլտնտեսության աշխատանքները: Այս պատճառով էլ, աշխատանքի դուրս բերելու համար աշխորը չռայլվել է, և 4000 աշխորի աշխատանքը կատարվել է 6,650 աշխորում և ցանկալի արդյունք չի ստացվել:

Բլաղդադինի գյուղի կոլտնտեսությունը (Ստեփանավանի շրջան), վոր բաշխելու համար ունի 13,995 ռ. և պետք է բաժանի 6,900 աշխօրի վրա (աշխօրը 2 ռ.), առ 20-ը հոկտեմբերի ամեն մի աշխօրի դիմաց ավանսավորել է մոտ 4 ռ., ընդհանուր հաշվով՝ 24,143 ռ., կամ՝ կոլտնտեսականները 10,000 ռուբլի ավելի յեն վերցրել, քան աշխատել են։

Մի շարք կոլտնտեսություններում (Վարանցովկա, Մարտունի) միայն վարչական ապարատը կլանում է աշխօրերի 8–10 տոկոսը։ Սարատովկայի կոլվարչության ապարատը բաղկացած է 10 հոգուց, վորոնք արտադրական վոչ մի աշխատանք չեն կատարում և տարեկան 4–5000 ռ. յեն կլանում։ Ստեփանավանի կոլտնտեսությունում ապարատի վրա ծախսումը հասնում է աշխօրերի 14 տոկոսին։

Ոպորտունիստական տարրերի առկայությամբ և կուլակի անմիջական ազդեցությամբ պետք է բացատրել այն խայտառակ յերևույթը, յերբ Ղամարլուի շրջանի Ջրաշեն, Տոփրուլաղ, Բիթլիջա գյուղերում ավանսը տրվում է ըստ ծխերի, նույն շրջանի Բիրալու, Տոփրուլաղ, Ջաննաթլու գյուղերում բերքի բաշխումը (մասնավորապես ցորենի) հաճախ կատարվել է վոչ միայն ըստ ծխի, այլ նույնիսկ ըստ պահանջի։ Վոր գործավարձի անտեսումն ու յեկամուտն ըստ ծխի բաշխելը կործանարար հետևանք է ունենում՝ յերևում է թեկուզ հենց Ջաննաթլուի կոլտնտեսության օրինակից, ուր թե հավասարեցման և թե բերքն ըստ կարիքի բաշխելու պատճառով կոլտնտեսականների մեջ մեռել է ինիցիատիվը, և մեծ քանակությամբ բերք՝ խաղող, ծխախոտ, գարի, սիսեռ մնացել է դաշտերում։

Դեռ անցյալ տարի ընկ. Ցակովլեվը հայտարարեց, վոր աշխատանքի սխալ հաշվառումը տանում է դեպի բերքն ըստ ծխերի բաշխելու կուլակային պրակտիկան։

Վերցնենք նույն Ջաննաթլուի, կամ Դիլիջանի շրջանի Գոլովինո գյուղի կոլեկտիվների փորձը։ Գոլովինոյում մինչև նոյեմբեր ամիսը, աշխատանքի ամենայեռուն շրջանում

կոլտնտեսականներն աշխգրքույկներ չեն ունեցել։ Ջաննաթլուի կոլտնտեսականների աշխգրքույկներում 2 ամիս շարունակ գրանցումներ չեն կատարվել։ Ուրեմն, ինչքան էլ ուզում է աշխատանքը գործավարձով կատարված լինի՝ այսուամենայնիվ քանի վոր աշխօրերը հաշվի առնված չեն, կոլտնտեսությունը կամա թե ակամա պետք է բռնի բերքն ըստ ծխի բաշխելու ուղին՝ սիմուլյանտներին, ծույլերին լավագույն հարվածայինների հաշվին կերակրելու կործանարար ուղին։

Այդպես է արված այդ կոլտնտեսություններում։

Միրզախանի (Ղուրդուղուլու շրջան) կոլտնտեսությունը բոլորին հավասար կերպով է ավանսավորել, վորովհետև նախագահի կարծիքով «բոլոր կոլտնտեսականները միահավասար են աշխատում»։

Բաշգյառնու շրջանի Վողջաբերդ գյուղի կոլտնտեսությունը կազմակերպվել է 1931 թ. սկզբներից։ Նոր մտնողներն աշնանացանը չեն մխացրել։ Բերքը բաշխել են հավասար կերպով, առանց հաշվի առնելու յուրաքանչյուր կոլտնտեսականի աշխօրերի թիվը, վորի պատճառով ծույլերը շատ անգամ ավելի յե ստացել, քան հարվածայինները։ Օրինակ՝ 250 աշխօր ունեցող հարվածային Արմենակ Գրիգորյանը վոչինչ չի ստացել, իսկ 35 աշխօր ունեցող ծույլ Արմենակ Ավետիսյանն ստացել է 20 փութ ցորեն։

Կարիք կա՞ շարունակել փաստերի շարանը։ Մի՞թե պարզ չէ, վոր շարունակել այսպես՝ նշանակում է օգնել կուլակին։ Մի՞թե ժամանակը չէ պահանջել տեղական կուսակցական, խորհրդային, կոլտնտեսային կազմակերպություններից վոչ թե խոսքով, այլ գործով ապահովել կուսակցության դիրեկտիվների կատարումը կոլտնտշինարարության մեջ։

Ընկերնե՛ր,—Յես կանգ առա գլխավորապես կոլտնտշարժման ներկա դրության բացասական կողմերի վրա՝ հասկանալի պատճառով։ Սխալ կլիներ կարծել, թե չունենք կոլտնտեսություններ, վորոնք բոլշևիկորեն պայքարել են ու

դայքարում են պլանների կատարման, կոլտնտեսությունների ամրացման համար: Կարելի յե բերել տասնյակ օրինակներ.այս ձեզ Ղարաքիլիսայի շրջանի Հաջի-Ղարա գյուղի կոլտնտեսությունը: Նա կազմակերպված ե 1928 թվին. անցյալ տարի ունեցել ե 92 տնտեսություն՝ 268 գլուխ խոշոր յեղջյուրավոր անասուն, 377 գլուխ մանր յեղջյուրավոր անասուն, 43 խոզ, 51 փեթակ մեղու, իսկ այս տարի ունի 334 տնտեսություն (գյուղի 100 տոկոսը), 893 գլուխ խոշոր յեղջյուրավոր անասուն, 1543 գլուխ մանր յեղջյուրավոր անասուն, 9 խոզ և 300 փեթակ մեղու:

Անցյալ տարի ունեցել ե հնձող մեքենա 1, քամհար 4, գութան 16, զիգզագ 4, իսկ այս տարի ունի հնձող մեքենա 2, քամհար 6, գութան 36, զիգզագ 9 և այլ մեքենաներ 9:

Հաջի-Ղարայի կոլտնտեսությունն անցյալ տարվա կառուցած մեկ օրինակելի գոմի վրա այս տարի ավելացրել ե ես 1 գոմ՝ 200 գլուխ կովի համար, 12,000 փութ տարողությամբ 1 հատ հացահատիկի պահեստ, 1 գոմ 400 գլուխ վոչխարի համար, 1 մեղվանոց, 5 սենյակից բաղկացած մի դպրոց, հանել ե մեկ առու և կառուցում ե դեպի Ղարաքիլիսա տանող մի խճուղի:

Ընթացիկ տարում ստացած 10,933 ռ. 93 կ. վարկը 100 տոկոսով վերադարձրել ե: Բացի պանրի պլանից, Հաջի-Ղարայի կոլտնտեսությունը կատարել ե բոլոր մթերումների պլանները. պարտաճանաչ ե յեղել նաև վարկերի հանձնման նկատմամբ, կատարել ե վորոշ շինարարություն: Հաջի-Ղարայի կոլտնտեսության փորձը ցույց ե տալիս, թե ինչպես լավ կազմակերպված կոլտնտեսությունը, կատարելով հանդերձ իր պարտականությունները պետության հանդեպ՝ հնարավորություն ունի մեծապես բարձրացնելու նաև կոլտնտեսության պարտաճանաչ անդամների նյութական կենցաղային պահանջների բարելավման գործը: Ահա ձեզ Հաջի-Ղարայի կոլտնտեսական Սարգիս Մելքոնյանի հայտարարությունը.—«Սրանից 2 տարի առաջ ունեյի 2 յեզ, բայց չեյի

կարողանում տարվա ուտելու հացը ձեռք բերել, իսկ կաթից, յուղից ու պանրից զուրկ եյի: Հիմա կոլեկտիվում աշխատել եմ 334 օր և ստացել եմ 25 կիլո պանիր, 9 կիլո յուղ, 4 կիլո մեղր, 2 կիլո բուրդ, 30 փութ կարտոֆիլ, 68 կիլո կաղամբ. պատրաստել եմ մի քանի ձեռք անկողին, հագուստ, իսկ յերեխեքս դպրոց են գնում»:

Արտեմ Աշրաֆյանը 2 տարի առաջ յեղել ե միջակ տնտեսության տեր, 8 շունչ ընտանիքով ապրել ե մի փոքր ու մութ սենյակում: Կոլտնտեսություն մտնելով՝ ընտանիքի անդամների հետ միասին ունի 930 աշխոր, վորի դիմաց ստացել ե 2 փութ յուղ, 83 կիլո պանիր, 13 կիլո մեղր, 44 փութ կարտոֆիլ, 8 փութ կաղամբ: Կոլեկտիվ մտնելուց հետո շինել ե մի տուն, ձեռք ե բերել միքանի հատ սեղան, աթոռ և մահճակալ:

Գորիս գյուղի կոլտնտեսական (նախկին միջակ տնտեսատեր) Հայկ Մաշադյանին բաժին ե հասել 7 փութ պանիր, 2 ու կես փութ յուղ, 150 փութ հացամթերք: Բացի այդ, 1931 թվին արտադրնացությամբ 700–800 ռ. աշխատավարձ ե ստացել:

Վարդանլու—Առաքելյան Խաչիկը, վոր առաջ 9–10 տարի շարունակ բատրակ ե յեղել ու մի լավ օր չի տեսել, կոլտնտեսություն մտնելով հիմա ունի 349 աշխոր, ստացել ե 27 կիլո յուղ, 85 կիլո պանիր, 381 կիլո կարտոֆիլ, և ակտիվ կերպով մասնակցել ե գյուղի սոցիալիստական շինարարական աշխատանքներին: Բացի այդ, կոլտնտեսությունը նրա համար մի նոր տուն ե շինել:

Աբգար Անդրեասյանը, վոր առաջ շատ վատ եր ապրում, յուղի պանրի յերես չեր տեսնում, կոլտնտեսություն մտնելով՝ հիմա լավ բավարարված ե. ունի 363 աշխոր, ստացել ե 27 կիլո յուղ, 57 կիլո պանիր, 383 կիլո կարտոֆիլ. Նրա կինը հարվածային աշխատող ե և պարգևատրված. բավարարված ե շաքարով, օճառով և մանուֆակտուրայով: (բուռն ծափեր):

Կուլակ-դաշնակ էլեմենտները կոլտնտեսության դեմ ուղղված իրենց կատաղի պայքարում փորձում են վախեցնել կոլտնտեսություն մտնող աշխատավոր գյուղացիներին սովի և կարիքի հեռանկարով: Մեր լավագույն կոլտնտեսությունների փորձը ցույց է տալիս, վոր աշխատավոր գյուղացու համար սովի, կարիքի, թշվառության, կուլակի շահագործման ճիրաններից ազատվելու միակ միջոցը կոլեկտիվ աշխատանքն է, կոլտնտեսություն մտնելն է և հարվածային աշխատանքով կոլտնտեսության ամրացումը: Պետք է լայն տարածել ու մասսայականացնել մեր լավագույն կոլտնտեսությունների աշխատանքի կազմակերպման փորձը, նրանց հաջողություններն ու հաղթանակները, բերքի բաշխման արդյունքները: Լավագույն կոլտնտեսությունների որինակով պետք է վարակվեն և առաջ շարժվեն հետ մնացողները: Առաջավոր կոլտնտեսությունների և լավագույն կոլտնտեսությունների կենդանի որինակի վրա դեռ կոլտնտեսություն չմտած աշխատավոր գյուղացիները պետք է համոզվեն կոլեկտիվ, սոցիալիստական աշխատանքների առավելությունների վրա:

Ընկերներ, Կենտկոմը հաստատեց այս գարնան գյուղատնտեսական կամպանիայի պլանը. այդ պլանով կոլտնտեսային սեկտորի վրա ընկնում են խոշորագույն պարտականություններ, կոլտնտեսությունները կամպանիայի հենց սկզբից այնպես պիտի տանեն աշխատանքները, վորպեսզի պլանի քանակն ապահովելով բոլոր գծերով՝ հիմնական ուշադրությունը նվիրված լինի վորակի խնդիրներին: Կատարելով գյուղատնտեսական կամպանիայի պլանը և ամրացնելով կոլտնտեսությունները՝ մենք կկարողանանք կենսագործել կուսակցության դիրքավորումը՝ բամբակացան շրջաններում այս տարի հիմնականում ավարտելու համատարած կոլեկտիվացումը և այդ հիման վրա կուլակության լիկվիդացիան՝ վորպես դասակարգ, կոլեկտիվացման յենթարկելու մինչև տարվա վերջը մեր գյուղի 50–55 տոկոսը, յերբեք չիջեցնելով

ուշադրության կենտրոնից կոլտնտեսությունների ներքին ամրացման կարևորագույն խնդիրները:

Բոլշևիկյան պայքար ծավալելով կուլակի և նրա ագենտների դեմ, դաշնակ թափթփուկների դեմ, աջ և «ձախ» ոպորտունիստների դեմ, Հայաստանի Կոմունիստական Կուսակցությունը՝ հիմնական ուշադրությունը կենտրոնացնելով կոլտնտեսությունների ամրացման խնդիրների վրա, այս տարի ձեռք է բերելու նոր, ավելի փայլուն հաղթանակներ գյուղի սոցիալիստական վերակառուցման բնագավառում: (Բուռն, յերկարատև ծափեր):

ԳՅՈՒՂՆ ՈՒՇԱԴՐՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆՈՒՄ

Ընկերնե՛ր.—Իր հոկտեմբերի 31-ի վորոշման մեջ Կենտկոմը, ինչպես հայտնի յե, վորպես ամենագլխավորը մեր կատարած սխալներից՝ մատնանշեց գյուղացիական հարցում կատարված սխալը: Կենտկոմն ընդգծեց, վոր Անդրերկոմը և ազգային կոմկուսների կենտկոմները նշանակելի աշխատանք ծավալելով գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման ուղղությամբ, ընդգրկել են աշխատանքի առավելապես տեխնիկական կողմը, չեն ապահովել գյուղացիության (չքավոր, միջակ մասսաների) քաղաքական ճիշտ ղեկավարությունը: Այդ սխալն իր արտահայտությունը գտավ մթերումների և կոլեկտիվացման բնագավառում: Հետադարձ ակնարկով ընդգրկելով Հայաստանի գյուղի քաղաքական դրությունը վերջին մեկ ու կես տարվա ընթացքում, պետք է յեզրակացնենք, վոր չնայած հսկայական աշխատանքին, վոր ծավալեցինք գյուղում՝ կայունացնելու համար դրությունը 30 թ. գարնան դեպքերից հետո, չնայած համեմատական մի շարք հաջողություններին, վոր ունենք այդ գծով, դրությունը Հայաստանի գյուղում 1931 թվին ամբողջապես համապատասխանում եր այն խիստ գնահատականին, վոր տվեց Համկոմկուսի Կենտկոմն իր վորոշման մեջ. իսկ Կենտկոմն արձանագրեց՝ «չնայած վոր Անդրկովկասի գյուղացիության հիմնական մասսաները շրջադարձ են կա-

տարել գծալի գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցումը, կուլակային և հակախորհրդային տարրերը հնարավորություն են տալիս օգտագործել կատարված սխալները և շեղումները՝ գյուղում իրենց ազդեցության ուժեղացնելու համար»։

Հաշվետու շրջանում գյուղը յեղել է և մնացել է մեր աշխատանքների և ուշադրության կենտրոնում. և դա բնական է. անհրաժեշտ էր վերանայել և ուժեղացնել շրջանային և գյուղական աշխատողների վողջ կազմը, մանավանդ 30 թվի գարնան դեպքերից հետո, անհրաժեշտ էր վճռական միջոցներով վոչնչացնել դաշնակ-բանդիտային մի շարք խմբակներ, վորոնք իրենց շահատակություններով խանգարում էին աշխատավոր գյուղացիության խաղաղ աշխատանքը, անհրաժեշտ էր բարձրացնել գյուղի կուսակցական, խորհրդային, հասարակական կազմակերպությունների քաղաքական ակտիվությունը և աշխատանքի վորակը՝ ապահովելու համար գյուղի սոցիալիստական վերակառուցման աշխատանքների հաջող ընթացքը։ Ինչքան էլ աչքի ընկնող են այս գծով կատարված աշխատանքները, պետք է սակայն ընդունենք, վոր հաշվետու շրջանում բազմաթիվ շրջաններում կատարված սխալները գյուղացիական հարցում՝ բավական հող թողին դասակարգային թշնամու, կուլակային և հակախորհրդային տարրերի աշխուժացման համար։

Վերցնենք մթերումները. Նրանք շատ ուժեղ զենք են գյուղում մեր կուսակցության դասակարգային քաղաքականությունը կիրառելու համար, պայմանով, վոր, սակայն, նրանք կազմակերպվեն կուսակցության դիրեկտիվների համաձայն — պարտադրության, ամուր առաջադրանքի կարգով գյուղի կապիտալիստական վերնաշերտերի, կուլակ-ունեցած տնտեսությունների նկատմամբ. կոնտրակտացիայի, մասսայական բացատրական աշխատանքի կարգով՝ աշխատավորական տնտեսությունների նկատմամբ։ Մթերումների կազմակերպման այս ամենատարրական պահանջը մինչև 31 թվի աշնանը կոպիտ կերպով խախտված է յեղել բազմաթիվ

շրջաններում. Դարալագյազում, Վեդիում և մի շարք այլ շրջաններում, մթերումների ժամանակ վարչական միջոցների կիրառումը չքավոր-միջակ տնտեսությունների նկատմամբ գրեթե ընդհանուր յերևույթ է յեղել։ Փոխանակ ծավալելու մասսայական-քաղաքական լայն աշխատանք, կամավոր հիմունքներով կազմակերպելու համար մթերումները, մթերող օրգանները և գյուղական ու շրջանային աշխատողները գերադասում էին աշխատանքի «հեշտ» ձև—հասցնել մթերումների պարտադիր պլանը մինչև չքավոր-միջակ տնտեսություն, մթերման պլանները մեքենայորեն բաշխել գյուղերի միջև, առանց նկատի ունենալու առանձին գյուղերի հնարավորությունները և առանձնահատկությունները։ Մթերման կենտրոնական օրգանների բյուրոկրատիկ անհոգությունը և շրջանային կուսակցական ու խորհրդ. օրգանների անուշադրությունը և նրանց կողմից մթերումների նկատմամբ կոնկրետ ղեկավարության բացակայությունը հնարավորություն էին տալիս մթերող օրգանները խցկված զանազան բախտախնդիրների և խորթ էլեմենտների՝ ամենախայտառակ կերպով խախտել կուսակցության քաղաքականությունը չքավոր և միջակ գյուղացու նկատմամբ, ծաղրի և ճնշման յենթարկել միջակ գյուղացուն։

Մթերումների ասպարեզում կատարված խայտառակությունների ամենացայտուն օրինակը հանդիսանում է Դարալագյազը, ուր և փորձ արին Արփա գյուղի այլասերված հակահեղափոխականացած կոմունիստները՝ պրովոկացիայի յենթարկել գյուղացիների դժգոհությունը։ Դարալագյազի դասերը կուսակցության բոլոր կազմակերպությունների համար լայն քննության առարկա յեղան. Դարալագյազի կուսակցական և խորհրդային նախկին ղեկավարները վտարվեցին կուսակցության շարքերից։ Թվում էր, թե մեր բոլոր կազմակերպությունները գործնական յեզրակացություններ պետք էր անեին դրանից՝ ապահովելու համար մթերումների ընթացքում կուսակցության գծի անշեղ կենսագործու-

մը, սակայն փաստերն ապացուցում են, վոր Դորալագյաղի դեպքերից հետո ել այս աշնան մթերումների ընթացքում թե տեղական և թե կենտրոնական օրգանների կողմից կատարվել են հանցանքի սահմանին հասնող թերացումներ ու աղավաղումներ:

Կարիք չկա օրինակներ բերել այն մասին, թե ինչպես գրեթե բոլոր շրջաններում առանձին միջակ և նույնիսկ չքավոր գյուղացիներ ստանում եյին հացամթերումների և այլ մթերումների գծով պարտադիր առաջադրանքներ այն ժամանակ, յերբ նույն գյուղերում հազար ու մի մեքենայություններ դիմելով՝ կուլակ-ունեւացած առանձին տնտեսություններ ազատվում եյին պարտադիր առաջադրանքներից:

Այդ խայտառակությունից բացի, չնայած Կենտկոմի բազմաթիվ նախազգուշացումներին, կենտրոնական մթերող օրգանները—Այգլինկոոպը, Հացանասնապահական միությունը, Սայուզմյասոն, Սոյուզխլեբը և այլն՝ դեռ մինչև վերջերս ել չկարողացան վերակառուցվել, դեռ չզտել իրենց սիստեմից բյուրոկրատական և օպորտունիստական ելեմենտներին, կատարել իրենց վրա դրված պարտականությունները գյուղացիների նկատմամբ՝ կատարված մթերումների դեմ: Ի՞նչ անուն տալ այդ խայտառակությանը, յերբ կատարված մթերումների դեմ ամիսներով Այգլինկոոպը և «Արարատը» չեն վճարում այգեգործ գյուղացիներին և կոլտնտեսություններին՝ նրանց հասանելիք գումարները: Ի՞նչ անուն տալ այն խայտառակությանը, յերբ Մատժողկոմատը և Հայկոոպը մթերումների դիմաց խոստանալով գյուղացիներին և կոլտնտեսականներին վորոշ չափով արդյունաբերական ապրանքներ՝ ամիսներով քաշքշում են իրենց խոստման կատարումը նույնիսկ այն ժամանակ, յերբ բոլոր հնարավորություններն ունեն կատարելու տրված խոստումները: Չենք կարող չարձանագրել, վոր նույնիսկ Համկոմկուսի Կենտկոմի վերջին նախազգուշացումից հետո ել, կենտրոնական մթերող օրգանները տեղից չշարժվեցին՝ կատարելու

համար իրենց պարտքը գյուղացիների հանդեպ, մթերումների գծով: Կենտկոմն իր վերջին վորոշման մեջ, նշելով այս ասպարեզում գոյություն ունեցող խայտառակությունները՝ առաջարկեց համապատասխան օրգաններին՝ մի ամսվա ընթացքում կատարել բոլոր վճարումները գյուղացիներին՝ դրամով և արդյունաբերական ապրանքներով: Իրավացի չե՞նք լինի արդյոք, յեթե կուսակցությունից վտարենք և դատի տանք բոլոր նրանց, անկախ դիրքից և կոչումից, վորոնք Կենտկոմի վերջին նախազգուշացումից հետո ել կթերանան իրենց պարտականությունների կատարման մեջ, այդպիսով իսկ պայմաններ ստեղծելով դասակարգային թշնամու աշխուժացման համար գյուղում:

Դասակարգային գծի խախտումները միայն մթերումների գծով չեն սակայն, վոր կատարվում են. նույն յերևույթները աչքի յեն ընկնում նաև ֆինանսական աշխատանքների բնագավառում. գյուղական հարկի ընդհանուր գումարի, ինչպես նաև գրեթե բոլոր մթերումների մեկ-յերրորդ մասն ընկնում ե գյուղի կուլակ-ունեւացած տնտեսությունների վրա. այդ բնական ե և ճիշտ. սակայն հարկադրման կոնկրետ աշխատանքների ժամանակ հաճախ ե պատահում, յերբ առանձին միջակ տնտեսություններ ընկնում են անհատական հարկադրման տակ այն ժամանակ, յերբ իսկական կուլակը, օգտվելով տեղական օրգանների «կուրությունից», ճողոպրում ե հարկային պրեսից:

Այսպիսով, կարող ենք յեզրակացնել, վոր գյուղական աշխատանքների հիմնական խնդիրը մնում է՝ դասակարգային ճիշտ քաղաքականության կիրառման ապահովումը տեսնել և տնտեսական ու քաղաքական ծայրագույն ճնշման յենթարկել կուլակությունը, մինչև նրա լիկվիդացիան համատարած կոլեկտիվացման շրջաններում, չշփոթել սակայն կուլակի հետ միջակ գյուղացուն, վորի նկատմամբ մերկապարանոց վարչարարությունն անթույլատրելի յե և հրում է նրան դեպի դասակարգային թշնամու գիրկը՝ կուլակի աչ-

մը, սակայն փաստերն ապացուցում են, վոր Դարալագյազի դեպքերից հետո էլ այս աշնան մթերումների ընթացքում թե տեղական և թե կենտրոնական օրգանների կողմից կատարվել են հանցանքի սահմանի հասնող թերացումներ ու աղավաղումներ:

Կարիք չկա օրինակներ բերել այն մասին, թե ինչպես գրեթե բոլոր շրջաններում առանձին միջակ և նույնիսկ չքավոր գյուղացիներ ստանում եյին հացամթերումների և այլ մթերումների գծով պարտադիր առաջադրանքներ այն ժամանակ, յերբ նույն գյուղերում հազար ու մի մեքենայությունների դիմելով՝ կուլակ—ուռճացած առանձին տնտեսություններ ազատվում եյին պարտադիր առաջադրանքներից:

Այդ խայտառակությունից բացի, չնայած Կենտկոմի բազմաթիվ նախազգուշացումներին, կենտրոնական մթերող օրգանները—Այգինկոոպը, Հացանասնապահական միությունը, Սայուզմյասոն, Սոյուզխլեբը և այլն՝ դեռ մինչև վերջերս էլ չկարողացան վերակառուցվել, դեն շպրտել իրենց սիստեմից բյուրոկրատական և օպորտունիստական էլեմենտներին, կատարել իրենց վրա վերցրած պարտականությունները գյուղացիների նկատմամբ՝ կատարված մթերումների դեմ: Ի՞նչ անուն տալ այդ խայտառակությանը, յերբ կատարված մթերումների դեմ ամիսներով Այգինկոոպը և «Արարատը» չեն վճարում այգեգործ գյուղացիներին և կոլտնտեսություններին՝ նրանց հասանելիք գումարները: Ի՞նչ անուն տալ այն խայտառակությանը, յերբ Մատժողկոմատը և Հայկոոպը մթերումների դիմաց խոստանալով գյուղացիներին և կոլտնտեսականներին վորոշ չափով արդյունաբերական ապրանքներ՝ ամիսներով քաշքշում են իրենց խոստման կատարումը նույնիսկ այն ժամանակ, յերբ բոլոր հնարավորությունները ունեն կատարելու տրված խոստումները: Չենք կարող չարձանագրել, վոր նույնիսկ Համկոմկուսի Կենտկոմի վերջին նախազգուշացումից հետո էլ, կենտրոնական մթերող օրգանները տեղից չշարժվեցին՝ կատարելու

համար իրենց պարտքը գյուղացիների հանդեպ, մթերումների գծով: Կենտկոմն իր վերջին վորոշման մեջ, նշելով այս ասպարեզում գոյություն ունեցող խայտառակությունները՝ առաջարկեց համապատասխան օրգաններին՝ մի ամսվա ընթացքում կատարել բոլոր վճարումները գյուղացիներին՝ դրամով և արդյունաբերական ապրանքներով: Իրավացի չե՞նք լինի արդյոք, յեթե կուսակցությունից վտարենք և դատի տանք բոլոր նրանց, անկախ դիրքից և կոչումից, վորոնք Կենտկոմի վերջին նախազգուշացումից հետո էլ կթերանան իրենց պարտականությունների կատարման մեջ, այդպիսով իսկ պայմաններ ստեղծելով դասակարգային թշնամու աշխուժացման համար գյուղում:

Դասակարգային գծի խախտումները միայն մթերումների գծով չեն սակայն, վոր կատարվում են. Նույն յերևույթները աչքի յեն ընկնում նաև ֆինանսական աշխատանքների բնագավառում. գյուղական հարկի ընդհանուր գումարի, ինչպես նաև գրեթե բոլոր մթերումների մեկ-յերրորդ մասն ընկնում է գյուղի կուլակ-ուռճացած տնտեսությունների վրա. այդ բնական է և ճիշտ. սակայն հարկադրման կոնկրետ աշխատանքների ժամանակ հաճախ է պատահում, յերբ առանձին միջակ տնտեսություններ ընկնում են անհատական հարկադրման տակ այն ժամանակ, յերբ իսկական կուլակը, օգտվելով տեղական օրգանների «կուրությունից», ճողոպրում է հարկային պրեսից:

Այսպիսով, կարող ենք յեզրակացնել, վոր գյուղական աշխատանքների հիմնական խնդիրը մնում է՝ դասակարգային ճիշտ քաղաքականության կիրառման ապահովումը տեսնել և տնտեսական ու քաղաքական ծայրագույն ճնշման յենթարկել կուլակությունը, մինչև նրա լիկվիդացիան համատարած կոլեկտիվացման շրջաններում, չշփոթել սակայն կուլակի հետ միջակ գյուղացուն, վորի նկատմամբ մերկապարանոց վարչարարությունն անթույլատրելի յե և հրում է նրան դեպի դասակարգային թշնամու գիրկը՝ կուլակի աջ-

խուծացման համար հող մատակարարելով: Անշեղ հարվածել և վոչնչացնել գլխավոր վտանգ աջ թեքումը, վոր չի տեսնում կուլակին, թերագնահատելով նրա վտանգը, ըստ եյության ամրացնում ե կուլակի դիրքերը, բայց ջախջախել նաև «ձախ» ոպորտունիզմը, վորը խախտելով միջակ գյուղացու նկատմամբ լենինյան քաղաքականությունը՝ հրում ե նրան մեզանից, այդպիսով իսկ ոգնելով աջ ոպորտունիստին՝ կուլակի դիրքերի ամրացման գործում:

Կուսակցության քաղաքականության գյուղում անշեղ կիրառման մի հիմնական պայմանը՝ գյուղական և շրջանային ապարատի բավարար անձնական կազմն ե: Պետք ե ասել, վոր հաշվետու շրջանում Կենտկոմը հաղթահարելով մեծ դժվարություններ, հիմնականում կարողացավ ապահովել շրջանային ապարատի համեմատաբար բավարար կազմը: Կենտրոնից շրջանային և մասամբ գյուղական մշտական աշխատանքի փոխադրվեցին մոտ 200 ընկերներ: Լավագույն կոլտնտեսականներից նույնպես մոտ 150–200 հոգի՝ առաջ քաշվեցին շրջանային աշխատանքի, սակայն յեթե համեմատաբար բավարար կարելի յե համարել շրջանային ապարատի կազմը, բացառաբար մի քանի շրջանների, ապա գյուղական ապարատը դեռ զգալի չափով հետ ե մնում այն բարդ պահանջներից, վոր դրվում են այսոր նրա առաջ: Գյուղական ապարատի կազմի թուլությամբ են բացատրվում դասակարգային գծի բազմաթիվ աղավաղումները տեղերում: Գյուղական ապարատի առանձին ողակների այլասերումը այնտեղ ե հասնում, վոր առանձին դեպքերում գյուղխորհրդի նախագահն աշխատանքի իր ձևերով և կոպտությամբ հիշեցնում ե նախկին քյոխվային, ինչքան ել ծանր լինի, բայց չենք կարող այստեղ չարձանագրել, որինակ, գյուղացիներին ծեծելու մի քանի դեպքերի ամենախայտառակ յերեվույթը գյուղխորհուրդների նախագահների կողմից (Նոր-Բայազետի շրջանի Ղշլաղ գյուղ, Վեդիի շրջանի Բյուչուկ-Վեդի գյուղ): Ժամանակը չե՞ արդյոք, ընկերներ, բոլշևիկորեն մոտենալ գյուղական ապարատի անձնական կազմի բարելավման, գյուղական ապարատի աշխատանքի վորակի բարձրացման աշխատանքներին: Ժամանակը չե՞ իրականում աշխուժացնել գյուղխորհրդի աշխատանքները, կյանքի կոչել Գ. Խ. սեկցիաները, վտարել գյուղական ապարատից այլասերված՝ կուսակցության քաղաքականությունը միջակ գյուղացու նկատմամբ խախտող, կուլակին պաշտպանող և միջակին կուլակի հետ շփոթող, ըստ եյության հակախորհրդային ելեմենտներին. Ժամանակը չե՞ ավելի համարձակորեն առաջ քաշելու գյուղապարատում աշխատելու նոր և թարմ ընկերների, կոլտնտեսային և կոմյերիտական ակտիվից, ժամանակը չե՞ չծանրաբեռնել միևնույն ընկերոջը և՛ գյուղխորհրդի նախագահի, և՛ կոլտնտեսության նախագահի, և գյուղբջջի քարտուղարի պարտականություններով, ինչպես այս տեսնում ենք ներկայումս ամեն քայլափոխում: Այո, ընկե՛րներ, գյուղական ապարատի բարելավման խնդիրը տվյալ շրջանի ամենակարևոր խնդիրներից մեկն ե: *Համադումարը պետք ե հանձնարարի կենտրոնական որգաններին և շրջանային կուսակցական կազմակերպություններին՝ անմիջապես գործնական միջոցներ ձեռք առնել՝ ջոկելու և ուժեղացնելու համար գյուղխորհուրդների նախագահների ու քարտուղարների կազմը, հատուկ կուրսեր կազմակերպել նրանց վերապատրաստման համար, բարելավել նրանց տնտեսական-կենցաղային դրությունը, աշխուժացնել գյուղխորհուրդների աշխատանքը:*

Ընկերնե՛ր, Համկոմկուսի 16-րդ համագումարը շեշտեց, վոր չքավորության մեջ կատարվող աշխատանքները պատշաճ բարձրության վրա դնելն անհրաժեշտ նախադրյալն ե հանդիսանում կուսակցության հաջող աշխատանքի, և գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման համար: Ցավ, չնայած դրան, սխալ չի լինի պնդել, վոր մեր գյուղական աշխատանքների ամենաթույլ ճակատամասը ներկայումս աշխատանքն ե չքավորության մեջ: Տարորինակ ե, բայց

ժյուտ է, ընկերնե՛ր, վոր շրջանային կուսակցական կազմակերպությունները մոռացության են տվել այս ճակատամասը․ գոյություն ունեցող չքավորական կազմակերպությունները և խմբակները կիսակազմալուծված դրության մեջ են գտնվում: Մի՞թե նաև սրանով չեն բացատրվում վորոշ շըրջաններում պայքարի թուլացումը կուլակության դեմ և կուսակցության դասակարգային գծի խախտումները գյուղում, մի՞թե նաև սրանով չի բացատրվում գյուղխորհուրդների աշխատանքի թուլությունը, կոլտնտեսությունների ներքին ամրացման աշխատանքների թուլությունը: Պետք է վերջ տալ այս հանցավոր անտարբերությանը չքավորության կազմակերպման, չքավորության մեջ տարվող հատուկ աշխատանքների նկատմամբ․ անմիջապես պետք է կյանքի կոչել չքավորական խմբակները, վորպես գյուղական օրգանների աշխուժացման, գյուղում կուսակցության դասակարգային գծի ապահովման կարևորագույն աղբյուր:

Թույլ է և անբավարար սպառողական կոոպերացիայի աշխատանքը գյուղում, չնայած ցանցի ծավալման և ապրանքաշրջանառության աճման մի շարք նվաճումների, սպառողական կոոպերացիան թույլ է սպասարկում գյուղի մատակարարման գործը նույնիսկ այնպիսի ապրանքներով, վորոնք դեֆիցիտային չեն և վորոնց սուր կարիքը, սակայն, գյուղում զգացվում է: Քիչ չեն շրջաններ, ուր մինչև այժմ չի կանոնավորված, օրինակ՝ կերոսինի, աղի, լուցկու մատակարարման գործը: Քիչ չեն գյուղեր, վորոնք շաբաթներով մնում են առանց նավթի՝ շրջանային սպառկոոպի ապիկարության և անճարակության և Հայկոոպի կողմից կոնկրետ ղեկավարության անբավարար լինելու պատճառով: Անհանդուրժելի յե նաև սպառկոոպերացիայի կողմից գյուղական շուկայում կուսակցության գների քաղաքականության խախտումը: Կենտկոմը հրապարակեց այս յերևույթի դեմ անխնա կռիվ մղելու մասին հատուկ վորոշում և գործնական ձեռնարկումների մի ծրագիր: Շրջանային կուսակ-

ցական կազմակերպությունները պետք է ուժեղացնեն կոնկրետ ղեկավարությունը սպառկոոպի աշխատանքների նկատմամբ՝ բարելավելու համար մատակարարման գործը, իջեցնելու համար գները, պայքարելու համար ապրանքային ֆոնդի վոչ նպատակին ծառայեցնելու դեմ, պայքարելու համար կոոպերացիայում նկատվող չարչիական յերևույթների դեմ:

Յեթե չափազանց շատ են մեր թերությունները ու պակասները գյուղական աշխատանքներում, ապա նրանք ավելի խոշոր չափերի յեն հասնում ազգային փոքրամասնությունների շրջաններում: Պետք է ընդունենք, վոր նա մեր աշխատանքների ամենաթույլ, ամենախոցելի ճակատամասն է, վորտեղ յեղած միանգամայն անբավարար դրությունն օգտագործում է մեր դասակարգային թշնամին: Ազգային փոքրամասնությունների շրջանների անբավարար դրությունը բացատրվում եյին կադրերի պակասությամբ, այդ շրջանների համեմատական հետամնացությամբ, կուսակցական կազմակերպությունների թուլությամբ: Թվում է, թե այս հանգամանքը պետք է հարկադրեր կենտրոնական օրգաններին՝ հատուկ ուշադրություն նվիրել թուրքական շրջաններին և գյուղերին, կենսագործել այդ շրջանների նկատմամբ կոնկրետ ղեկավարություն, ուղարկել այդ շրջաններն ամենաուժեղ ընկերների: Սակայն կատարվել է ճիշտ հակառակը․ մեր կենտրոնական օրգաններն անտեսել են թյուրքական շրջանների առանձնահատուկ դրությունը․ Կենտկոմը հայտաբերել է կենտրոնական մի շարք օրգանների կողմից բյուրոկրատական ձևականության և օպորտունիստական բթամտության ցայտուն արտահայտություններ թյուրքական շրջանների նկատմամբ: Մեր թուլությունից, մեր սխալներից մթերումների բնագավառում՝ օգտվում է դասակարգային թըշնամին՝ կուլակը, մոլլան, դաշնակը, մուսավաթիստը: Պետք է դիմել ամենակտրուկ միջոցների՝ արմատապես բարելավելու համար դրությունը թյուրքական շրջաններում, կազ-

մակերպելու համար չքավորությունը, անխնա պայքարելու համար կուլակային էլեմենտների դեմ: Այս տարվա բյուջեն հաստատելու ժամանակ նպատակ պիտի դնենք մի շարք հավելյալ հատկացումներով համեմատաբար կարճ ժամանակում լիկվիդացիայի յենթարկել ազգային փոքրամասնությունների շրջանների կուլտուրական-տնտեսական հետամնացությունը, ուժեղ զարկ տալ այդ շրջանների կուլտուրական վերելքին: Համագումարը պետք է պահանջի բոլոր կենտրոնական օրգաններից, բոլոր ժողովրդական կոմիսարիատներից անհապաղ շրջադարձ՝ յերեսով դեպի թյուրքական շրջանները, հատուկ, բացառիկ ուշադրություն թյուրքական շրջաններին: Այս պահանջի չկատարումը պետք է գնահատվի վորպես կուսակցության ազգային քաղաքականության խախտում, վորպես թյուրքական շրջանների նկատմամբ հայկական շովինիզմի արտահայտություն և ջախջախիչ հարված ստանա տեղնուտեղը:

Ընկերնե՛ր, ասածներիցս պետք է յեզրակացնել, թե գյուղական ֆրոնտի աշխատանքները պետք է դեռ յերկար ժամանակ մնան բոլոր կուսակցական կազմակերպությունների ուշադրության կենտրոնում: ԼԱՎԱԳՈՒՅՆ ՈՒԺԵՐԸ ԴԵՊԻ ՇՐՋԱՆ, ԴԵՊԻ ԳՅՈՒՂ—այս պիտի լինի մեր լոզունգը: Ծավալել գյուղում քաղաքական լայն մասսայական աշխատանք գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման կոնկրետ խնդիրների շուրջը, չթերագնահատել քաղաքական ագիտացիայի խոշոր դերը գյուղում, կարողանալ յուրաքանչյուր գյուղում յուրաքանչյուր կոլտնտեսությունում տեղի անցուդարձերի և աշխատանքների կոնկրետ նյութերով գտնել դասակարգային թշնամու ագենտին, դիմակազերծ անել դաշնակին, ցույց տալ գյուղի հիմնական մասսաներին դաշնակի, վորպես չարագործողների շահերի պաշտպանի, վորպես իմպերիալիստական գիշատիչների գործակալի գազանային դեմքը, սրել դասակարգային ատելությունը կուլակի դեմ, համախմբել միջակ գյուղացուն

մեր բոլոր ձեռնարկումների շուրջը, ամրացնել գյուղական ապարատը նոր ու կենսունակ ուժերով, ծավալել անհաշտ պայքար օպորտունիզմի դեմ, անկախ նրա արտահայտության ձևերից,—ահա գյուղական ֆրոնտի հանգուցային խնդիրները: Այդ խնդիրների լուծմանը պետք է ձեռնարկենք նոր յեռանդով: Պետք է ընդունենք, վոր դեռ շատ քիչ բան է արված՝ գյուղում դրությունն ավելի և ավելի կայունացնելու համար, Համկոմկուսի հոկտեմբերի 31-ի ցուցումներից հետո: Գյուղում կատարված սխալները մինչև վերջ բոլշևիկորեն ուղղելով՝ չպիտի թողնենք դասակարգային թշնամուն վորևէ հնարավորություն՝ աշխուժացնելու համար իր ազդեցությունը գյուղում: Ընդհակառակը, բոլշևիկյան պայքարի ծավալմամբ և սոցիալիզմի դիրքերի ամրացումով պիտի արագացնենք համատարած կոլեկտիվացման պայմանների ստեղծումը և այդ հիման վրա կուլակության լիկվիդացիան՝ վորպես դասակարգ:

ԲԱՆՎՈՐՆԵՐԻ ՅԵՎ ԱՇԽԱՏԱՎՈՐՆԵՐԻ ՆՅՈՒԹԱԿԱՆ—ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ԴՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԼԱՎՈՒՄԸ ՅԵՎ ԿՈՒԼՏՈՒՐԱԿԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԻ ԲԱՐՁՐԱՑՈՒՄԸ

Ընկերնե՛ր, յերկրի ժողովրդական տնտեսության սոցիալիստական վերակառուցման և վերելքին զուգընթաց՝ անընդհատ բարելավվում է բանվորների և աշխատավորական մասսաների նյութական-կենցաղային դրությունը: Բարձրացնել բանվորների և աշխատավորների կուլտուր-կենցաղային մակարդակը, բավարարել բանվորների հետզհետե բարձրացող պահանջներն այս ուղղությամբ—ահա մեր քաղաքականության և գործունեության հիմնական խնդիրներից մեկը: Փաստերը վկայում են, վոր մեր աշխատանքը հաշվետու շրջանում այս ասպարեզում ևս ապարդյուն չի անցել, վոր գնա-

ըով ավելի և ավելի բարձրանում է աշխատավորական մասսաների կուլտուր-կենցաղային մակարդակը։

Այդ մասին պերճախոս վկայություն է տալիս ամենից առաջ ազգաբնակության աճումը։ 1928 թվի 922 հազար ազգաբնակության փոխարեն Հայաստանում ունենք ներկայումս 1 միլիոն քառասուն հազար ազգաբնակություն․ *տարեկան աճումը վերջին տարիներում չի իջնում 4 տոկոսի սահմաններից։ Ազգաբնակության բնական աճումը վերջին տարիներում շարունակում է մնալ ռեկորդային բարձրության վրա—1000-ին 38-39 մարդ տարեկան, այն ժամանակ, յերբ բուրժուական յերկրների մեծ մասում, նրանց պատմության «ամենածաղկած» շրջանում բնական աճումը չի գերազանցել 1000-ին 10-ից։ Ազգաբնակության արագ աճումն արտացոլում է, անշուշտ, մեր յերկրի տնտեսական վերելքը և մասսաների դրության բարելավումը։ Ավելի աչքառու յե քաղաքային ազգաբնակության աճումը* 28 թվի 172·000-ի փոխարեն՝ Հայաստանի քաղաքային ազգաբնակությունը կազմում է 220·000 մարդ, *տարեկան աճումը հասնում է մոտ* 10 *տոկոսի։ Աճում է հսկայական տեմպերով բանվոր դասակարգը*․ վարձու աշխատանքով զբաղվողների թիվը, չհաշված գյուղատնտեսական պրոլետարիատը, կազմում է 28-29 թվին 45·000 մարդ, 29-30 թվին՝ 60·000 մարդ, 31 թվին՝ 72·000 մարդ, տարեկան աճում՝ 20 տոկոսով։

Ընկերնե՛ր, բանվոր դասակարգի քանակական աճմանը համապատասխանում է նրա տնտեսական դրության բարելավումը․ անցյալ տարի աշխատավարձի միջին աճումը հասավ 18 տոկոսի, ցենզային արդյունաբերության մեկ բանվորի միջին ամսական աշխատավարձը 30 թ․ 67 ռ․ բարձրացավ 31 թվին 80 ռ․, շինարարական բանվորինը՝ 94 ռ․ մինչև 113 ռ․, ժողլուսավորության գործում աշխատողինը՝ 65 ռ․ մինչև 91 ռ․։ *Սակայն աշխատավարձի բարձրացումը միայն բանվորների և աշխատավորների նյութական դրության բարելավման լիակատար պատկերը չի տալիս։ Պետք է նկատի ունենալ աչքի ընկնող այն աշխատանքը, վոր կատա-*

րում են՝ առողջապահության օրգանները, սոցիալական ապահովագրությունը, կոմունալ օրգանները և այլն։ Սոցիալական ապահովագրության բյուջեն վերջին մեկ տարում աճել է 78 տոկոսով՝ նախանցյալ տարվա 4·300·000-ի փոխարեն հասնելով 7·700·000-ի․ առողջապահության ժողկոմատի բյուջեն աճել է 4 միլիոնից մինչև 6 միլիոն 700·000 ռ․։ *Առողջապահության Կոմիսարիատը զգալի աշխատանք է կատարել՝ վերակառուցելու համար իր աշխատանքները՝ առաջին հերթին սպասարկելու բանվորներին և արդյունաբերական շրջաններին։ Յոթժամյա բանվորական օրը կիրառվում է արդեն մեր բոլոր գործարաններում․ զգալի չափով աճել է մանկական հիմնարկների ցանցը։ Նորակառույց բնակարանային ֆոնդն աճում է տարեցտարի*․ յեթե 1929 թ․ կառուցվել է 37 հազար քառակուսի մետր նոր բնակարանային ֆոնդ, 30 թվին՝ 46·000 ք․ մետր, ապա 31 թ․ կառուցվել է 54·000 ք․ մետր բնակարանային տարածություն։

Հաջողություններ ունենք նաև բանվորների մատակարարման գործի բարելավման գծով․ նախանցյալ տարվա բանվորական մատակարարման 289 կետի փոխարեն, անցյալ տարի ունեցինք 467 բաշխման կետ։ Պետական և կոոպերատիվ մանրածախ առևտրի շրջանառությունը յեղել է 29 թվին 51 միլ․ ռուբլի, 30 թ․ 78 միլիոն ռուբլի, իսկ 1931 թվին՝ 135 միլիոն ռուբլի։ Նույն թվերին մասնավոր մանրածախը կրճատվում է 20 միլիոնից մինչև 11, և 1931 թվին՝ 5 միլիոն ռուբլու։ *Խոշոր ծավալ է ստացել հասարակական սնունդը*․ նախանցյալ տարվա 161 կետի փոխարեն ունեցինք անցյալ տարի հասարակական սննդի 437 կետ, հասարակական սննդի ցանցում որական սպասարկվում է 115 հազար մարդ։ *Ահա, ընկերներ, մի քանի թվեր և փաստեր բանվորական մասսաների կուլտուր-կենցաղային դրության բարելավման մասին։ Թող թույլ տրվի ինձ կենդանացնել այս չոր ու ցամաք թվերը՝ իրենց, բանվորների կենդանի վկայությամբ—ահա ձեզ* Սարդարյան Հովհաննեսը։

Մեխանիկական գործարանի տոկարնի ցեխի բան-

վոր, արտադրական ստաժ 12 տարի, ամսական աշխատավարձ 220 ռուբլի, ապրում է նոր բնակարանում, 14 քառ. մետր տարածությամբ, ընտանիքը բաղկացած է 3 շնչից, ինքը սովորում է բանվորական համալսարանում, իսկ կինը ֆինանսական տեխնիկումում, աշխատավարձը բավականացնում է տնտեսական բոլոր ծախսերի համար, կցված է փակ բաշխիչի, սննդի դրությունը վերջին տարում բավարար է, ամեն որ ստանում է մսով տաք ճաշ, գրքերի և զանազան կուլտուրական պետքերի համար ամսական ծախսում է 5–6 ռուբլի. ծխում է, ունի ռադիո-բարձրախոս, հանախ կազմակերպում է զվարճության ժամեր բնակարանում, ամսական ջերեք անգամ հաճախում է կինո կամ թատրոն: Պակասությունները կայանում են նրանում, վոր բնակարանին կից չկա խոհանոց և ջուր:

ՄԱՐԻԿՅԱՆ ԳՈՒՐԳԵՆ— կարուսելշչիկ Մեխանիկական գործարանում, ԼԿՅԵՄ անդամ, արտադրական ստաժ 6 տարի, ստանում է 120 ռուբլի աշխատավարձ, ընտանիքը բաղկացած է 3 շնչից, ապրում է նոր բնակարանում, 12 քառ. մետր տարածությամբ, բնակարանն ապահովված է լույսով և ջրով, կցված է փակ բաշխիչի, ամեն որ ստանում է տաք ճաշ, քույրը սովորում է միջնակարգ դպրոցում, իսկ ինքը՝ բանֆակում, ամսական ջերկու անգամ հաճախում են կինո և թատրոն, ստանում են «Ավանգարդ», «Խորհրդային Հայաստան» թերթերը, գրքերի և թերթերի վրա ամսական ծախսում են 10–12 ռուբլի, պակասությունները կայանում են նրանում, վոր չունի ռադիո-բարձրախոս և քույրն ապահովված չէ կոշիկներով ու հագուստով:

ՄՈՒՍԻՆՅԱՆ ՀԱԿՈԲ— Ալլահվերդու ձուլարանի վառերժակետի վորակյալ բանվոր, արտադրական ստաժ 18 տարի, 5 տարի աշխատել է ֆրանսիացիների որոք ամսական միջին աշխատավարձը 125 ռուբլի, ընտանիքը բաղկացած է 5 շնչից, ապրում է նոր շենքում, ունի խո-

հանոց, փոքր պահեստ. լույսով ապահովված է. ջուր չունի. կոմունալ ծախսերի համար ամսական վճարում է 4 ռուբլի. կցված է «գործյակ-կոոպի» փակ բաշխիչին, կանոնավոր ստանում է կենսամթերքներ՝ առաջին ցուցակի բանվորների նորմայով, ամեն որ ստանում են տաք ճաշ, կինը և ինքը գրագիտություն են սովորել վերջին ջերկու տարվա ընթացքում, ջերեխաներից մեկը հաճախում է մանկապարտեզ, իսկ մյուսը՝ դպրոց. կինո կամ թատրոն ամսական գնում են 8–10 անգամ, ստանում է թերթեր և գնում է բրոշյուրներ, այդ նպատակի համար ամսական ծախսում է 6 ռուբլի: Ունի ռադիո-բարձրախոս, գործարանի դիրեկցիայի միջոցով ջերկու անգամ գործուղվել է Ուրալ, վորակավորման ջենթարկվելու համար, յուրաքանչյուր տարի ամառն ընտանիքն ուղարկում է գյուղ: Ֆրանսիացիների որոք ամսական ստանում եր 35 ռուբլի, աշխատում եր 12 և ավելի ժամ, այժմ աշխատում է 7 ժամ, ապահովագրման չեր ջենթարկված, ապրում եր գյուղում և ամեն որ 7 կիլոմետր (5 տարի անընդհատ) գնում և վերադառնում եր:

ՈՒԼԻԽԱՆՅԱՆ ԼԱՎՐԵՆՏԻ Ալլահվերդու գործարանի ելեկտրոցեխի բանվոր, արտադրական ստաժ 11 տարվա, ամսական աշխատավարձը 180–200 ռուբլի, ընտանիքը բաղկացած է 5 շնչից, ապրում են նոր բնակարանում, կոմունալ ծախսերի համար վճարում է ամսական 1 ռ. 40 կ., արդյունաբերական ապրանքների և պարենի մատակարարման տեսակետից այս տարի համեմատաբար դրությունը բարելավ է, ամեն որ ստանում են տաք ճաշ, բայց մսով ճաշ՝ յուրաքանչյուր ամիս 15 անգամ: Ինքը և կինը գրագիտացել են վերջին ջերկու տարվա ընթացքում, թերթերի և գրքերի համար ամսական ծախսում է 4 ռուբլի, ունեն ռադիո-բարձրախոս: Մի ջերեխան հաճախում է մանկապարտեզ. կինո և թատրոն չեն գնում, հասարակական աշխատանքով ծանրաբեռնված լինելու պատճառով, ընտանիքն ամառվա ըն-

թացքում գնում է գյուղ. զանգատվում են փայտ և ջուր չունենալու համար:

ՄՈՒՐԱԴՅԱՆ ՆԻԿՈԼԱ— Ալլահվերդու գործարանի
սևագործ բանվոր, արտադրական ստաժ 2 տարի, ամսա-
կան ստանում է 70 ռուբլի, իսկ կինը՝ 56 ռուբլի, ապ-
րում են նոր շենքում, բայց սենյակը չափազանց փոքր է,
կոմունալ ծախսերի համար վճարում են ամսական 1 ռ.
40 կ., պարենի և մատակարարման դրությունը կանո-
նավոր է, ամեն որ ստանում են տաք ճաշ ճաշարանից,
ամսական 2–3 անգամ հաճախում են կինո և թատրոն,
ստանում են թերթեր, սովորում է բանֆակում:

ԲԱՏԱՅԵՎ ԻՎԱՆ—Ալլահվերդու ձուլարանի կոնվեր-
տորնի ցեխի վորակյալ բանվոր, անկուսակցական, ար-
տադրական ստաժ 18 տարի, ամսական միջին աշխատա-
վարձը 125 ռուբլի, ընտանիքը բաղկացած է 3 շնչից,
ապրում է նոր շենքում, 20 քառ. մետր տարածությամբ,
ապահովված է խոհանոցով, պահեստով և լույսով, կո-
մունալ ծախսերի համար վճարում է ամսական 4–5 ռ.,
տաք ճաշ ստանում է ամեն որ, վորից 20 որը՝ մսով:
Այս տարի ուղարկվել է սանատորիա 1 ամսով՝ Սոցապի
հաշվին. յերկու յերեխան հաճախում են դպրոց, ընտա-
նիքի բոլոր անդամները գրագետ են, ստանում են թեր-
թեր, պարապում են ընթերցանությամբ, ունեն ռադիո-
ընդունիչ, ամիսը 4–5 անգամ հաճախում են կինո և
թատրոն, պակասությունները՝ ջուրը և փայտը: Ֆրան-
սիացիների որով Բատայեվը ստանում էր ամսական 45
ռուբլի աշխատավարձ, աշխատում էր 12 ժամ, հաճախ
և 18 ժամ (այժմ 7 ժամ). այն ժամանակ սանատորիա
գնալու մասին, ինչպես և արձակուրդի մասին խոսք լի-
նել չէր կարող. ժամանակավոր անաշխատունակության
ժամանակ կամ հիվանդության դեպքում ստանում էր աշ-

խատավարձի միայն 50 տոկոսը, ապրում էր հին և գետ-
նափոր բնակարանում:

ԿՈՍՏԱՆՈՎ ԿՈՍՏՅԱ— Կատերժակետի վարպետ, ար-
տադրական ստաժ 18 տարի, ընտանիքը բաղկացած է յե-
բեք շնչից, միջին աշխատավարձը 216 ռուբլի, 31 թվից
սկսած ապրում է նոր բնակարանում, ապահովված է նո-
մունալ հարմարություններով՝ ի հաշիվ կոմբինատի,
ստանում է տաք ճաշ և նախաճաշ համարյա ամեն որ,
յերեխան հաճախում է մանկապարտեզ, ստանում է
«Պրավդա» և այլ թերթեր, ամիսը 10 ռուբլի վճարում է
գրականության, յերկու ամսով ուղարկված է յեղել Ու-
րալ՝ վորակավորման նպատակով, 7 ամիս սովորել է դա-
սընթացներում (տեխնիկական), հետաքրքրվում է մե-
տալուրգիայի հարցերով, կարդում է տեխնիկական և
քաղաքական գրքեր, գրագիտություն սովորել է խոր-
հրդային իշխանության որով, ինքն ամսական 2–3 անգամ
և կինը 6–7 անգամ հաճախում են կինո և թատրոն, մա-
տակարարման դրությունը բավարար է: Ֆրանսիացինե-
րի որոք աշխատում էր 12 ժամ (այժմ 7 ժամ), աշխա-
տավարձը 42 ռուբլի յեր, անգրագետ էր, ապահովա-
գրված չեր:

ՍԻՄՈՆՈՎ Ս.—Լենտեքստիլի մանվածքային գոր-
ծարանի վորակյալ բանվոր, արտադրական ստաժ 9 տա-
րի, ամսական միջին աշխատավարձը 164 ռ., կինը վա-
րպետ, ընտանիքը բաղկա-
ցած է 4 շնչից, ապրում է նոր բնակարանում, ապահով-
ված է լույսով և շոգեջեռուցով, ամեն որ ստանում
են տաք ճաշ, թերթերի համար ամսական վճարում է 5
ռուբլի, յերեխան հաճախում է մանկապարտեզ, իսկ
կինը՝ բանֆակ:

ԶԱՏԻԿՅԱՆ—Լենտեքստիլի գործվածքային գործա-
րանի վարպետ, արտադրական ստաժ 6 տարի, ընտանի-
քը բաղկացած է 4 շնչից, վորից 3-ն աշխատում են գոր-

ծառայում, ամսական յեկամուտը 280—290 ռուբլի, մի քանի անգամ ստացել են պրեմիա՝ հարվածային աշխատանքի համար, ապրում են նոր շենքում, ունեն շոգեջեռուցում, ամբողջ ընտանիքը գրագետ է, մի յեղբայրը սովորում է համալսարանում, ամսական 10—12 ռուբլի տալիս են թերթերի ու գրքերի, կինո և թատրոն հաճախում են 6-7 անգամ, մատակարարման դրությունը կանոնավոր է, վերջերս միայն շաքար չեն ստացել: Այս տարի մայրը գնացել է հանգստի տուն, իսկ անցյալ տարի՝ ինքը: Զատիկյանը նախկին վորբ է:

ԶԱՔՈՅԱՆ ԱՐՏԱՇԵՍ—4-րդ ռայոնի յերկաթգծի բանվոր, արտադրական ստաժ 12 տարի, ընտանիքը բաղկացած է 4 շնչից, ամսական միջին աշխատավարձը 103 ռուբլի, ապրում է նոր շենքում, կիսագրագետ է, կինը հաճախում է գրագիտական դպրոց, ստանում են թերթեր, մատակարարվում են № 1 ցուցակով, կոշկեղեն չունեն, բնակարանում լույս չկա, տնային իրերով ու կահույքով ապահովված են:

ՄՈՎՍԻՍՅԱՆ ՎԱՐԻՆԿԱ—Լենտեքստիլի գործարանի բանվորուհի, 4 ամիս է, ինչ յեկել է արտադրության մեջ, ստանում է 36—40 ռուբլի, ապրում է նոր շենքում հանրակացարանում, հաճախում է վորակավորման դպրոց, ստանում է թերթեր, ամեն որ ճաշարանից ստանում է տաք ճաշ, ամիսը յերկու անգամ հաճախում է կինո: «Արտադրության մեջ շատ լավ եմ զգում ինձ նախ նրա համար, վոր այստեղ կյանքը մեզ սովորեցնում է և ստիպում սովորել, կուլտուրապես ավելի արագ զարգանում ենք և վերջապես ինքնուրույն աշխատանք ենք կատարում»:

Ալլահվերդու հին բանվորներ Ալեք Եվոյանը, Մահմադ Հասանը, Սանդրո Արովյանը, Արտեմ Մատաղյանը *պատմում են բանվորների սոցկենցաղային պայմանների մասին մինչև հեղափոխությունը:*

«Սոցիալական ապահովագրություն գոյություն չուներ, հիվանդության դեպքում միայն ընտանիքավոր բանվորներն էյին աշխատավարձ ստանում, այն էլ 50 տոկոսով, իսկ այդ ժամանակ աշխատավարձը կազմում էր 18—35 ռուբլի, իսկ ամուրիները վոչինչ չէյին ստանում, յերբ հիվանդանում էյին: Ծանր էյին աշխատանքի պայմանները, մթնով գործի էյին գնում և մթանը վերադառնում, աշխատում էյինք 12—15 ժամ, հաճախ և 18 ժամ, ապրելու համար կանոնավոր բնակարաններ չկային, բոլորն էլ ապրում էյին գետնափոր տներում, չկար հիվանդանոց, դպրոց, ճաշարան, բուժարան, սանատորիա, հանգստի տուն և այլն: Տարածված էր ծեծը, ճայրիա, կաշառակեհոյանքը, տեղի ու անտեղի տուգանքները, կաշառակերությունը: Անտանելի պայմաններում էյին բանվորները: Կեղտի, վոջլի մեջ—ահա մեր սոցկենցաղային պայմանները անցյալում»:

Կարելի չէ անվերջ շարունակել կենդանի վկայություն-
ների այս շարանը. սակայն բավական է: Բանվոր դասակարգի
թշնամիները վռնում են մեր յերկրի բանվորի և աշխատա-
վորի «թշվառ կացության մասին». իմպերիալիստական տե-
րերի հետքերով դաշնակ չները նույնպես իրենց մասնակցու-
թյունը բերին «պարտադիր աշխատանքի» առթիվ բարձրացած
հարահրոցին: Դաշնակ չների վոռնոցը մեզ չի զարմացնում.
ուրիշ կերպ վարվել նրանք չեն կարող: Ջախջախելով դաշնա-
կիզմի յուրաքանչյուր արտահայտություն՝ վորի նպատակն է
իմպերիալիստական սարկության լուծը կրկին դնել մեր բան-
վորի և գյուղացու վզին՝ մենք առաջ կգնանք բանվորների և
աշխատավորների նյութական-կենցաղային պայմանների հե-
տագա բարելավման գծով (ծափեր): Մենք գիտենք, վոր ձեռք
բերված հաջողությունները դեռ բավական չեն. մենք գիտենք,
վոր «ինչ վոր արված է մինչև այժմ մատակարարման ու բնա-
կարանային շինարարության գծով, յերբեք բավական չէ բան-
վորների արագ աճող կարիքները բավարարելու համար»
(Ստալին): Մենք նկատի ունենք առաջնորդի դիտողությունն
այն մասին, վոր ցելակետ պետք է ընդունել վոչ թե անցյալը,

այլ ներկայումս բանվորների աճող կարիքները: «Հիմիկվա բանվորը, մեր՝ խորհրդային բանվորն ուզում է ապրել՝ բավարարելով իր բոլոր նյութական և կուլտուրական կարիքները և՛ պարենային մատակարարման գծով, և՛ բնակարանի գծով, և՛ կուլտուրական և այլ կարիքների ապահովման գծով: Նա այդ իրավունքն ունի, և մենք պարտավոր ենք ապահովել նրա այդ պայմանները»: Ընկեր Ստալինի այս ցուցումը ղեկավարող սկզբունք պետք է լինի մեզ համար հետագա աշխատանքներում:

Բանվորների և աշխատավորների նյութական-կենցաղային պայմանների ավելի լայն բավարարման համար ամենից առաջ պետք է ավելի ուժեղ զարկ տալ բնակարանային և կոմունալ շինարարությանը: Բնակարանային շինարարության համար հատկացված 15 միլիոն ռուբլին պետք է լիովին իրացվի. ավելին. պիտի կարողանանք հավելյալ գումարներ ճարել այլ աղբյուրներից՝ ավելացնելու համար բնակարանային ֆոնդը: Կենտկոմը և Ժողկոմխորհն արդեն հաստատեցին Երևանի և Լենինականի կոմունալ շինարարության 1932 թվի ծրագիրը: Երևանի և Լենինականի կուսակցական և խորհրդային օրգանները անմիջապես բոլշևիկյան գործի պիտի անցնեն՝ կենսագործելու համար այդ ծրագիրը: Նրանց պիտի հետևեն մնացած շրջանային կենտրոնները և, ամենից առաջ Ղափանը, Ալլահվերդին, Ղարաքիլիսան, Արթիկը: Երևանը և Լենինականը կոմունալ տնտեսության օրինակելի քաղաքներ դարձնելով, չի սահմանափակվում մեր խնդիրը: Լայնացնել է պետք շինարարությունը շրջանային կենտրոններում. չենք կարող չգանգատվել համագումարին՝ շրջանային օրգանների վրա շրջանային շինարարության համար բացառիկ կարգով հատկացված 3 միլիոն ռուբլին անցյալ տարի շրջանային օրգանների կողմից գրեթե չիրացվեց. շինանյութեր չլինելու մասին պարապ խոսակցություններով, սակայն, շրջանային աշխատողները չեն կարող ծածկել տեղական միջոցների չօգտագործման, նույնիսկ քարի աշխատանքները չկատարելու աններելի փաստը: Անցյալ տարվա դանդաղկոտությունը

պետք է կոմպենսացիայի ենթարկվի այս տարվա շինարարության արագ տեմպերով և լավ որակով: Կոմունալ շինարարության գծով թե՛ քաղաքներում և թե շրջանային կենտրոններում պետք է հատուկ ուշադրություն դարձվի հասարակական կենցաղային հիմնարկների՝ բաղնիքների, մեքենայացված լվացքատների, ճաշարանների, մանկական հիմնարկների կազմակերպման վրա:

Բանվորների և աշխատավորական մասսաների նյութական դրության բարելավման գործում հսկայական աշխատանք ունեն կատարելու մատակարարման օրգանները. շատ դեպքերում այդ օրգանների պակասությունների պատճառով մատակարարման ֆոնդերը ժամանակին և բաց թողած չափով չեն հասնում բանվորական և աշխատավորական սպառողին: Նեպմանական, չարչիական վոգին հսկայական հարված է հասցնում բանվորական մատակարարմանը: Գների քաղաքականության խախտման բազմաթիվ դեպքեր են արձանագրված և՛ պետական, և՛ կոոպերատիվ առևտրի գծով: Հայտնի յե մեր Կենտկոմի վերջին վորոշումը՝ գների քաղաքականության, խորհրդային առևտրի ծավալման մասին: Համագումարը պետք է պահանջի կուսակցական բոլոր կազմակերպություններից՝ արթուն հսկել այդ վորոշումների կիրառման ընթացքի վրա: Կոոպերատիվ և բանվորական կազմակերպությունները պետք է լայն զարկ տան մանավանդ մերձքաղաքային տնտեսությունների կազմակերպմանը. յուրաքանչյուր բանվորական կոոպերատիվ պետք է անպայման կազմակերպի մերձքաղաքային բանջարանոցներ, կաթնատնտեսական ֆերմաներ, այգիներ՝ բավարարելու համար բանվորների պահանջները: Բանվորների մատակարարման համար ներքին միջոցների և հնարավորությունների թերագնահատում, մանավանդ մեզ մոտ, Հայաստանում, ամենավատ տեսակի օպորտունիզմ է: Պետք է ջախջախել բանվորական մատակարարման գործի զարգացման օպորտունիստական արգելակները: Այդ պայքարում ամենաակտիվ մասնակցությունը պետք է բերեն կազմակերպված բանվորական հասարակայնությունը, պրոֆեսիոնալ կազմակերպությունները:

ՆՈՐ ԹԱՓ ՏԱԼ ԿՈՒԼՏՈՒՐԱԿԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆԸ

Կուլտուրական հեղափոխության ֆրոնտը սոցիալիզմի ընդհանուր հարձակողական արշավի անբաժան և կարևորագույն մասն է: Հաշվետու շրջանում սոցիալիստական հարձակման տեմպերի արագացմանը զուգընթաց արագացան նաև կուլտուրական շինարարության տեմպերը. կուլտուրական շինարարության ֆրոնտում հաշվետու շրջանում զբաղված ենք յեղել յերկու հիմնական, խոշորագույն խնդիրների անմիջական լուծմամբ. խոսքը պարտադիր ուսման և անգրագիտության վերացման մասին է:

Դեռ կուսակցության անցյալ, 7-րդ համագումարում մենք առաջադրեցինք 31-32 ուսումնական տարում կիրառել Հայաստանում ընդհանուր պարտադիր ուսումը: 16-րդ համագումարի պատմական վորոշումներն այդ մասին իսկական շրջադարձ առաջացրին: Կատարելով համագումարի վորոշումները՝ այսոր կարող ենք զեկուցել համագումարին խոշորագույն հաղթանակի մասին—այս տարի անցանք ամբողջ Հայաստանում ընդհանուր պարտադիր ուսման թե գյուղում թե քաղաքում: Մեծ արագությամբ ծավալվում է Հայաստանում դպրոցական-կրթական հաստատությունների ցանցը. 29-30 թ. ունեյինք 93 նախադպրոցական հիմնարկներ՝ 5.57 հաճախողներով. այս տարի կազմակերպելու յենք 586 հիմնարկ և ընդգրկելու յենք 27.000 հոգի, չհաշված մանկական հրապարակները: 1-ին աստիճանի դպրոցներ ունեյինք 29-30 թվին 829, 79.847 աշակերտներով, այս տարի կազմակերպում ենք 1.042 առաջին աստիճանի դպրոց՝ ընդգրկելով 128 հազար աշակերտություն: Յոթնամյակների թիվը 29-30 թվի 23-ի փոխարեն բարձրանում է 38-ի՝ ընդգրկելով 10.000 աշակերտություն. մեծ արագությամբ աճում է մանավանդ կոլյերիտ դպրոցների ցանցը. 29 թվի 51 կոլյերիտ դպրոցների փոխարեն կազմակերպում ենք 172 կոլյերիտ՝ ընդգրկելով 18.100 գյուղացիական յերիտասարդություն:

Այսպիսով տեսնում ենք, վոր դպրոցական ցանցի լայնացման, քանակի ավելացման գծով կատարված է խոշոր աշխատանք: Քանակի աճման տեմպերից, սակայն, այստեղ ևս, ինչպես այլ ֆրոնտներում, շատ է հետ մնում վորակը: Դպրոցական հասակի մանուկները հիմնականում ընդգրկված են դպրոցական ցանցով, սակայն մի քանի շրջաններում աշակերտների մի մասն այս կամ այն պատճառով անկանոն է հաճախում դպրոց: Ազգային փոքրամասնական շրջանների դպրոցների համար ուսուցիչների սուր պակաս ենք զգում: Պայքարն ուսման վորակի համար դեռ չի դրված առաջին գծի վրա. դպրոցների պոլիտեխնիկացման, դպրոցներին մեր պայքարի և շինարարության ճակատամասերի հետ սերտորեն կապելու գծով միայն առաջին քայլերն ենք անում. ավելին՝ մեթոդի խնդրում մեր դպրոցներում ևս տեղ են գտել «ձախ» քյալլադյոզության վորոշ տարրեր: 1932 թվին հիմնականում իրագործելով կուսակցության մարտական դիրեկտիվը՝ ընդհանուր, պարտադիր ուսուցման մասին, ծանրության կենտրոնը պիտի դարձնենք վորակի խնդիրը. պայքար ցանցով ընդգրկված վերջին աշակերտի ըստ էության ուսուցման համար, պայքար ուսուցման վորակի համար, ուսուցիչների ընդհանուր և քաղաքական մակարդակի բարձրացման համար, պայքար պոլիտեխնիկական դպրոցի համար—ահա մեր առաջին խնդիրը կուլտուրական շինարարության ֆրոնտում:

Անգրագիտության վերացումը՝ ահա կուլտուրական հեղափոխության հետևյալ կարևորագույն լծակը: Նախ քան վերջին վիճակագրությունը, ընդունված էր կարծել, թե Հայաստանում ընդունված հասակի անգրագետների թիվը 145.000-ի յե հասնում: Անցյալ աշնանը կատարված մանրակրկիտ ուսումնասիրությունը ցույց տվեց, վոր իսկական դրությունն այս գծի վրա շատ ավելի անմխիթարական է, քան կարծում եյինք: Հայաստանի 8 տարեկանից բարձր հասակի 747.600 ազգաբնակչությունից գրագետ են և կիսագրագետ 401 հազար անձ: Հայաստանում 100 անձին ընկնում է 54 գրագետ միայն. 12—45 տարեկան անգրագետների թիվը կազ-

մում է 230 հազար անձ։ Համկոմկուսի Կենտկոմը պարտավորեցնում է մեզ առաջին հերթին ապահովել անգրագիտության վերացումը։ Այս տարվա համար հիմնական խնդիր է 230.000 անգրագետների գրագիտացման գործը։ Ի հարկե, սա այնպիսի ծավալի մի գործ է և նրա վճռումը կապված է այնպիսի դժվարությունների հետ, որ միայն լուսավորության օրգանների ուժերով և միջոցներով ուղղակի անհնարին է կատարել լրիվ և հաջողությամբ։ Բայց, ընկերնե՛ր, բոլշևիկների համար չկան անառիկ ամրոցներ։ Ուժերի լարմամբ, հասարակական կազմակերպությունների բոլշևիկյան մոբիլիզացիայով, տնտեսական օրգանների նյութական մասնակցությամբ միայն կարողանանք կատարել Կենտկոմի մարտական պահանջը—հիմնականում այս տարի վերացնել անգրագիտությունը մեր յերկրում։

Անհրաժեշտ է, որպեսզի շրջանային կուսօրգաններն ավելի անմիջական և կոնկրետ դարձնեն ղեկավարությունը կուլտուրական շինարարության խնդիրների նկատմամբ. ներկայումս այդ ուշադրությունն անբավարար է. վոմանք կարծում են, որ աշխատանքի այնպիսի բնագավառների համեմատությամբ, որպիսին է արդֆինպլանների կատարումը, բամբակի խնդիրը կամ կոլտնտշինարարությունը, կուլտուրական շինարարությունը յերրորդ կամ չորրորդ ֆրոնտ է. սխալ է, ընկերնե՛ր, կուլտուրական շինարարությունը սոցիալիզմի կառուցման ընդհանուր աշխատանքի անբաժան մասն է։ Կուլտուրական ֆրոնտում հետ մնալով՝ մենք արգելակում ենք տնտեսական շինարարության արագատեմպ վերելքը։ Իսկ Անգրագիտության վերացումը կուլտուրական հեղափոխության հիմքն է կազմում։ Ահա թե ինչու համագումարը կտրականապես պետք է պահանջի բոլոր կազմակերպություններից՝ անմիջապես լայն ծավալով կիրառել անհրաժեշտ ձեռնարկումներ՝ ապահովելու համար անգրագիտության վերացման այս տարվա պլանը։

Այսպես ուրեմն. ժամանակն է ուժեղացնել բոլշևիկյան պայքարը կուլտուրական հեղափոխության հետագա ծավալման համար. ժամանակն է ավելի լայն միջոցներ հատկացնել դպրոցական շինարարությանը, առաջին հերթին՝ գյուղում. ժամանակն է նոր թափ և բարձր վորակ տալ կուլտուրական շինարարության մարտական ֆրոնտի բոլոր աշխատանքներին։

ԲՈԼՇԵՎԻԿՅԱՆ ԱՐՇԱՎԻ ԼԾԱԿՆԵՐԻ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՈՒՄԸ

Ընկերնե՛ր.—Հաշվետու շրջանը մեր բոլոր աշխատանքներում անցել է բոլշևիկյան արշավի ծավալման նշանաբանի տակ։ Իսկ վո՞րն է բոլշևիկյան արշավի էությունը ներկա պայմաններում։ Նախ և առաջ, պատասխանում է ընկ. Ստալինը՝ «բոլշևիկյան արշավի էությունը կայանում է նրանում, որ մոբիլիզացիայի յենթարկենք մասսաների դասակարգային զգոնությունը և հեղափոխական ակտիվությունը մեր յերկրի կապիտալիստական տարրերի դեմ, մոբիլիզացիայի յենթարկենք մասսաների ստեղծագործական նախաձեռնությունը և ինքնագործունեությունը՝ մեր հիմնարկների, կազմակերպությունների բյուրոկրատիզմի դեմ, որ ծածկում է ու պահում մեր խավակարգի ընդերքում թաքնված ռեզերվները. կազմակերպել մասսաների մրցությունը և աշխատանքային վերելքը՝ աշխատանքի արտադրողականությունը բարձրացնելու համար, սոցիալիստական շինարարությունը ծավալելու համար»։ Բոլշևիկյան արշավի այս առաջին պայմանը կիրառելու համար մեզ մոտ հաշվետու շրջանում կատարվել է հսկայական աշխատանք. մենք ստուգման և զտման յենթարկեցինք վողջ ապարատը, սկսած կենտրոնական օրգաններից մինչև գյուղական ապարատը. այդ աշխատանքի մանրամասն արդյունքների մասին կզեկուցի Կենտ. Վերահսկիչ հանձնաժողովի նախագահ ընկ. Գալոյանը։ Այդ աշխատանքը մոտեցրեց ապարատը մասսաներին. բավական է նկատի ունենալ, որ ստորին ապարատի ստուգման աշխատանքներին մասնակցել է մոտ 100.000 մարդ. բարձրացավ մասսաների հսկողությունը ապարատի վրա, բարձրացավ

պետապարատի զգոնությունն ու պատասխանատվության զգացումը: Պետապարատից զտվեցին առաջին, երկրորդ և երրորդ կարգով մոտ 500 խորթ, անհարազատ, անպետք կամ բյուրոկրատական էլեմենտներ: Սակայն ընդունել, որ կատարված աշխատանքները բավարար են, որ պետապարատի ներկա դրությունն այնպես է, որ նա ամբողջապես համապատասխանում է սոցիալիստական արշավի պահանջներին՝ երբեք չենք կարող. ընդհակառակն՝ քիչ չեն դեռ պետապարատի առանձին օղակների թերություններն ու պակասությունները, ի միջի այլոց, նաև պետապարատի անձնական կազմում: Պետապարատը շարունակում է քանակական աճման իր վազքը՝ առանց ուշադիր լինելու անձնական կազմին և աշխատանքի որակին. դժվար է ճարել պետական մի հիմնարկ, որ ապարատի ծախսերի համար բավարարվեր բյուջետային հատկացումներով: Այսպես շարունակել չի կարելի: Պետք է հետևողական կերպով պայքարել պետապարատի էժանացման, նրա անձնական կազմի բարելավման, նրա աշխատանքների ռացիոնալացման համար: Հաշվետու շրջանում պետական կենտրոնական ապարատում առաջ քաշվեցին 70 կոլտնտեսական: Շատ քիչ է. պետք է շարունակել լավագույն կոլտնտեսականների համարձակ առաջ քաշման աշխատանքները, պետք է շարունակել պետապարատի անձնական կազմի համար լավագույն աշխատողների ջոկումը: Այսպիսով, տեսնում ենք, որ դեռևս բավարար չեն այն արդյունքները, որ ձեռք բերինք պետական ապարատի վերակառուցման գործում: Պետք է շարունակել և խորացնել այդ աշխատանքները՝ ավելի մարտունակ դարձնելու համար սոցիալիստական արշավի հիմնական լծակներից մեկը:

Մասսաների մրցության և աշխատանքի վերելքի կազմակերպման գծով կատարված է աչքի ընկնող աշխատանք. սոցիալիստական մրցակցությամբ ընդգրկված է մեր բոլոր բանվորների 70 տոկոսը. ուշագրավ է, որ ինժեներ-տեխնիկների մեծամասնությունը նույնպես մասնակցում է սոցմրցման և հարվածային շարժմանը՝ հարվածային շարժումը, սոցիալիստական մրցակցությունը հսկայական նշանակություն ունեցավ վճռական տարվա արդֆինպլանների կատարման գործում. Ղափանում, Ալլահվերդում, Յերեվանում, Լենինականում հարվածային բրիգադները պայքարելով պլանների կատարման համար, սոցիալիստական գիտակից աշխատանքի բարձր արտադրողականության, անձնազոհության և հերոսության փայլուն օրինակ են տալիս: Սա դեռ չի նշանակում, սակայն, որ հարվածայնության և սոցմրցակցության կազմակերպման բնագավառում ամեն ինչ կատարյալ է. արդեն վերև բերված փաստերը աշխատանքի կարգապահության թուլության և գործալքումների մասին՝ ցույց են տալիս, որ բազմաթիվ ձեռնարկություններում կաղում է հարվածայնության որակը, որ առանձին դեպքերում հարվածայնությունը ստանում է ձևական, բյուրոկրատիկ բնույթ. ավելին. տեղ-տեղ հարվածայնությունը փոխարինվում է աչքակապությամբ: Այսպիսով տեսնում ենք, որ հանգստանալ սոցմրցակցության և հարվածայնության ներկա մակարդակի վրա՝ չենք կարող. ավարտական տարին պահանջում է նոր թափ և ավելի լայն ծավալ տալ հարվածային շարժմանը. ժամանակն է իրականում ընդգրկել հարվածային շարժումով բոլոր կոմունիստներին և կոմերիտականներին, ժամանակն է վերացնել սոցմրցակցության ծավալման դեմ գյուղում և հիմնարկներում բարձրացած բոլոր արգելակները: Կուսակցական և պրոֆմիութենական կազմակերպությունները մասսայական լայն աշխատանքով պետք է անխնա կռիվ հայտարարեն կեղծ հարվածայնությանը, կոնկրետացնեն սոցմրցման պայմանագրերը, հաշվի առնեն պայմանագրերի կատարումը, պարգևատրեն լավագույն հարվածայիններին՝ ավելի մարտունակ դարձնելու համար սոցիալիստական արշավի այս կարևորագույն լծակը:

Ընկերնե՛ր, սոցիալիստական արշավի էությունը կայանում է նաև նրանում,—շարունակում է ընկ. Ստալինը,—«որ մենք կազմակերպենք, վերակազմենք արհմիութենական, կոոպերատիվ, խորհրդային և ամեն տեսակ մասսայական այլ

կազմակերպությունների գործնական ամբողջ աշխատանքը՝ համաձայն վերակառուցման շրջանի պահանջներին։ Ստեղծենք նրանցից ամենից ավելի ակտիվ հեղափոխական աշխատողների կորիզ, հետ մղելով և մեկուսացնելով օպորտունիստական տրեդ-յունիոնիստական բյուրոկրատիկ տարրերը, դուրս վռնդենք նրանցից խորթ, այլասերված տարրերը, առաջ քաշենք նոր աշխատողներ ներքևից»։ Մեր կազմակերպչական աշխատանքներում և կադրերի բաշխման գործում հաշվետու շրջանում մենք ղեկավարվել ենք ընկ. Ստալինի այս ցուցումով։ Հաշվետու շրջանում արմատական վերակառուցման յենթարկվեցին պրոֆմիութենական աշխատանքները, ջարդվեց բյուրոկրատացած, տրեդ-յունիոնիստական տրամադրություններով վարակված պրոֆապարատի նախկին կառուցվածքը։ Լիկվիդացիայի յենթարկեցինք մի շարք կենտրոնական ապարատներ, մոտեցնելով ղեկավարությունը տեղերին. լայնացան պրոֆմիութենական ակտիվի կադրերը։ Հաշվետու մեկ ու կես տարվա ընթացքում չի կարելի չարձանագրել պրոֆմիութենական կազմակերպությունների համեմատական ակտիվացումը, մոտեցումը արտադրության, սոցմրցման, հարվածայնության ավելի կոնկրետ ղեկավարումը։

Արմատական վերակառուցման յենթարկեցինք այս շրջանում նաև խորհրդային ապարատը։ Գավառների վերացումն ամրացրեց շրջանային ապարատը, զգալի չափով մոտեցնելով ղեկավարությունը մասսաներին. ամրացան շրջանային ապարատի բոլոր օղակները՝ ավելի կարող աշխատողներով, նյութական հնարավորություններով։ Գավառների վերացումով ավելի կոնկրետ և օպերատիվ դարձավ կենտրոնական ապարատի ղեկավարությունը տեղերի նկատմամբ. ամրացավ նաև, առայժմ աննշան չափով, գյուղխորհրդի ապարատը՝ ստանալով ինքնուրույն բյուջե։

Վերակառուցման յենթարկվեց սպառկոոպի վողջ աշխատանքը, Համ. Կոմկուսի Կենտկոմի մայիսյան վորոշումների կիրառման գծով։ Լայնացավ գյուղական կոոպերատիվ ցանցը, սպառկոոպի կենտրոնին կից կազմակերպվեցին մի շարք ինքնավար միավորներ՝ ավելի շարժուն և օպերատիվ դարձնելու համար կոոպերատիվ ապարատը։

Յեվ սակայն, պետք է ընդունենք, վոր և՛ պրոֆմիությունների, և՛ խորհուրդների, և՛ սպառկոոպի գծով չի կարելի ավարտված համարել աշխատանքների վերակառուցումը. վերակառուցման աշխատանքներում, մանավանդ աչքի յե ընկնում վորակի ամրացման, նվաճումների խորացման թերագնահատումը։ Իրենց ներկա դրությամբ սոցիալիստական արշավի վերոհիշյալ կարևորագույն լծակները դեռ հետ են մնում մեր պահանջներից։ Արդֆինպլանների թերակատարման, գոյություն ունեցող ճեղքվածքների, գյուղում կուսակցական գծի աղավաղումների պատճառների մեջ հիմնական տեղը գրավում է այն հանգամանքը, վոր մեր մասսայական կազմակերպությունները, խորհրդային, պրոֆեսիոնալ, կոոպերատիվ օրգանները դեռ մինչև վերջ չեն վերակառուցվել նոր շրջանի, նոր պայմանների պահանջների համեմատ։ Ահա թե ինչու համագումարը կազմակերպությունների առաջ խնդիր պիտի դնի՝ շարունակել խոր և վորակային աշխատանք՝ վերակառուցելու և ավելի մարտական դարձնելու համար սոցիալիստական արշավի մասսայական լծակները։

ԱՊԱՀՈՎԵԼ ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ՃԻՇՏ ՅԵՎ ԱՄՈՒՐ ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ ԿՈՄՍՈՄՈԼԻ ՆԿԱՏՄԱՄԲ

Հայաստանի կոմսոմոլը, մեր կուսակցության առաջին և հավատարիմ օգնականը, հաշվետու շրջանում ավելի յե աճել ու ամրացել. նա ձեռք է բերել անվիճելի նվաճումներ իր կազմակերպությունների վերակառուցման, տնտեսական շինարարության կոնկրետ ճակատամասերին մոտեցնելու ուղղությամբ։ Սոցմրցակցության և հարվածայնության լայն ծավալման համար ամենից առաջ պարտական ենք բանվորական յերիտասարդությանը, վորը կոմսոմոլի ղեկավարությամբ շարունակում է առաջ ընթանալ աշխատանքի նոր,

սոցիալիստական ձևերի ամրացման նախաձեռնողների շարքերում: Ահագին աշխատանք կատարեցին Հայաստանի կոմսոմոլի կազմակերպությունները պղնձի շեֆության ֆրոնտում՝ տալով Ալլահվերդուն անցյալ տարի մոտ 45.000 բանվորական օր: Ձեռք բերելով վորոշ նվաճումներ արդյունաբերության մեջ՝ մեր կոմսոմոլը սակայն, դեռ հետ է մնում գյուղում. այստեղ սոցիալիզմի կառուցման այս ամենադժվար ու պատասխանատու ճակատամասում, ուր ավելի խոշոր է կոմսոմոլի տեսակարար կշիռը՝ թույլ են կոմսոմոլի աշխատանքները: Չնայած, վոր գյուղական կոմսոմոլի 70 տոկոսն ընդգրկված է կոլտնտեսություններում, չափազանց թույլ է կոմսոմոլի պայքարը կոլտնտեսությունների ամրացման համար: Կոմսոմոլը դեռ չի գրավել առաջավոր դիրքերը կոլտնտեսային աշխատանքի կազմակերպման, գործավարձային սիստեմի կիրառման, կուլակային ազդեցությունների դեմ պայքարելու խնդրում: Այս դեռ բոլորը չէ: դասակարգային սրված պայքարի ներկա պայմաններում կոմսոմոլի գյուղական կազմակերպություններում առանձին էլեմենտներ և նույնիսկ առանձին օղակներ անկայուն դուրս յեկան և ընկան կուլակային ազդեցությունների տակ՝ անմիջականորեն զոդվելով դաշնակ-կուլակային էլեմենտների հետ: Այսպիսով պետք է յեզրակացնել, վոր դեռ թույլ է կոմսոմոլի մասնակցությունը կուսակցության դիրեկտիվների կատարման գործում, մասնավորապես գյուղական աշխատանքներում: Կոմսոմոլի գյուղական կազմակերպությունների մաքրումը խորթ ու այլասերված էլեմենտներից, գյուղական կազմակերպությունների վերակառուցումը և կատաղի պայքարի ծավալումը կոլտնտեսությունների ամրացման և աշխատանքի կազմակերպման համար, կատաղի պայքարի ծավալումը կուլակի և նրա ազդեցությունների դեմ, ահա կոմսոմոլի կարևորագույն խնդիրներից մեկը ներկայումս:

Հաշվետու շրջանում մեծ չափով շարունակվել է կոմսոմոլի քանակական աճումը: 29 թվի, 22,000-ի և 30 թ. 41.000-ի փոխարեն 31 թվին ունենք 52.000 կոմսոմոլի անդամներ՝ Հա-

յաստանում: Կոմսոմոլի աճումը, և այն էլ արագ տեմպով, փաստ է. սակայն կարողացե՞լ է արդյոք մեր կոմսոմոլը զուգակցել աճմանն իր անդամների քանակական դաստիարակման կարևորագույն գործը. չե՞ն տարվել արդյոք մեր ընկերները կոմսոմոլի մեխանիքական աճմամբ, աչքաթող անելով նոր անդամներին ակտիվ աշխատանքի դնելու, նրանց դաստիարակության և կոփման գործը: Վերջին հարցին, դժբախտաբար, պետք է ասել, վոր նրանք ընդհանուր առմամբ, հիրավի տարվել են քանակական աճմամբ:

Կոմսոմոլի բոլոր աշխատանքների հիմնական օղակը ներկայումս, անշուշտ, նոր կադրերի բոլշևիկյան դաստիարակությունն է. այդ դաստիարակությունը պետք է կատարվի սերտ շաղկապելով գործնական աշխատանքն ու պայքարը լենինիզմի տեսական ուսուցման հետ: Վերջին աշխատանքն է այսօր մեր կոմսոմոլի ամենաթույլ կողմը: Բավական է ասել, օրինակ, վոր Յերևանում նոր ընդունված 3000 կոմյերիտականներից քաղդպրոց են հաճախում հազիվ 400 հոգի, բավական է ասել, վոր գյուղական վայրերում նոր ընդունված կոմյերիտականների աչքի ընկնող մասը դեռ չի ընդգրկված քաղդպրոցների ցանցով: Այսպես շարունակել՝ հանցանք և վնասարարություն կլինի. կուսակցական օրգանները պետք է գիտենան, վոր տասնյակ հազարավոր նոր կոմյերիտականների մարքս-լենինյան դաստիարակության գործը միայն կոմյերիտմիության ուժերով չի կարելի ապահովել, այստեղ անհրաժեշտ է կուսակցական կազմակերպությունների օժանդակությունը պրոպագանդիստական ուժերով, նյութական միջոցներով, առօրյա կոնկրետ ղեկավարությամբ: Մինչդեռ կուսակցական կազմակերպությունների կողմից նկատվում են կոմյերիտմիության նոր կադրերի դաստիարակման գործի թերագնահատման նշաններ, այլապես ինչո՞վ բացատրել այն, վոր գյուղում ուսման սեզոնի առաջին կեսն անցավ առանց շոշափելի դրական գործի՝ կոմյերիտմիության լենինյան ուսուցման գործի ծավալման բնագավառում: Պետք է պահանջենք կուսակցության և կոմյե-

րիտմիության բոլոր օղակներից, համագումարից անմիջապես հետո, լուրջ ձեռնարկումներ անել՝ կուսակցական ցանցով ընդգրկելու համար նոր ընդունված բոլոր կոմյերիտականներին։

Պետք է ընդունել, ընկերնե՛ր, որ նոր պայմաններում բարդանում են նաև կոմյերիտմիության առաջ դրված խընդիրները, գնալով ավելի և ավելի աճում է կոմյերիտմիության տեսակարար կշիռը և՛ արդյունաբերության մեջ, և՛ մանավանդ գյուղի սոցիալիստական վերակառուցման աշխատանքներում. Հսկայական է կոմյերիտմիության դերը արդֆինպլանների համար մղվող պայքարում։ Բայց ապահովելու համար կոմյերիտմիության ակտիվ մասնակցությունը մեր պայքարի և աշխատանքների բոլոր բնագավառներում՝ անհրաժեշտ է ապահովել կուսակցական ճիշտ ու ամուր ղեկավարություն՝ կոմյերիտմիության բոլոր օղակների նկատմամբ։

Երկու խոսք էլ պիոներական կազմակերպությունների մասին։ Հաշվետու շրջանում կրկնապատկվել է Հայաստանի պիոներների՝ հասցնելով 100·000-անոց մի բանակի. սակայն բոլոր նրանք, որոնք մոտիկից շփվում են պիոներական կազմակերպությունների աշխատանքի հետ, պետք է ընդունեն, որ այստեղ էլ աշխատանքի որակը և բովանդակությունը չափազանց հետ են մնում քանակական աճման տեմպերից. կուսակցական ղեկավարության, որ ներկայումս չափազանց թույլ է, ուժեղացումը այս բնագավառում նույնպես վճռական պայման պիտի դառնա կազմակերպության շարքերի ամրացման և աշխատանքի որակի բարձրացման համար։

Հաշվետու շրջանում վերակառուցման յենթարկվեց նաև աշխատանքը կանանց մեջ։ Վերակառուցման հիմնական նպատակն է այնպես կազմակերպել կուսակցական, մասսայական աշխատանքները աշխատավոր կանանց մեջ, որպեսզի բարձրանա նրանց ավելի ակտիվ և լայն մասնակցությունը մեր տնտեսական և քաղաքական աշխատանքների բոլոր բնա-

գավառներում։ Յեվ իսկապես, պետք է արձանագրենք, որ վերակառուցումը տվեց արդեն դրական, շոշափելի արդյունք։ Զգալի չափով ավելացել է կանանց թիվը արդյունաբերության մեջ՝ կազմելով արդեն 12 հազարից ավելի բանվորուհիների մի բանակ։ Լայնացել է մասսայական աշխատանքների ծավալը, 30 թ. 437 պատգամավորական ժողովների փոխարեն ունեյինք 31 թվին 626 պատժողովներ, 21·900 պատգամավորուհիներով։ Հետաքրքիր է, որ կոլտնտեսություններին կից կազմակերպված են 277 պատժողով՝ 7000-ից ավելի պատգամավորուհիներով։ Ակտիվացել է աշխատավոր կնոջ մասնակցությունը տնտեսական և կուլտուրական շինարարության մեջ. կոլտնտեսություններում, կոլտնտեսային բրիգադներում, հարվածային կոլտնտեսուհիները սոցիալիստական յեռանդուն աշխատանքի օրինակ են տալիս։ Մնում է, որ կուսակցական կազմակերպությունները ավելի ակտիվ ու կոնկրետ ղեկավարություն ցույց տան կանանց մեջ տարվող աշխատանքներին՝ համարելով այդ աշխատանքները որպես կուսակցության մասսայական աշխատանքների ամենակարևոր մեկ մասը։ Մնում է, որպեսզի կուսակցական կազմակերպությունները ամենօրյա աշխատանքների ընթացքում վճռաբար հարվածեն ու ջախջախեն կանանց մեջ տարվող աշխատանքները և այդ աշխատանքների ներկա ձևի իսկական նշանակությունը օպորտունիստական թերագնահատման տենդենցները, մնում է, որ մեր բոլոր կազմակերպությունների գծով ավելի լայն չափով և համարձակ առաջ քաշվեն բանվորուհիներ և կոլտնտեսուհիներ՝ ղեկավար աշխատանքի։

ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Նոր պայմանները, նրանցից բխող նոր պահանջները հաշվետու շրջանում մեր առաջ դրին նաև կուսաշխատանքների ղեկավարության խնդիրը։ Ուժեղացնելով կենդանի կա-

պը և ղեկավարությունը կազմակերպությունների ստորին
ողակների նկատմամբ, կոնկրետ և օպերատիվ դարձնել ղե-
կավարությունը, աշխատանքի ծանրության կենտրոնը դարձ-
նել՝ ստորին ողակը, ցեխային բջիջը, կուսխմբակը բրի-
գադներին կից, կոփել նոր կադրեր գյուղական կազմակեր-
պությունների շարքերից, կազմակերպել կուսաշխատանքի
կայուն ու ամուր հենակետեր գյուղում—ահա կուսաշխա-
տանքների վերակառուցման հիմնական նպատակները:
Մենք ունենք, անկասկած, ընկերներ, կուսաշխատանքների
և ղեկավարության գծված ուղղությամբ վերակառուցմա
գործում մի շարք նախնական հաջողություններ: Ամենից ա-
ռաջ, չնայած մի շարք թերությունների, խոշոր չափով ու-
ժեղացել է կենդանի կապը Կենտկոմի և շրջանային կոմ-
տեների միջև. բավական է ասել, վոր 31 թվին Կենտկոմ
կողմից հատուկ հետազոտման են յենթարկվել գրեթե բոլ
շրջանային կազմակերպությունները: Անցյալ տարվա յեր
րորդ կիսում տեղերում յերկար աշխատանքով գործուղվ
են կուսկազմխմբակներ. հրավիրված են յեղել բազմաթ
խորհրդակցություններ, զանազան կամպանիաների մասնակ
ցելու համար, շրջաններում յերկար ժամանակ աշխատել են
Կենտկոմի և Բյուրոյի գրեթե բոլոր անդամները: Այսպիսով՝
անվիճելի յե կենդանի կապի ուժեղացումը, սակայն սա դ
բավական չէ. մենք պետք է ե՛լ ավելի ուժեղացնենք թե կեն
դանի կապի վորակը և թե կուսհրահանգչական աշխատանք
պետք է չեչտենք, վոր Կենտկոմի բաժինները դեռ մինչև վեր
ջը չեն վերակառուցված՝ ժամանակին արձագանքելու համար
Կենտկոմին՝ տեղերում կատարվող բոլոր անցուդարձերը՝
առանձին շրջանների հետ մնալը, ճեղքվածքներ առաջացնո
պատճառները և այլն. մյուս կողմից՝ Կենտկոմի բաժիններ
կողմից բավարար չէ դեռ կոնկրետ ղեկավարությունը շրջ
կոմների և նրանց ապարատի վերաբերմամբ: Առաջիկայում
ավելի լուրջ միջոցների պետք է դիմել՝ վերացնելու համար
այս թերությունները:

Կուսաշխատանքների վերակառուցումն արդյունաբերու

յան մեջ՝ չի կարելի բավարար համարել, հենց թեկուզ
րդֆինպլանների կատարման ճեղքվածքների հիման վրա:
ն՝ վոր կուսաշխատանքների դրության առաջին ցուցանիշը
րդֆինպլանների կատարումն է: Թույլ են ընթանում կու-
ակցական աշխատանքները մանավանդ նորակառույցներում,
ր գրեթե բոլորովին դեռ չի ձեվակերպված կուսակցական
որին ողակը: Այնուամենայնիվ, վորոշ դրական մոմենտ-
եր արդյունաբերական բջիջների վերակառուցման գծով
ենք ունենք. ամենից առաջ լայնացել է արդյունաբերական
ջիջների ցանցը. 1930 թվի 696 բջիջներից արդյունաբերու-
յան կից ունեցինք 107 բջիջ, ներկայումս 936 բջիջներից
րդյունաբերության մեջ ունենք 180 բջիջ: Մենք կազմակեր-
ցինք արդյունաբերական բջիջներում մոտ 500 կուսխմբակ
ձեվակերպեցինք ստորին կուսկազմակերպիչներ. սակայն
ոևս չափազանց թույլ է կուսակցական ստորին ողակների
խատանքի բովանդակությունը. վերակառուցումը բազ-
աթիվ տեղերում կրում է ձեվական բնույթ, կուսկազմա-
րպիչները դեռ պարզ չեն պատկերացնում իրենց աշխա-
անքի ձեվերն ու մեթոդները: Ժամանակն է, ընկերներ, լուրջ
րով զբաղվել այս խնդիրներով. անհրաժեշտ է ե՛լ ավելի
վալել կուսակցական բջիջների ցանցն արդյունաբերության
ջ, ընդգրկել արդյունաբերական բոլոր ձեռնարկները կուս-
ջիջներով, յուրաքանչյուր ցեխում, արտադրության ավելի
որին յուրաքանչյուր ողակում պետք է կազմակերպվեն
ուսակցական ցեխային բջիջներ կամ կուսխմբակներ. յու-
քանչյուր բրիգադում, կոմպլեքսում, հերթափոխության
եջ պետք է ունենանք կուսկազմակերպիչներ: Կուսակցա-
կան ստորին ողակները իրենց հիմնական խնդիրը պիտի
դարձնեն բրիգադի, ցեխի, հերթափոխության արդֆինպլան-
ների կատարումը. ընկեր Ստալինի 6 ցուցումների կատար-
ման ապահովումը տվյալ ողակի աշխատանքներում՝ ահա
կուսակցական ստորին ողակի հիմնական խնդիրը:

Պետք է խոստովանենք, վոր Համկոմկուսի Կենտկոմի
Հոկտեմբերի 31-ի վորոշումներից հետո յել, մեր կուսակցա-

կան շրջանային կազմակերպությունները լուրջ աշխատանք չեն սկսել՝ կատարելու համար Կենտկոմի դիրեկտիվը՝ «կուսմասսայական աշխատանքի ծանրության կենտրոնը ցեխի և բրիգադ փոխադրելու մասին, ընտրելով ցեխային և բրիգադային ակտիվի կայուն կադրեր»։ ուրեմն կուսակցական ստորին ողակի ստեղծումը և ամրացումը — ահա կուսաշխատանքների կարևորագույն խնդիրներից մեկն արդյունաբերական բջիջներում։

Կենտկոմն իր նույն վորոշման մեջ «արձանագրելով կուսկազմակերպությունների ծայրահեղ թուլությունը գյուղում, խորթ տարրերով խճողված լինելը, վարչարարական տարրերի և խոտորումների լայն տարածումը գյուղական կազմակերպությունների աշխատանքներում, առաջարկեց հատուկ ուշադրություն նվիրել գյուղի կուսակցական կազմակերպությունների ստեղծման և ամրացման գործին՝ կազմակերպելով առաջին հերթին խորհտնտեսություններում, ՄՏ կայաններում և խոշոր կոլտնտեսություններում մի շարք ամուր հենակետեր, վորոնք պիտի ապահովեն գյուղական բջիջների իսկական բոլշևիկյան ղեկավարությունը»։ Ի՞նչ է ներկայացնում իրենից գյուղական կազմակերպությունների ցանցը և ի՞նչ է կատարված Կենտկոմի այս վորոշման կիրառման ուղղությամբ։

Հաշվետու շրջանում զգալի չափով լայնացել է կուսկազմակերպությունների ցանցը գյուղում. 29 թվի 368 կուսբջիջների փոխարեն ունենք այժմ 670 կուսակցական բջիջներ գյուղում, վորոնցից 129-ը կոլտնտեսություններին կից, 507-ը գյուղերում, 29-ը խորհտնտեսություններում և 5-ը ՄՏ կայաններում. յեթե 29 թ. մի բջիջի վրա ընկնում եր 3,3 գյուղ, այժմ ամեն մի բջիջ միացնում է 1,8 գյուղ, չսած, ինչպես տեսնում ենք, մոտենում ենք այն դրության, յերբ հնարավոր կլինի ունենալ կուսբջիջներ մեր բոլոր գյուղերում։ Կուսակցական աշխատանքների մեջ գյուղում նոր ողակ է կուսակցական գյուղական կոմիտեն, վոր, դժբախտաբար, մեր ընկերներից շատերը շարունակում են

շփոթել յերբեմն գոյություն ունեցած յենթատարածական կոմիտեյի հետ։ Ներկայումս ունենք 29 գյուղական կուսակցական կոմիտե, վորոնք միացնում են 143 կուսբջիջ և 1593 կոմունիստ։ Գյուղկոմիտեները կազմակերպված են խորհտնտեսություններին, ՄՏ կայաններին և խոշոր կոլտնտեսություններին կից, վորոնք այդպիսով վերածվում են կուսակցական աշխատանքի հիմնական հենակետերի՝ գյուղում. նրանք ղեկավարում են շրջակա գյուղերի և կոլտնտեսությունների կուսբջիջների աշխատանքները. գյուղկոմիտեները պետք է ոգտագործեն հիմնական հենակետային բջիջի փորձը և ուժերը՝ ամրացնելու համար կուսբջիջները շրջակա գյուղերում, առանց բյուրոկրատական միջանկյալ ողակ դառնալու կուսբջիջի և շրջկոմի միջև։ Կուսաշխատանքների վերակառուցման յերկրորդ մոմենտը գյուղում՝ առանձին արտադրական միավորներին կից կուսխմբակների կամ կուսկազմակերպիչների ստեղծումն է, մի աշխատանք, վոր առայժմ չափազանց դանդաղ է ընթանում։ Ծավալել և ամրացնել կուսկոմների ցանցը գյուղում, ստեղծել գյուղական բջիջներում կուսխմբակներ, ըստ արտադրական սկզբունքի, լայնացնել կոլտնտեսային բջիջների ցանցը՝ ահա կուսկազմակերպչական աշխատանքի հիմնական խնդիրները ներկայումս։

Մենք տեսնում ենք մի շարք նոր և դրական մոմենտներ գյուղական կուսկազմակերպության աշխատանքների մեջ. արագ թափով աճում են նրանք. մեկ ու կես տարում գյուղի կուսակցական կազմակերպությունն աճել է 3.139 նոր ընկերներով, և սակայն, Կենտկոմի գնահատականը «կուսկազմակերպությունների ծայրահեղ թուլության մասին գյուղում» ամբողջապես ճիշտ է նաև Հայաստանի գյուղական կազմակերպությունների նկատմամբ։ Կուսաշխատանքների թուլությունը—որինակ՝ հաշվետու շրջանում յերևաց այնպիսի սուր մի սիգնալի միջոցով, վորպիսին եր Արփայի «կոմունիստների» հակախորհրդային յելույթը, կուսաշխատանքների ծայր աստիճան թուլությունը, կուսդաստիա-

ընկերական աշխատանքի լիակատար բացակայությունը, անուշադիր վերաբերմունքը դեպի բջիջի սոցիալական կազմում առաջացող պրոցեսները, թույլ պայքարը կուլակի և օպորտունիստի դեմ հասցրին առանձին բջիջների մինչև լիակատար քայքայվածության, այլասերման, կուլակի հետ քաղաքականորեն և կազմակերպորեն զոդման խայտառակության: Արփան, իհարկե, պատահական, վոչ էլ յեզակի յերեվույթ էր. գյուղական կուսբջիջներում առանձին ելեմենտների այլասերման փաստեր ունենք և' Մեղրուց, և' Ապարանից, և' Լենինականից, և' Վեդուց, և' այլ շրջաններից: Դարալագյազի դեպքերից հետո մենք զտում անցկացրինք այդ շրջանի կուսկազմակերպության մեջ. վորոշ մաքրիչ աշխատանք կատարեցինք նաև գրեթե մեր բոլոր շրջաններում: Սակայն զտանով բավականանալ, իհարկե, չենք կարող. անհրաժեշտ է մշտական պայքար մղել գյուղական կուսբջիջների կազմի մաքրության համար, հարվածելով և կուսշարքերից վտարելով խորթ, անհարազատ, կուլակի ազդեցության յենթարկված աջ ոպորտունիստներին և «ձախ» քյալլագյոզներին. անհրաժեշտ է, ինչպես պահանջում է մեզանից Կենտկոմը, վերացնել վարչարարության տարրերը կուսաշխատանքներում գյուղում, կուսբջիջների գլխավորությամբ ծավալել ամենասուր պայքար՝ կուլակ-դաշնակցական ելեմենտների դեմ. անհրաժեշտ է ծավալել քաղաքական լայն աշխատանք անկուսակցական բանվորների և գյուղացիների մասսաներում, դաստիարակելով և կոփելով բանվորական և կոլտնտեսական լավագույն տարրերից կուսակցության նորանոր՝ ռեզերվներ:

Վորո՞նք են, ուրեմն, հիմնական պակասությունները գյուղական կուսկազմակերպությունների աշխատանքներում. մասսայական-քաղաքական ագիտացիայի, բացատրական աշխատանքի թուլությունը գյուղում տարվող մեր կոնկրետ ձեռնարկումների շուրջը, բազմաթիվ դեպքերում կուսգծի աղավաղումը, պայքարի թուլությունը կուլակի դեմ, և' վարչարարության, և' «ձախ» քյալլագյոզությունների դեպքեր բազմաթիվ գյուղբջիջներում. այս խոշորագույն թերությունների դեմ է, վոր պիտի կենտրոնացնենք կրակը՝ բարձրացնելու համար գյուղի կուսակցական կազմակերպությունների մարտունակությունը և աշխատանքների վորակը:

Հետևյալ կարևոր ցուցմունքը, վոր տվեց մեզ Կենտկոմը գյուղական կուսկազմակերպությունների աշխատանքների մասին՝ կայանում էր նրանում, վոր «առաջին կիսամյակի կոնկրետ խնդիր դարձնենք գյուղական կոմունիստների ամբողջ մասսայի ընդգրկումը մարքս-լենինյան դաստիարակության ցանցում և գյուղական կազմակերպությունների ղեկավարների տոկուն, ամուր կադրերի պատրաստումը»: Մենք չունենք դեռ սպառիչ տեղեկություններ կուսուսուցման ցանցի ծավալման և աշխատանքների մասին գյուղում. նախնական տվյալներով՝ այս տարի ունենք գյուղում 571 կուսդպրոց կամ խմբակ, վորտեղ ընդգրկված են 8.800 կոմունիստ և 7000 անկուսակցական: Ճիշտն ասած, այս թվերն ինձ այնքան էլ արժանահավատ չեն թվում. անվիճելի յե, վոր իրականում գյուղական կուսկազմակերպությունները դեռ չեն էլ մոտեցել Կենտկոմի վերոհիշյալ դիրեկտիվի իսկական իրականացման. դասագրքերի և ծրագրերի գծով էլ վատ է դրությունը մինչև այժմ: Մեր համագումարը վճռականորեն պետք է պահանջի, առանց այլևս ժամանակ կորցնելու, բեկումն մտցնել կուսուսուցման աշխատանքներում առհասարակ և մանավանդ գյուղում. այն կոմունիստը, վոր այսոր չի աշխատում սիստեմատիկաբար բարձրացնելու համար իր քաղաքական մակարդակը, տիրանալու համար Մարքսի, Լենինի, Ստալինի ուսմունքին՝ նա շուտ կամ ուշ հետ կմնա ու անպետք բալաստի կվերածվի մեր կուսակցության համար: Սխալ է, թե կուսուսուցումը դժվար է կազմակերպել՝ պրոպագանդիստների պակասի պատճառով. այդ պրոպագանդիստները կան, դա նույն ինքը կուսակցական ակտիվն է. պետք է վոր կուսակցական յուրաքանչյուր պատրաստված և ակտիվ ընկեր անպայման սովորի և կատարի

պրոլետարիատական ակտիվ աշխատանք՝ դաստիարակելու համար կուսակցական նոր, յերիտասարդ կադրերը։ Կուսուսուցումը կուսաշխատանքների հանգուցային խնդիրն է. ջախջախել նրա թերագնահատման օպորտունիստական տրամադրությունները, պայքարել նրա վորակի համար — ահա հիմնական խնդիրը։

ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՃՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Ընկերնե՛ր, կուսակցության աճման, նրա սոցիալական կազմի կարգավորման խնդիրները միշտ էլ կազմել են կուսշինարարության առանցքային խնդիրը. Ներկայումս մանավանդ կուսաճման խնդիրներն ունեն բացառիկ կարևոր նշանակություն, և Կենտկոմն իր աշխատանքներում միշտ ուշադիր հետևել է ու ղեկավարել կուսաճման գործը։ 1929 թվի հունվարի 1-ին Հայաստանի կոմկուսակցությունն ուներ իր շարքերում 10·064 կոմունիստ. 31 թվի հոկտեմբերի 1-ին ունեյինք 19·997 կոմունիստ. 2 տարում և 9 ամսում մեր կուսակցությունը գրեթե կրկնապատկել է իր թիվը՝ աճելով 9·933 մարդով։ *Տարեցտարի բարձրանում է մեր կուսակցության աճման տեմպը. 27 թվին Հայաստանի կոմկուսն աճել է ընդամենը 261 մարդով, 1928 թվին՝ 1·385 մարդով, 1929 թվին՝ 2·215 մարդով, 1930 թվին՝ 4·573 մարդով և, վերջապես, 1931 թվի 9 ամսում՝ 3·145 մարդով։ Մեզ համար, սակայն, կարևոր է վոչ միայն և վոչ այնքան աճման քանակը, վորքան աճման սոցիալական կազմը, նրա վորակական պատկերը։ Ներկայումս մեր կուսակցության ընդհանուր կազմի 57,5 տոկոսը բանվորներ են ըստ սոցիալական դրության, 34,1 տոկոսը գյուղացիներ և 8,4 տոկոսը ծառայողներ։ Այս ցուցանիշով դրությունն ընդհանուր առմամբ բավարար է. սակայն, յերբ ծանոթանում ենք կուսակցության կազմի յերկրորդ հիմնական ցուցանիշին՝ կուսակցության կազմին, ըստ ներկայումս կատարած աշխատանքի, տեսնում ենք արդեն վոչ այնքան մխիթարական պատկեր — ըստ աշխատանքի բանվորները կազմում են կուսակցության կազմի 29,8*

տոկոսը, գյուղացիները՝ 34,1 տոկոսը, ծառայողները՝ 27,2 տոկոսը։ Յեթե 1929 թվի հունվարի 1-ին բանվորներն ըստ զբաղմունքի կազմում եյին կուսակցության 28,7 տոկոսը, 30 թվի հոկտեմբերի 1-ին նրանք կազմում են կուսակցության կազմի միայն 29,6 տոկոսը։ Այսպիսով մենք վոչ միայն չենք մոտեցել կուսհամագումարի վորոշմանը՝ ունենալ կուսկազմակերպությունների կեսն արտադրության մեջ աշխատող բանվորներ, այլև մի քիչ հեռացել ենք այդ հեռանկարից։ Սա բացատրվում է նրանով, վոր բանվորների կուսշարքերն ընդունելության տեմպը դեռ չի համապատասխանում աճման ընդհանուր տեմպերին, նշանակում է, մեր բանվորական կազմակերպությունները դեռ թույլ են աշխատում կուսակցության աճման և սոցիալական կազմի կարգավորման բնագավառում. *մինչդեռ Ալլահվերդում, Ղափանում, Լենինականում, Յերևանում արտադրական բանվորների հաշվին աճելու հսկայական ռեզերվներ կան։ Կուսշերտն Ալլահվերդում բանվորների մեջ կազմում է 31,7 տոկոս, տարվա սկզբի 24 տոկոսի փոխարեն, Ղափանում՝ 28,3 տոկոս է՝ տարվա սկզբի 28,8 տոկոսի փոխարեն. Լենտեքստիլում կուսշերտը կազմում է բանվորների 19,3 տոկոսը, տարվա սկզբի 14,5 տոկոսի փոխարեն։ Նշանակում է՝ ծավալելով մասսայական քաղաքական աշխատանքն անկուսակցական բանվորների, մանավանդ բանվորական ակտիվի մեջ՝ կարող ենք նոր զարկ տալ բանվորներին կուսշարքերում ընդգրկելու աշխատանքներին։*

Կուսակցության աճման և սոցկազմի կարգավորման հանրագումարները պահանջում են սրել ուշադրությունն այս հարցերին, պահանջում են ապահովել կուսակցության այս մասին ընդունած դիրեկտիվների անշեղ կենսագործումը՝ կուսշարքերը մտնողներից ամենաքիչը 60 տոկոսն ընդունել արտադրական բանվորներից, ընդունել նաև լավագույն հարվածային կոլտնտեսականներին, մանավանդ ազգային փոքրամասնությունների շրջաններում, միշտ յելակետ ունենալով ամրացնել և մեծացնել բանվորական կորիզը կուսշարքերում։

ԿԱԴՐԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԳՈՐԾԸ

Կադրերի խնդիրը, ընկերնե՛ր, մեր աշխատանքների ամենահիմնական ողակներից մեկն է. սոցիալիզմի կառուցման աշխատանքների վոր ճյուղն էլ վոր վերցնենք, կնկատենք պատրաստված վորակյալ կադրերի սուր կարիք և հսկայական պակաս: Մեր արդյունաբերության բուռն աճումը, գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցումն ինժեներների, տեխնիկների, գյուղատնտեսների, անասնաբույժների որավուր աճող պահանջ են ներկայացնում: «Մեր յերկիրը,—շեշտում է ընկեր Ստալինը,—թևակոխել է իր զարգացման այն շրջանը, յերբ բանվոր դասակարգն ինքը պիտի ստեղծի իր սեփական արտադրական-տեխնիկական ինտելիգենցիան, վորն ընդունակ լինի պաշտպանել բանվոր դասակարգի, վորպես տիրող դասակարգի շահերը՝ արտադրության մեջ»: Ի՞նչ է կատարվում մեզ մոտ, Հայաստանում, ստեղծելու համար բանվոր դասակարգին հարազատ տեխնիկական ինտելիգենցիա:

Հաշվետու շրջանում ամենից առաջ խոշոր չափով լայնացավ տեխնիկական-գյուղատնտեսական միջին կադրերի պատրաստման գործը. 1930 թվի 48 տեխնիկումների փոխարեն 31 թվին ունեյինք 64 տեխնիկում, վորտեղ այժմ պատրաստվում են 7.314 ընկեր. յեթե 30 թվին տեխնիկումների ուսանողների միայն 62 տոկոսն եր կազմում սոցիալական առաջին կատեգորիայից, ապա 31 թվին բանվորների և բանվորական ծագում ունեցողների տեսակարար կշիռը բարձրացել է մինչև 72,3 տոկոսի: Բարձր ուսումնական հիմնարկներում — 9 ինստիտուտներում ներկայումս սովորում են 3.544 ուսանողներ, վորոնցից առաջին կատեգորիայի՝ 45 տոկոս: Այսպիսով, տեսնում ենք, վոր նոր կադրերի ստեղծման գործը բավական լայն ծավալ է ընդունել արդեն: Հաշվետու շրջանում մեծ չափով աճել է նաև ֆաբգործուսների ցանցը. 1929 թվի 290 հոգու և 1930 թվի 283 հոգու ընդունելության փոխարեն՝ 31 թվին ընդունել ենք ֆաբգործուսներում 2.527 հոգի: Այսպիսով, բավարար կարող ենք համարել կադրերի պատրաստման գործի քանակական ծավալը: Հիմնական պակասությունները այստեղ յերկուս են — ամենից առաջ՝ չափազանց անբավարար դրության մեջ է գտնվում ուսանողության կենցաղային կարիքների բավարարման գործը, յերկրորդ՝ դեռ շատ ցածր է ուսման վորակը մեր տեխնիկումներում և ինստիտուտներում: Այս տարի խնդիր պիտի դնենք հատուկ ձեռնարկումների միջոցով բարելավել պրոլետարական ուսանողության կենցաղի պայմանները, ապահովել ուսանողներին հանրակացարաններով և բարելավել սննդի պայմանները, ինչպես նաև միջոցներ պիտի մտածենք բարձրացնելու համար ուսման վորակը:

Սակայն սա գործի միայն մի կողմն է: Մյուս կողմից, շարունակում է ընկեր Ստալինը, բանվոր դասակարգի արտադրական-տեխնիկական ինտելիգենցիան կձևավորվի մեր գործարանների պրակտիկ աշխատանքներից, վորակյալ բանվորներից, բանվոր դասակարգի կուլտուրական ուժերից: Խնդրի այս կողմն է ահա, վոր մոռացության է տրվում մեզ մոտ շատ հաճախ: Յեթե աննպատակահարմար ենք համարում արտադրական բանվորների առաջքաշումը խորհրդային ապարատում, այդ դեռ չի նշանակում, թե բանվորներին չի կարելի առաջ քաշել հենց արտադրության մեջ, կամ թարմացնել պետական ապարատը կենտրոնում և շրջաններում՝ առաջ քաշելով կոլտնտեսային ակտիվից նոր, աշխատանքներում և պայքարում կոփված ընկերների: Հաշվետու շրջանում առաջ է քաշված ընդամենը 281 կոլտնտեսական. քիչ է. պետք է շարունակել կոլտնտեսային ակտիվի ավելի համարձակ առաջքաշումը՝ միաժամանակ լուրջ ձեռնարկումներով ապահովելով ինչպես նոր առաջ քաշվածների, նմանապես նաև բոլոր ղեկավար կադրերի վերապատրաստման գործը:

ԼԵՆԻՆՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴԻՐՔԵՐՈՒՄ

Հոկտեմբերի 31-ի վորոշման մեջ, Համկոմկուսի Կենտկոմը մատնանշեց, վոր «Անդրյերկոմը վորոշ հաջողություններ ձեռք բերելով Անդրֆեդերացիայի տնտեսական-քաղաքական ամրապնդման գործում՝ չապահովեց Անդրկովկասյան Ֆեդերացիայի մեջ մտնող ազգային հանրապետությունների ինքնագործունեությունը և տնտեսական նախաձեռնությունը լայնորեն ծավալելու գործը՝ Կենտկոմի դիրեկտիվների համաձայն: Անդրյերկոմը թույլ տվեց ծայրահեղ կենտրոնացում Անդրֆեդերացիայի տնտեսական և կուլտուրական շինարարության ղեկավարության գործում, վոր առաջ բերեց հանրապետական մարմինների դիմազրկում մի շարք ճյուղերում»: Ավելորդ չի մի անգամ ևս կրկնել, վոր ազգային քաղաքականության կիրառման բնագավառում Անդրյերկոմի նախկին ղեկավարության կատարած այս սխալը, նրա կատարած ամենածանր սխալներից մեկն եր: Խախտելով Համկոմկուսի Կենտկոմի 29 թվի աշնան հայտնի դիրեկտիվն Անդրֆեդերացիայի ամրացման մասին, վոր (այդ ամրացումը) պիտի շաղկապվեր ազգային հանրապետությունների տնտեսական ինքնագործունեության և նախաձեռնության լայն ծավալման հետ, մոռացության տալով լենինյան Կենտկոմի ճիշտ ֆորմուլի այս յերկրորդ մասը՝ Անդրյերկոմի նախկին ղեկավարությունն ըստ եյության տուրք եր տալիս մեծապետական շովինիզմին, «վոր ձգտում ե անտեսել լեզվի, կուլտուրայի և կենցաղի ազգային տարբերությունները, ձգտում ե պատրաստել ազգային հանրապետությունների և մարզերի վերացումը, ձգտում ե խախտել ազգային հավասարակշռության սկզբունքը, սպականերծ անել կուսակցության քաղաքականությունը, ապարատի, մամուլի ազգայնացման, դպրոցի և պետական ու հասարակական այլ կազմակերպությունների ազգայնացման սկզբունքը» (Ստալին): Հետա-

ղարձ քննադատական ակնարկով յեթե նայելու լինենք Անդրյերկոմի նախկին ղեկավարության աշխատանքների վրա, կնկատենք, վոր նրա աշխատանքներում կարելի յե գտնել մեծապետական շովինիզմի վերոհիշյալ գրեթե բոլոր արտահայտությունների տենդենցները: Կատարված սխալն ուղղելու, Անդրկովկասի պայմաններում լենինյան ազգային քաղաքականությունն անշեղ կիրառելու համար, համաձայն ընկեր Ստալինի ցուցումների, մենք ամբողջ մի շարք ճշտումներ մտցրինք ազգային հանրապետությունների և ֆեդերատիվ որգանների ֆունկցիաների և փոխհարաբերությունների մեջ, մենք վերացրինք «ծայրահեղ կենտրոնացումն Անդրֆեդերացիայի տնտեսական և կուլտուրական շինարարության ղեկավարման գործում». արդյունաբերության և գյուղատնտեսության մի շարք ճյուղեր և որգաններ, ինչպես, որինակ՝ տեքստիլ արդյունաբերությունը, շինանյութերը, քիմիան, փայտամշակման գործը, սննդարդյունաբերությունը և այլն՝ անցան հանրապետական որգանների իրավասության տակ. ճշտվեցին և ավելի լայնացան՝ հանրապետական ղեկավարող տնտեսական որգանների, որինակ, Պետպլանի ֆունկցիաները: Միութենական նշանակության մի շարք տնտեսական կազմակերպությունների գծով, վորտեղ մանավանդ, որինակ՝ Սկոտովոդի իրավասության տակ անցած խորհտնտեսություններում, զգացվում եյին մեծապետական շովինիզմի արտահայտություններ, կազմակերպում ենք հանրապետական որգաններ՝ ավելի ամուր և անմիջական դարձնելու համար հանրապետական մարմինների ղեկավարությունը: Լիակատար վերակազմման յենթարկվեց Զակսայուզը՝ սպառողական կոոպերացիայի հանրապետական որգանների իրավասությունների լայնացման նշանաբանի տակ: Վերջապես՝ արմատական վերակառուցման յենթարկեցինք նաև կադրերի պատրաստման գործը՝ նպատակ ունենալով առաջ տանել կադրերի պատրաստումը վոչ միայն միջին, այլև բարձր ուսումնական հիմնարկություններում՝ մայրենի լեզվով, նախկին անդրկովկասյան մասշտաբով կազմակերպ-

ված ԲՈՒՀ-երը վերակառուցելով, վորպես հանրապետական ԲՈՒՀ-եր:

Ազգային քաղաքականության ասպարեզում կատարված, ներկայումս ուղղված և ուղղվող սխալները յեկան մի անգամ ևս ապացուցելու ստալինյան այն թեզը, թե տվյալ շրջանում, ազգային քաղաքականության բնագավառում գոյություն ունեցող թեքումներից գլխավոր վտանգը մեծապետական շովինիզմն է. և իսկապես, ո՞ւր կտանեյին մեզ Անդրյերկոմի նախկին ղեկավարության սխալները, յեթե ժամանակին նրանց առաջը չառնեյին Համկոմկուսի Կենտկոմը և ընկեր Ստալինը, յեթե վոչ՝ դեպի ազգային հանրապետությունների լիակատար դիմազրկում և նսեմացում, մի հանգամանք, վոր ջուր է ավելացնում դասակարգային թշնամու ջրաղացին և կաշկանդում է ցարական-բուրժուական նախկին Ռուսաստանի կողմից կեղեքված ազգային մարզերի և ծայրամասերի աշխատավորության արագատեմպ կուլտուր-տնտեսական վերելքը: Յես անհրաժեշտ եմ համարում չեշտել այս հանգամանքը մանավանդ այն պատճառով, վոր մեզ մոտ, 16-րդ համագումարից հետո յեղան գրական մի շարք յելույթներ այն մասին, թե մեր, Հայաստանի պայմաններում դժվար է ընդունել մեծապետական շովինիզմը վորպես գլխավոր վտանգ, մի կոպիտ սխալ, վոր ուղղվեց Կենտկոմի կողմից 1930 թվին հրավիրված իդեոլոգիական խորհրդակցության ժամանակ:

Ընկերնե՛ր, պարզ է, վոր լենինյան ազգային քաղաքականության անշեղ կիրառման առաջին պայմանը՝ պայքարի ավելի սրումն է՝ գլխավոր վտանգ մեծապետական շովինիզմի դեմ: Սակայն հարցն այդպես դնելով չի կարելի թերագնահատել տեղական նացիոնալիզմի վտանգը, վորի եյությունը կայանում է հետևյալ ձգտման մեջ. «առանձնացնել, պարփակել իր ազգային կյանքի շրջանակների մեջ, քողարկել դասակարգային ներհակություններն իր ազգում, պաշտպանվել վելիկոռուսական շովինիզմից, սոցիալիստական շինարարության ընդհանուր հոսանքից հեռանալու ճա-

նապարհով, չտեսնել այն, ինչը մերձեցնում, միավորում է ԽՍՀՄ աշխատավորական մասսաներին ու ժողովուրդներին և տեսնել միայն այն, ինչ կարող է հեռացնել նրանց միմյանցից» (ՍՏԱԼԻՆ): Սոցիալական ի՞նչ ուժերի արտահայտություն է տեղական նացիոնալիզմը. նա արտահայտում է առաջներում հարստահարված ազգությունների, այժմ մեռնող դասակարգերի դժգոհությունը պրոլետարական դիկտատուրայի ռեժիմից: Կոլտնտեսային շարժման հաղթական վերելքի պայմաններում կործանվող՝ կուլակը, չարչին, առևտրականը, նախկին բուրժույը, բուրժուական մտավորականը— ահա տեղական նացիոնալիզմի սոցիալական հիմքը, վորի տրամադրություններով վարակվում են կուսշարքերի առանձին անկայուն էլեմենտները և ողակները: Մենք ունենք Անդրկովկասում տեղական նացիոնալիզմի արտահայտության այնպիսի օրինակներ, ինչպիսին եր վրացական ուկլոնիզմը,— հայկական ուկլոնիզմը, մեր կուսակցության, այսպես կոչված, նախկին ղեկավարության որոշ և այլն: Մենք նկատում ենք կուսակցության լենինյան ազգային քաղաքականության, Անդրկովկասյան Ֆեդերացիայի թերագնահատության առանձին տենդենցներ: Պետք է ջախջախել այդ տրամադրությունները, ազգային հանրապետությունների տնտեսական ինքնագործունեյության և նախաձեռնության լայն ծավալմամբ ե՛լ ավելի պիտի ամրացնենք Անդրկովկասյան Ֆեդերացիան:

Մեր կուսակցության կազմակերպություններն անխնա պայքարելով մերկացրին և հարվածեցին նացիոնալ-ուկլոնիզմի առանձին արտահայտությունները, սակայն պայքարը նացիոնալ ուկլոնիզմի դեմ յերբեք էլ չի կորցրել իր առանձնակի ակտուալ նշանակությունը, մանավանդ Անդրկովկասի պայմաններում. անհրաժեշտ է ավելի բարձրացնել մասսաների աչալրջությունն այս ֆրոնտում:

Դաշնակների արտասահմանյան շների անընդհատ վոռնոցը բամբակի դեմ, պղնձարդյունաբերության զարգացման դեմ, Հայաստանի իբր թե «իրավազուրկ» դրության մասին՝

հաճախ են զուգադիպում մեր յերկրում նացիոնալ-ուկրանիստական տարրերի տրամադրություններին, միայն նրանք վախենում են բացահայտ արտահայտվել:

Ահա թե ինչու համագումարը պետք է պահանջի ազգային քաղաքականության բնագավառում սրել պայքարը յերկու ֆրոնտի վրա, ինչպես գլխավոր վտանգ մեծապետական շովինիզմի, նմանապես նաև տեղական նացիոնալիզմի, նացիոնալիստ-ուկլոնիզմի դեմ:

Կուսակցության ազգային քաղաքականության անշեղ կիրառման համար անհրաժեշտ է ուժեղացնել բոլոր կուսակցական կազմակերպությունների ուշադրությունն այս խնդիրներին. պետք է կրկնենք մեր պահանջը՝ լինել բոլոր գծերով ավելի հետևողական՝ «ապարատի, մամուլի ազգայնացման, դպրոցի և պետական ու հասարակական այլ կազմակերպությունների ազգայնացման սկզբունքի» կիրառման գործում: Պետք է ավելի ուժեղ զարկ տանք ձևով ազգային, բովանդակությամբ պրոլետարական-ինտերնացիոնալիստական մեր կուլտուրայի զարգացմանը: Վորովհետև հանրածանոթ են մեր խոշորագույն նվաճումներն այս (կուլտուրայի) բնագավառներում, յես նրանց վրա կանգ չեմ առնի. թույլ տվեք միայն յերկու խոսք հիմնական բացերի մասին:

Հայաստանի պրոլետարական գրականությունը հաշվետու շրջանում ունի, անշուշտ, վորոշ հաջողություններ. հարվածայինների հավաքը գրականության մեջ տվեց մեզ յերիտասարդ, մասսաների ծոցից բարձրացած յերիտասարդ գրողների զգալի մի շերտ. գրականությունն այլևս «ընտրյալների» գործը չէ միայն, նրան սկսում են «տիրանալ» կուլտուրապես բարձրացող աշխատավորական ամենալայն մասսաները. սա մեր հաղթանակներից, մեր հաջողություններից մեկն է: Արձանագրելով քանակական մի շարք դրական մոմենտներ, չենք կարող, սակայն, չընդգծել, վոր մեր գրականության վորակը չափազանց հետ է մնում նոր պայմանների ավելի բարձր պահանջներից. Մեր գրականությունը դեռ մինչև այժմ չկարողացավ գեղարվեստորեն արտացոլել

մեր պայքարն ու շինարարությունն իրենց ամբողջ ծավալով և խորությամբ, նա չկարողացավ գեղարվեստական աչքի ընկնող գործերով ցույց տալ մեզ ժամանակի հերոսներին, բանվոր հարվածայիններին, գյուղի սոցիալիստական վերակառուցման ֆրոնտում մարտնչող կոլտնտեսային ակտիվին: Այստեղ պակասությունը վոչ այնքան թեմատիկայի ընտրության մեջ է,—մեր գրողները յերգում են և՛ կոլտնտեսության, և՛ կոլտնտեսուհու, և՛ գործարանի մասին,— խնդիրը գրական յերկերի գեղարվեստական վորակի անբավարար լինելն է: Մեր գրականությունը դեռ չտվեց եպոխայի պատկերացման վոչ մի «մեծ կտավ»: Միակ փորձը, վոր արվել է հաշվետու շրջանում՝ գրական մեծ յերկի միջոցով տալ մեր շինարարության գեղարվեստական վերարտադրությունը՝ դա ընկեր Շահինյանի «Հիդրոցենտրալ»-ն է, այն էլ գրված ռուսերեն լեզվով: Ժամանակը չէ՞ արդյոք արմատապես վերակառուցել մեր գրական կազմակերպությունների աշխատանքը՝ գրականության վորակի բարձրացման, գրականության մեջ և նրա միջոցով յերկու ֆրոնտի վրա պայքարն ավելի սրելու նշանաբանի տակ:

Յեթե հետ է մնացել մեր գրականությունը նոր շրջանի նոր պահանջներից՝ ապա անբավարար է դրությունը նաև արվեստի մյուս ֆրոնտներում՝ յերաժշտության, կերպարվեստի, կինոյի գծով: Յերաժշտության և կերպարվեստի բնագավառում դեռևս չափազանց թույլ է կուսակցական ղեկավարությունը և քիչ են պրոլետարական էլեմենտները. ուշադրություն դարձրեք, ի՞նչ են յերգում մեր մասսաները, մեր յերիտասարդությունը, ի՞նչ չափով են սպասարկում մեր արվեստագետները մասսաների պահանջներն այս ուղղությամբ. դժբախտաբար, փոխանակ ծավալելու պայքարը յերկու ֆրոնտի վրա, մեր մի շարք ընկերներ «ձախ» քյալլագյոզության վորոշ նշաններ ցույց տվին՝ խնդիր դնելով վարչական կարգով արգելել մի շարք տարածված, կարելի յե ասել՝ ժողովրդական դարձած նոր յերգեր. Կենտրոնական Կոմիտեն ուղղեց կատարված սխալը. արվեստի բնագավա-

ռում հիմնական խնդիրը ներկայումս կուսակցական ղեկավարության ամրացումն է և համառ աշխատանքով ու յերկու ֆրոնտի վրա պայքարի միջոցով՝ պրոլետարական էլեմենտների կողմից հեգեմոնիայի նվաճումը։

Բոլոր սովխոզներից ամենակարեվորի և մասսայականի՝ կլինոյի ֆրոնտում գոյություն ունեցող ներկա դրությամբ նույնպես չենք կարող գոհանալ։ Հաշվետու շրջանում Հայկլինոյի արտադրության մեջ,—իսկ արտադրության քանակական ցուցանիշներն այնքան էլ վատ չեն,—չկա մի պատկեր, վոր իդեոլոգիական և գեղարվեստական մակարդակով աչքի ընկնող գործ լինի։ Վորակի խնդիրը աչքաթող են արել Հայկլինոյի ղեկավարները։ Յեթե բավարար դրության մեջ չէ կինո-արտադրությունը, ապա ավելի վատ է դրությունը կինո-ցանցի լայնացման բնագավառում։ Մեր շրջանային կենտրոնների մեծ մասում չկան կինո-ստացիոնարներ. կապիտալ շինարարության գծով կինոյի բնագավառում գրեթե առաջ չենք շարժվել։ Անհրաժեշտ է ավելի մեծ ուշադրություն կինոյին. շատերը դեռ մինչև այժմ չեն գնահատում կինոյի իսկապես վոր հսկայական նշանակությունը սոցիալիստական շինարարության մեջ՝ վորպես մասսաների կազմակերպման ու դաստիարակության հզոր լծակի։ Ժամանակն է, ընկերնե՛ր, բոլշևիկյան տեմպեր և վորակ հաղորդել կինո-շինարարությանը, այս իսկ տարի սկսելով շրջանային բոլոր կենտրոններում կինոյի համար շենքերի կառուցումը, լուրջ ուշադրություն դարձնելով Հայկլինոյի արտադրության վորակի բարձրացման վրա։

Ծավալելով բոլշևիկյան պայքարը յերկու ֆրոնտում՝ պետք է ապահովենք լենինյան ազգային քաղաքականության անշեղ կիրառումը և ազգային ձևով՝ պրոլետարական բովանդակությամբ՝ մեր նոր կուլտուրայի աննախընթաց ծաղկումը։

ԿՈՐԾԱՆԻՉ ԿՐԱԿ ՀԱՅ ԲՈՒՐԺՈՒԱԶԻԱՅԻ ՖԱՇԻՍՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ, ԻՄՊԵՐԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼ՝ ՀԱԿԱՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅԱՆ

Հաշվետու շրջանը մեր յերկրում դասակարգային թշնամու ջախջախման, սոցիալիզմի հաղթական առաջխաղացման, սոցիալիզմի դիրքերի ամրացման շրջանը յեղավ։ Այդ շրջանը չեր կարող իր դրոշմը չդնել դասակարգային թշնամու բոլոր ուժերի, բոլոր գաղափարախոսությունների արտահայտության վրա, չեր կարող չակտիվացնել կործանվող թշնամու ջղաձգությունները և գալարումները։ Կուլակային տարրերը կատաղի դիմադրություն են ցույց տալիս մեր բոլոր ձեռնարկումներին. մենք գրավում ենք նորանոր դիրքեր միայն անողոք պայքարի միջոցով, ջախջախելով կուլակ-դաշնակցական տարրերի դիմադրությունը։ Այդ դիմադրությունը հաշվետու շրջանում արտահայտվեց բազմազան ձևերով. դաշնակները՝ տեսնելով իրենց դասակարգային կարևոր պատվանդաններից մեկի մոտալուտ կործանումը՝ կուլակության մոտեցող լիկվիդացիան՝ համատարած կոլեկտիվացման հիման վրա, կանգ չառան և վոչ մի միջոցի առաջ՝ խանգարելու կոլտնտեսային շարժման հաղթական առաջխաղացումը և ամրացումը. Նրանց բոլոր փորձերը՝ պրովոկացիայի յենթարկել աշխատավոր գյուղացիությունը և գրգռել նրա առանձին շերտերը մեր ձեռնարկումների դեմ, խայտառակ անհաջողության մատնվեցին։ Այլ կերպ չեր էլ կարող լինել. մեր գյուղի աշխատավոր մասսաները չեն կարող մոռանալ դաշնակներին՝ վորպես գյուղի ցեցերի և ապրուկների պաշտպանի, վորպես աշխատավոր գյուղացիության արյունարբու թշնամու՝ կուլակության դասակարգային պաշտպանի՝ գիշատիչ դեմքը. Նրանք գիտեն հայ բուրժուազիայի ֆաշիստական կուսակցության դերը՝ վորպես իմպերիալիստների վարձկանի, վորի դրոշակի վրա գրված է մեր ազատ, խորհրդային յերկրի գաղութային ստրկացման, մեր

աշխատավորական մասսաների վզին նոր բուրժուազիայի և իմպերիալիստների կրկնակի արյունոտ լուծը փաթաթելու պահանջը:

Դաշնակների բոլոր պրովոկացիոն փորձերն աշխատավորական մասսաների կողմից տեղն ու տեղը դիմակազերծ արվեցին և կործանիչ հարված ստացան. մի անգամ ևս պարզվեց Խորհրդային Հայաստանի նկատմամբ «գաղափարական օպոզիցիայի» դերի մեջ լինելու մասին աշխատավորական մասսաների վոխերիմ թշնամիների՝ դաշնակների հայտարարությունների ամբողջ ստահոդությունը. կասկած չկա, վոր դաշնակները յեթե ուժ ունենային, յեթե կարողանային՝ մինչև այժմ արդեն հարյուր անգամ բարձրացրած կլինեյին զինված պայքար Հայաստանի բանվորների և գյուղացիների դեմ, տապալելու համար խորհրդային իշխանությունը. յեթե չեն արել՝ իրենց մեղքը չէ, ինարկե, շատ անգամ են մտածել, ծրագրել և փորձել, բայց ամեն անգամ ջարդ ու փշուր են յեղել Հայաստանի բանվորների, կոլտնտեսականների և աշխատավոր գյուղացիների միասնական հարվածների տակ: Կատարյալ անհաջողության մատնվելով մեր դեմ վորևե մասսայական շարժում ստեղծելու գործում, դաշնակները փորձեցին ակտիվ, զինված պայքարի մի այլ ձև. նրանք կազմակերպել փորձեցին կուլակ-դաշնակցական ակտիվ տարրերից ավազակային, բանդիտային խմբեր՝ խանգարելու համար աշխատավոր գյուղացիության անդորրը, ամեն կերպ վնասելու համար կոլտնտեսշարժումը, տերորի յենթարկելու համար կոլտնտեսշինարարության լավագույն մարտիկներին: Բանդիտական այդ խմբերը, որինակ, Պարույրի բանդան Դարալագյազում և Միհրանի բանդան Թալինում՝ անմիջականորեն կապված եյին դաշնակների Պարսկաստանի ղեկավար օրգանների հետ, ստանում եյին նրանցից հրահանգներ, զենք և միջոցներ: Դաշնակ-կուլակային այդ բանդաները, արտահայտելով կործանվող կուլակների կատաղությունը՝ կանգ չեյին առնում ամենագազանային միջոցների առաջ՝ ահաբեկելու համար

կոլտնտեսային գյուղացիությունը—կոլտնտեսային տեղերի հրկիզում, կոլտնտեսային անասունների փչացում, մի քանի ակտիվ կոլտնտեսականների գազանաբար սպանություն և այլն, և այլն—ահա կուլակների դասակարգային անզոր կատաղության արտահայտությունը: Կուլակ-դաշնակցական այդ թափթփուկների մի քանի վոհմակները չեյին սակայն, վոր պիտի կասեցնեյին աշխատավոր գյուղացուն կուլակային շահագործումից ազատագրելու մեր մեծ գործը, կոլտնտեսշինարարության հաղթական վերելքը. ընդհակառակն, բանդիտական վոհմակները, գրեթե մինչև վերջին ակտիվ բանդիտը, ֆիզիկական վոչնչացման յենթարկվեցին աշխատավոր մասսաների անմիջական մասնակցությամբ, նրանց ձեռքով: Վերջերս լիկվիդացիայի յենթարկվեցին բանդիտների վերջին մնացորդները՝ Պարույրի գլխավորությամբ Դարալագյազում՝ և Միհրանի գլխավորությամբ՝ Թալինում: Այսպիսով, անհաջողության մատնվեց դաշնակների և այս փորձը՝ բանդիտիզմի միջոցով փրկել կուլակությունը մոտալուտ և անխուսափելի կործանումից:

Պարզ է, ընկերներ, վոր ինչքան էլ կատաղեն և գազազեն մեր դասակարգային թշնամիները, ինչքան էլ ատամներ կրճտացնեն դաշնակ շներն այստեղ և արտասահմանում, պատմությունը վճռել է արդեն, և վճռել է անվերադարձ կերպով, նրանց ճակատագիրը. կոլեկտիվ տնտեսությունների շինարարության նորանոր հաջողությունները մոտեցնում են մեզ մոտ, Հայաստանում ևս, համատարած կոլեկտիվացման հիման վրա՝ կուլակության լիկվիդացիայի քաղաքականության կիրառումը: Այրվում է դաշնակների վոտքի տակի հողը, և կործանվող դասակարգի մահամերձ ջղաձգությունները չեն փրկի նրան. մեր յերկրում Դաշնակցության վերջին հենարանի՝ կուլակության լիկվիդացիայի ժամը մոտենում է. Դաշնակցության բոլոր դավերն ու մեքենայությունները արդեն անզոր են կասեցնելու պատմության անիվի սլացումը: (Ծափեր):

Այսպիսով, անմխիթար են, հուսահատեցուցիչ՝ մեր յերկրի մոտալուտ հեռանկարները դաշնակների համար։

Իսկ ինչ դրություն է տիրում արտասահմանի հայկական գաղութավայրերում. հայտնի է, վոր կապիտալի և իմպերիալիզմի տիրապետության պայմաններում, չարաշահության յենթարկելով գաղութավայրերի հայ աշխատավոր մասսաների մեծ մասի դասակարգային հետամնացությունը և ազգայնական նախապաշարմունքները, Դաշնակցությունն իր ուժերի չափի կատարում է իմպերիալիստական տերերի պատվերը՝ մասնակցելով հակախորհրդային ինտերվենցիայի իդեոլոգիական նախապատրաստական աշխատանքներին։ Սակայն այստեղ ևս, հայկական գաղութներում, դրությունը փոխվում է Դաշնակցության դեմ։ Կապիտալիզմի ընդհանուր կրիզիսը գոյության անտանելի պայմաններ է ստեղծում շահագործվող մասսաների համար, նրանց թվում նաև գաղութահայ աշխատավորության համար. կապիտալիստական ռեժիմի դաժան պայմանները, բանվորների քաղցը և ստրկական շահագործումն արագացնում են նաև արտասահմանի հայ աշխատավորության դասակարգային գիտակցության բարձրացման պրոցեսը. այստեղ էլ շարժվում է Դաշնակցության և ազգայնական մյուս կուսակցությունների վոտի տակի հողը։ Թե ինչքան խորն է այդ պրոցեսը՝ այդ տեսնում ենք աշխատավորական ելեմենտների կողմից Դաշնակցության շարքերի լքման յերևույթի մասսայական բնույթի մեջ. նայեցեք արտասահմանի աշխատավորական թերթերը. որ չի լինում, վոր այդ թերթերի միջոցով հրապարակ չգան յերեկվա դաշնակցականները, հայ բուրժուազիայի ֆաշիստական կուսակցության շարքերից հեռանալու հայտարարություններով. հարյուրների յե հասնում նախկին դաշնակ բանվորների և աշխատավորների թիվը, վորոնք Դաշնակցության դեմ ուղղված ակտիվ պայքարով այսօր քավում են դասակարգի առաջ՝ վորոշ ժամանակ Դաշնակցության ոգտին աշխատելու մեղքը։ Այս պայմաններում Խորհրդային Հայաստանի կառավարության առաջադրած

ներգաղթի ծրագիրը շշմեցուցիչ հարված եր դաշնակների գլխին. մարդիկ կոկորդ եյին պատռում «խորհրդային դժոխքի» մասին Հայաստանում, իսկ գաղութահայ աշխատավորները տեսնում են, թե ինչպես տնտեսական բուռն վերելքի հաղթական շրջանն ապրող Հայաստանի աշխատավորները դասակարգային ոգնության ձեռք են յերկարում կապիտալիստական յերկրներում չարչարվող, իմպերիալիզմի և Դաշնակցության քաղաքականության զոհ աշխատավորական մասսաներին։

Ներգաղթի փաստն է՛լ ավելի արագացրեց արտասահմանի հայ աշխատավորության դասակարգային սթափման գործը։ Դաշնակները, դիմակավորվելով կեղծ ու սուտ հայտարարություններով, ըստ էության դեմ դուրս յեկան ներգաղթին, և ուրիշ կերպ վարվել չեյին կարող։ Չե՞ վոր նրանք զրկվում են իմպերիալիստական թնդանոթների համար տերերին խոստացած մսից, զրկվում են այդ միսն իմպերիալիստական շուկայում գարշելի վաճառքի հանելու հնարավորություններից։ Դաշնակների կողմից Պիրեում (Հունաստան) կազմակերպված գազրելի պրովոկացիան՝ խորհրդային հայրենիքը մեկնող աշխատավորների դեմ և մահափորձը՝ ուղղված Խորհրդային Հայաստանի ներկայացուցչի դեմ՝ տրամաբանական մի օղակն է ներգաղթի դեմ ուղղված՝ դաշնակների դավերի և մեքենայությունների ընդհանուր շղթայի։

Սակայն, ընկերներ, ինչպես դաշնակների պրովոկացիան չի կարող կասեցնել ներգաղթի շարժումը, այնպես և դաշնակների կողմից բոլոր գաղութներում գիտակից հայ աշխատավորների դեմ ուղղված գնդակն ու դաշույնը չեն կարող արգելակել մասսաների դասակարգային գիտակցության արագացումը։ Վերջին յերևույթը վերջնականապես խախտել է «տղերքի հավասարակշռությունը»։ Բուենոս-Այրեսում դաշնակներն սպանում են նրանց մեքենայությունների դեմ պայքարող յերիտասարդ ընկեր Գասպարյանին, Սուրիայում տասնյակներով և հարյուրներով ֆրանսիական իմպերիալիզմի բանտերն են լցնել տալիս գիտակցության յե-

կած հայ աշխատավորներին, Ֆրանսիայում՝ մատնություններով և պրովոկացիաներով զրկում են վերջին պատառ հացից՝ դաշնակների դեմ պայքարող հայ բանվորներին. և այսպես բոլոր գաղութներում: Կարո՞ղ է արդյոք լինել վորևէ կասկած այն մասին, վոր դաշնակների խժդժությունները չեն կարող կասեցնել, այլ ավելի կարագացնեն հայ բուրժուազիայի ֆաշիստական կուսակցության անխուսափելի փտումն ու քայքայումը:

Ընկերնե՛ր, հաշվետու շրջանում դաշնակները հետևողականորեն շարունակել են հակախորհրդային ինտերվենցիայի պատրաստման իրենց մասնակցությունը՝ հավատարիմ իրենց այն նշանաբանին, թե Դաշնակցության պայքարի ճամբին առաջին ուժը, վորին նրանք հանդիպում են՝ Խորհրդային Միությունն է: Տարբեր են և բազմազան Դաշնակցության աշխատանքի ձևերն ու մեթոդները, բայց միշտ էլ նրանք ուղղված են Խորհրդային Միության՝ ուրեմն և Խորհրդային Հայաստանի դեմ: Դաշնակցության բոլոր թերթերն ու թերթուկները, ինչ կասկած, կոկորդ են պատռում՝ մասնակցելով «դեմպինգի» և «պարտադիր աշխատանքի» հակախորհրդային կամպանիային: Հազար ու մի միջոցներով նրանք աշխատում են հեռու պահել հայ աշխատավորներին և բանվորներին՝ իրենց ապրած յերկրի բանվորական դասակարգային շարժումներից, պարփակելով նրանց՝ յեկեղեցու, թաղական խորհրդի, առաջնորդարանի, Խանասորի արշավանքի հիշողությունների և «Վարդանանց պատերազմի» ներբողների շրջանակով: Նրանց աշխատանքի հիմնական խնդիրներից մեկն ինչ վոր համազգային կազմակերպության, էքստերիտորիալ հայկական պետություն ստեղծելու ցնորքն է, վորը սակայն, նրանք ամեն գնով ճգնում են իրականություն դարձնել՝ լայն ճակատով պայքարելու համար Խորհրդային Հայաստանի դեմ: Քրդական ապստամբությունը, հակախորհրդային դավերի հաշվետու շրջանում, հիմնական այդ ողակը, «վորից պիտի ծնվեր միացյալ և անկախ Հայաստանը»՝ լինկատար ֆիասկոյի մատնվեց. Սուրիայի

«ազգային օջախ» արյունոտ ավանտյուրան խոշոր հարված ստացավ ներդաղթի խորհրդային ծրագրով: Անհաջողությունները սակայն «ողերքին չեն վհատեցնում»: Միջազգային դրության ամեն մի բարդացում հույս է ներշնչում դաշնակներին, այդ յերևում է հենց դաշնակցականների մամուլի՝ Խորհրդային Միության դեմ պրովոկացիոն դիրքից՝ ինչպես անցյալ տարվա չինական կոնֆլիկտի ժամանակ, նմանապես և այս տարվա մանջուրական դեպքերի կապակցությամբ: Ինչ էլ լինի, իմպերիալիստական վորոշ շրջաններ կողմից՝ վորպես նրանց հասարակ լրտեսական կազմակերպություն՝ դաշնակները «նպաստով» ապահովված են: Իզուր հո չի պարծենում Ջամալյանը, վոր «հանձինս Դաշնակցության՝ Յերկրորդ Ինտերնացիոնալն ունի իր շարքերում մի կուսակցություն, վոր լայն (!) տարածելով իր տեղական կազմակերպությունները Մոտավոր Արևելքի բոլոր յերկրներում՝ հնարավորություն ունի հաղորդել ամեն տեղեկություններ, վորոնք անհրաժեշտ են այդ յերկրների դրության և դեպքերին իրազեկ լինելու համար»: Ճիշտ այդպես, հայ բուրժուազիայի ռազմատենչ կուսակցությունն իր տերերի՝ իմպերիալիստների սեղանի փշրանքներից կերակրվելու համար աշխատում է Մոտավոր Արևելքի յերկրներում, վորպես իմպերիալիստական ագենտուրա, լրտեսական գործակալություն:

Կարիք կա՞ շարունակելու Դաշնակցության «հերոսական» գործերի շարանը: Նրա դասակարգային դեմքը ծանոթ է արտասահմանի գիտակից հայ աշխատավորներին: Արտասահմանի հայ աշխատավորները պետք է ավելի կործանիչ դարձնեն կրակը Դաշնակցության դեմ: Դաշնակցությունը, նրա ամեն մի արտահայտությունը պետք է ջախջախել և վոչնչացնել. ահա հիմնական խնդիրը (ծափեր):

Պետք է անխնա հարվածել Դաշնակցությունը «կույր գործիք», «խաբված ու մոլորված» մի կազմակերպություն դիտելու թեորիան, վոր իր ակունքներն է առնում Դաշնակցության մանր-բուրժուական բնույթի օպորտունիստական

թեորիայից: Ո՛չ, ընկերներ, իր պատմության ամբողջ ընթացքում, իր վողջ գործունեյությամբ Դաշնակցությունն արտահայտել է և սպասարկել հայկական բուրժուազիայի շահերն ու ձգտումները, հայ բուրժուազիայի համար «արևի տակ մի անկյուն» ձեռք բերելու համար նա սպանդի յե յենթարկել մի ամբողջ ժողովուրդ, վոր իր դասակարգային պատվերը կատարելու համար նա յերբեք կանգ չի առնի Հայաստանի աշխատավորության մնացած մասի բնաջնջման առջև:

Մեր հաղթանակներն ու հաջողությունները, կոլեկտիվացման հետագա հաղթական ընթացքը, արտասահմանի հայ աշխատավորների դիմադարձը դեպի Խորհրդային Հայաստանը, անխուսափելի կործանման մոտակա հեռանկարները ծայր աստիճանի յեն հասցնում դաշնակների հուսահատությունը:

Հայաստանի գիտակից աշխատավորությունը չի կարող այդ պատճառով նայել Դաշնակցության վրա այլ կերպ՝ քան կատաղած շան վրա: Կատաղած շանը վոչնչացնում են տեղընուտեղը: Ճիշտ այդպես էլ պիտի վարվել Դաշնակցության ամեն մի արտահայտության հետ. առանց խղճալու կամ խնայելու (բուռն ծափ՛եր):

ՀԱՄ Կ(Բ)Կ ԿԵՆՏԿՈՄԻ ԲԱՅԼՇԵՎԻԿՅԱՆ ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅԱՄԲ, ԼԵՆԻՆՅԱՆ ՀԱՂԹԱԿԱՆ ԴՐՈՇԻ ՏԱԿ, ԱՌԱՋ, ԴԵՊԻ ՆՈՐ ՀԱՂԹԱՆԱԿՆԵՐ

Ընկերնե՛ր, բոլշևիկյան արշավի եյությունը նաև այն է, «վոր մենք մոբիլիզացիայի յենթարկենք իրեն՝ կուսակցությունը՝ կազմակերպելու ամբողջ արշավը, ամրացնենք, մարտունակ դարձնենք կուսակցական կազմակերպությունները՝ դուրս վռնդելով այնտեղից բյուրոկրատիզմի, այլասերման տարրերը, մեկուսացնենք, հետ մղենք աջ և «ձախ» թեքման արտահայտիչներին, լենինյան կուսակցությունից

առաջին պլանը քաշելով իսկական կայուն լենինիստներին»: Իր վողջ աշխատանքներում հաշվետու շրջանում Հայկոմկուսի Կենտկոմը, վորպես հիմնական ուղեցույց, ընդունել է ընկ. Ստալինի այս մարտական պահանջը: Մեր աշխատանքների արդյունքներն այսոր հրապարակի վրա յեն: Նրանք վկայում են ամենից առաջ այն մասին, վոր զորացել, ամրացել, գաղափարապես և կազմակերպչորեն ավելի միասնական ու միաձույլ է դարձել Հայաստանի Կոմունիստական Կուսակցությունը:

Համեմատեցեք կուսակցության ներկա համագումարի շրջանն անցյալ համագումարի հետ: Անցյալ համագումարի նախորյակին և համագումարից անմիջապես հետո մի շարք անսկզբունք խմբակայիններ փորձեր արին պայքար ծավալել կուսակցության Կենտկոմի դեմ. այդ պայքարն ավելի սուր կերպարանք ստացավ 30 թվի աշնանը՝ Բաննահյան-Ջալյան խմբակի կողմից: Հայաստանի Կոմունիստական Կուսակցության բոլոր կազմակերպությունները միահամուռ հարված հասցրին անսկզբունք խմբակայիններին: Կենտկոմի վորոշմամբ Հայաստանում աշխատանքից հեռացվեցին Սեվյանը, Քալաշյանը, Թելումյանը և այլն, վորոնց գրուպայական պայքարը շեղելով կուսկազմակերպությունների ուշադրությունը հիմնական խնդիրներից՝ ըստ եյության օբյեկտիվորեն ջուր եր լցնում դասակարգային թշնամու ջրաղացին: Նրանք ցանկանում եյին ամրացնել մեր կազմակերպության մեջ բոլշևիզմի սկզբունքներին միանգամայն խորթ ու թշնամի ատամանշչինան, վորը սուր կերպով դատապարտվեց Համկոմկուսի Կենտկոմի հոկտեմբերի 31-ի վորոշման մեջ: Հայաստանի Կոմունիստական Կուսակցությունը կործանիչ հարված տվեց անսկզբունք խմբակայնության ռեցիդիվի ամենափոքր փորձերին (Կախոյանի յելույթը և այլն): Հայաստանի Կոմունիստական Կուսակցությունը և նրա ակտիվն սկզբունքորեն համախմբված կուսակցության գլխավոր գծի շուրջը՝ այսոր ավելի ամուր է և միասնական՝ քան յերբեք: Յես կանգ չեմ առնի հաշվետու շրջանում հիմնական կազ-

թեորիայից: Ո՛չ, ընկերներ, իր պատմության ամբողջ ընթացքում, իր վողջ գործունեությամբ Դաշնակցությունն արտահայտել է և սպասարկել հայկական բուրժուազիայի շահերն ու ձգտումները, հայ բուրժուազիայի համար «արևի տակ մի անկյուն» ձեռք բերելու համար նա սպանդի եր յենթարկել մի ամբողջ ժողովուրդ, վոր իր դասակարգային պատվերը կատարելու համար նա յերբեք կանգ չի առնի Հայաստանի աշխատավորության մնացած մասի բնաջնջման առջև:

Մեր հաղթանակներն ու հաջողությունները, կոլեկտիվացման հետագա հաղթական ընթացքը, արտասահմանի հայ աշխատավորների դիմադարձը դեպի Խորհրդային Հայաստանը, անխուսափելի կործանման մոտակա հեռանկարները ծայր աստիճանի յեն հասցնում դաշնակների հուսահատ կատաղությունը:

Հայաստանի գիտակից աշխատավորությունը չի կարող այդ պատճառով նայել Դաշնակցության վրա այլ կերպ՝ քան կատաղած շան վրա: Կատաղած շանը վոչնչացնում են տեղնուտեղը: Ճիշտ այդպես էլ պիտի վարվել Դաշնակցության ամեն մի արտահայտության հետ. առանց խղճալու կամ խնայելու (*բուռն ծափ...*):

ՀԱՄ Կ(Բ)Կ ԿԵՆՏԿՈՄԻ ԲՈԼՇԵՎԻԿՅԱՆ ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅԱՄԲ, ԼԵՆԻՆՅԱՆ ՀԱՂԹԱԿԱՆ ԴՐՈՇԻ ՏԱԿ, ԱՌԱՋ, ԴԵՊԻ ՆՈՐ ՀԱՂԹԱՆԱԿՆԵՐ

Ընկերնե՛ր, բոլշևիկյան արշավի եյությունը նաև այն է, «վոր մենք մոբիլիզացիայի յենթարկենք իրեն՝ կուսակցությունը՝ կազմակերպելու ամբողջ արշավը, ամրացնենք, մարտունակ դարձնենք կուսակցական կազմակերպությունները՝ դուրս վռնդելով այնտեղից բյուրոկրատիզմի, այլասերման տարրերը, մեկուսացնենք, հետ մղենք աջ և «ձախ» թեքման արտահայտիչներին, լենինյան կուսակցությունից առաջին գլանը քաշելով իսկական կայուն լենինիստներին»: Իր վողջ աշխատանքներում հաշվետու շրջանում Հայկոմկուսի Կենտկոմը, վորպես հիմնական ուղեկից, ընդունել է ընկ. Ստալինի այս մարտական պահանջը: Մեր աշխատանքների արդյունքներն այսօր հրապարակի վրա յեն: Նրանք վկայում են ամենից առաջ այն մասին, վոր զորացել, ամրացել, գաղափարապես և կազմակերպչորեն ավելի միասնական ու միաձույլ է դարձել Հայաստանի Կոմունիստական Կուսակցությունը:

Համեմատեցեք կուսակցության ներկա համագումարի շրջանն անցյալ համագումարի հետ: Անցյալ համագումարի նախօրյակին և համագումարից անմիջապես հետո մի շարք անսկզբունք խմբակայիններ փորձեր արին պայքար ծավալել կուսակցության Կենտկոմի դեմ. այդ պայքարն ավելի սուր կերպարանք ստացավ 30 թվի աշնանը՝ Բաննահյան–Զալյան խմբակի կողմից: Հայաստանի Կոմունիստական Կուսակցության բոլոր կազմակերպությունները միահամուռ հարված հասցրին անսկզբունք խմբակայիններին: Կենտկոմի վորոշմամբ Հայաստանում աշխատանքից հեռացվեցին Սեվյանը, Քալաշյանը, Թելումյանը և այլն, վորոնց գրուպայական պայքարը շեղելով կուսկազմակերպությունների ուշադրությունը հիմնական խնդիրներից՝ ըստ եյության օբյեկտիվորեն ջուր եր լցնում դասակարգային թշնամու ջրաղացին: Նրանք ցանկանում եյին ամրացնել մեր կազմակերպության մեջ բոլշևիզմի սկզբունքներին միանգամայն խորթ ու թըշնամի ատամանշչինան, վորը սուր կերպով դատապարտվեց Համկոմկուսի Կենտկոմի հոկտեմբերի 31-ի վորոշման մեջ: Հայաստանի Կոմունիստական Կուսակցությունը կործանիչ հարված տվեց անսկզբունք խմբակայնության ռեցիդիվի ամենափոքր փորձերին (Կախոյանի յելույթը և այլն): Հայաստանի Կոմունիստական Կուսակցությունը և նրա ակտիվն սկզբունքորեն համախմբված կուսակցության գլխավոր գծի շուրջը՝ այսօր ավելի ամուր է և միասնական՝ քան յերբեք:

Յես կանգ չեմ առնի հաշվետու շրջանում հիմնական կազ-

բերի և զինվոր աշխատողների ջոկման մեջ առաջացած փոփոխությունների վրա. այդ աշխատանքները կատարելիս թե՛ շրջաններում և թե՛ կենտրոնում՝ նպատակ ենք ունեցել առաջին պլանի վրա քաշել կուսակցության գծի անշեղ կիրառումն ապահովող լավագույն և փորձված ընկերների: Թույլ տվեք միայն համագումարի հավանությանը դնել չորս կարևորագույն առաջքաշում հաշվետու շրջանում — ընկ. Կասյանին Հայաստանում աշխատանքից ազատելուց հետո՝ Կենտգործկոմի նախագահ ընտրվեց ընկ. Անանյանը (բուռն ծափահարություն), ընկ. Ծահվերդյանի այլ աշխատանքի անցնելու պատճառով՝ ԿՎՀ-ի նախագահ և Բանգյուղտեսչության ժողկոմ ընտրվեց ընկ. Գալոյանը (բուռն ծափահարություն), ՀԱՄԽ-ի նախագահ ընտրվեց ընկ. Հրաչ Դեմիրճյանը (բուռն ծափեր) և Կենտկոմի յերկրորդ քարտուղար՝ ընկ. Ոթյանը (բուռն ծափահարություն): Մեր բոլոր կուսկազմակերպությունների անվերապահորեն հավանություն տվին մեր այս առաջքաշումներին, թույլ տվեք ձեր բուռն ծափահարությունները ևս ընդունել վորպես հավանության նշան: Ուշագրավ է, վոր դաշնակցական թերթերն արտասահմանում նույնպես անտարբեր չանցան այս փոփոխությունների գծով: Հենց միայն վերջերս Դաշնակցության պնակալեզ Խոնդկարյանը «Հայրենիք»-ում դառն արցունք եր թափում, թե Հայաստանից հեռացվել են «ամենալավ բոլշևիկները՝ Հովհաննիսյանը, Համբարձումյանը, Լուկաշինը, և պետության ղեկավար օրգաններում այժմ աշխատում են նախկին շոֆերները»: Թշվառականները չեն հասկանում, վոր նման ներբողներով նրանք մատնում են նացիոնալ-ուկլոնիստներին, և տխրացու մեծամտությամբ հայհոյելով Հայաստանի բանվորների ծոցից դուրս յեկած և առաջքաշված բոլշևիկյան կադրերին՝ լավագույն վկայականն են տալիս կազմակերպչական այս մեծ ձեռնարկների ուղիղ լինելուն:

Հաշվետու շրջանում, ընկերնե՛ր, մեր կուսակցությունը հսկայական աշխատանք է կատարել՝ մասսաներին գաղափարապես զինելու և իդեոլոգիական խորթ և թշնամի գա-

ղափարախոսությունների կոնկրետ կրողներին դիմակազերծ անելու և հարվածելու գծով: Հայտնի յե, օրինակ, վոր կոնդրատևյշչինան, վոր հանդիսանում եր լայնորեն մտածված և նուրբ կերպով անցկացվող կապիտալիստական ռեստավրացիայի ծրագիր՝ իր կարկառուն արտահայտությունները գտել է նաև Հայաստանում: Այն հանգամանքը, վոր պետական մի շարք հիմնարկներում տարիների ընթացքում տաք ապաստարան եյին գտել կոնդրատևվականները՝ բացատրվում է, իհարկե, կուսակցության մի շարք անդամների շրջաններում գոյություն ունեցող «նեխած լիբերալիզմով»: Մենք դեն շպրտեցինք կոնդրատևվական էլեմենտներին մեր պետական, տնտեսական հիմնարկներից. մենք հաշվետու շրջանում մաքրեցինք գիտական և ուսումնական հիմնարկները նացիոնալիստական փտած էլեմենտներից: Մենք վար առինք ամեն գույնի սմենովեխականների դիմակները և ցույց տվինք մասսաներին նրանց իսկական թըշնամական դեմքը: Դաշնակներն արտասահմանում ահագին հարահրոց բարձրացրին այս առթիվ. Նրանք ուղղակի ծիծաղելի փորձեր արին՝ պաշտպանել մեզանից... Խորհրդային Իշխանության «բարեկամ» մասնագետներին: Դաշնակների այդ դիրքը կոնդրատևվականների ազգայնական մի քանի փտած «գիտնականների» պաշտպանությունը՝ մի ավելորդ ապացույց է այն բանի, վոր մեր հարվածները դաշնակների և նրանց բարեկամների ու գործակալների դեմ՝ դառնում են ավելի անվրեպ և կործանիչ:

Պետք է շարունակել, ընկերնե՛ր, և ավելի խորացնել կործանիչ կրակը դասակարգային թշնամու գաղափարախոսությունների ամեն մի արտահայտության դեմ: Ընկեր Ստալինն իր վերջին պատմական նամակում վողջ կուսակցության ուշադրությունը սրեց տրոցկիստական կոնտրաբանդայի դեպքերի դեմ, դեպքերի, յերբ օգտվելով կուսակցության անդամների վորոշ մասի «նեխած լիբերալիզմից», կուսակցության թշնամիները փորձեր են անում յեղծել լենինյան կուսակցության պատմությունը: Ընկեր Ստալինի նամակը

ների և ղեկավար աշխատողների ջոկման մեջ առաջացած փոփոխությունների վրա. այդ աշխատանքները կատարելիս թե՛ շրջաններում և թե՛ կենտրոնում՝ նպատակ ենք ունեցել առաջին պլանի վրա քաշել կուսակցության գծի անշեղ կիրառումն ապահովող լավագույն և փորձված ընկերների: Թույլ տվեք միայն համագումարի հավանությանը դնել չորս կարևորագույն առաջքաշում հաշվետու շրջանում — ընկ. Կասյանին Հայաստանում աշխատանքից ազատելուց հետո՝ Կենտգործկոմի նախագահ ընտրվեց ընկ. Անանյանը (բուռն ծափահարություն), ընկ. Տահվերդյանի այլ աշխատանքի անցնելու պատճառով՝ ԿՎՀ-ի նախագահ և Բանգյուղտնտեսչության ժողկոմ ընտրվեց ընկ. Գալոյանը (բուռն ծափահարություն), ՀԱՄԽ-ի նախագահ ընտրվեց ընկ. Հրաչ Դեմիրճյանը (բուռն ծափեր) և Կենտկոմի յերկրորդ քարտուղար՝ ընկ. Ոթյանը (բուռն ծափահարություն): Մեր բոլոր կուսկազմակերպությունները անվերապահորեն հավանություն տվին մեր այս առաջքաշումներին, թույլ տվեք ձեր բուռն ծափահարությունները ևս ընդունել վորպես հավանության նշան: Ուշագրավ է, վոր դաշնակցական թերթերն արտասահմանում նույնպես անտարբեր չանցան այս փոփոխությունների գծով: Հենց միայն վերջերս Դաշնակցության պնակալեզ Խոնդկարյանը «Հայրենիք»-ում դառն արցունք եր թափում, թե Հայաստանից հեռացվել են «ամենալավ բոլշևիկները՝ Հովհաննիսյանը, Համբարձումյանը, Լուկաշինը, և պետության ղեկավար օրգաններում այժմ աշխատում են նախկին շոֆերները»: Թշվառականները չեն հասկանում, վոր նման ներբողներով նրանք մատնում են նացիոնալ-ուկլոնիստներին, և սիրացու մեծամտությամբ հայհոյելով Հայաստանի բանվորների ծոցից դուրս յեկած և առաջքաշված բոլշևիկյան կադրերին՝ լավագույն վկայականն են տալիս կազմակերպչական այս մեծ ձեռնարկների ուղիղ լինելուն:

Հաշվետու շրջանում, ընկերնե՛ր, մեր կուսակցությունը հսկայական աշխատանք է կատարել՝ մասսաներին գաղափարապես զինելու և իդեոլոգիական խորթ և թշնամի գա-

ղափարախոսությունների կոնկրետ կրողներին դիմակազերծ անելու և հարվածելու գծով: Հայտնի յե, որինակ, վոր կոնդրատևշչինան, վոր հանդիսանում եր լայնորեն մտածված և նուրբ կերպով անցկացվող կապիտալիստական ռեստավրացիայի ծրագիր՝ իր կարկառուն արտահայտությունները գտել է նաև Հայաստանում: Այն հանգամանքը, վոր պետական մի շարք հիմնարկներում տարիների ընթացքում տաք ապաստարան եյին գտել կոնդրատևականները՝ բացատրվում է, իհարկե, կուսակցության մի շարք անդամների շրջաններում գոյություն ունեցող «նեխած լիբերալիզմով»: Մենք դեն շպրտեցինք կոնդրատևական ելեմենտներին մեր պետական, տնտեսական հիմնարկներից. մենք հաշվետու շրջանում մաքրեցինք գիտական և ուսումնական հիմնարկները նացիոնալիստական փտած ելեմենտներից: Մենք վար առինք ամեն գույնի սմենովեխականների դիմակները և ցույց տվինք մասսաներին նրանց իսկական թշնամական դեմքը: Դաշնակներն արտասահմանում ահագին հարահրոց բարձրացրին այս առթիվ. նրանք ուղղակի ծիծաղելի փորձեր արին՝ պաշտպանել մեզանից... Խորհրդային իշխանության «բարեկամ» մասնագետներին: Դաշնակների այդ դիրքը կոնդրատևականների ազգայնական մի քանի փտած «գիտնականների» պաշտպանությունը՝ մի ավելորդ ապացույց է այն բանի, վոր մեր հարվածները դաշնակների և նրանց բարեկամների ու գործակալների դեմ՝ դառնում են ավելի անվրեպ և կործանիչ:

Պետք է շարունակել, ընկերնե՛ր, և ավելի խորացնել կործանիչ կրակը դասակարգային թշնամու գաղափարախոսությունների ամեն մի արտահայտության դեմ: Ընկեր Ստալինն իր վերջին պատմական նամակում վողջ կուսակցության ուշադրությունը սրեց տրոցկիստական կոնտրաբանդայի դեպքերի դեմ, դեպքերի, յերբ օգտվելով կուսակցության անդամների վորոշ մասի «նեխած լիբերալիզմից», կուսակցության թշնամիները փորձեր են անում յեղծել լենինյան կուսակցության պատմությունը: Ընկեր Ստալինի նամակը

կուսակցության զգոնության բարձրացման, դեպի կուսակցության պատմության հարցերն ավելի ուշադիր և ավելի գիտակից վերաբերմունք ունենալու գործում հսկայական մի ազդակ յեղավ: Ընկեր Ստալինի նամակը մի ազդակ յեղավ նաև քննադատական ավելի սուր պահանջներով մոտենալու իդեոլոգիական ֆրոնտի ներկա դրությանը: Յեվ ինչ ենք տեսնում ոգտվելով «փտած լիբերալիզմից»՝ դասակարգային թշնամին շատ դեպքերում կարողացել ե ոգտագործել մեր հրատարակչությունը, մեր ժուռնալները, մեր դասագրքերը և այլ հնարավորությունները՝ քողարկված պայքար մղելու համար լենինյան իդեոլոգիայի դեմ: Պետք է հայտաբերել և գլխովին ջախջախել թշնամական իդեոլոգիաների այդ փորձերը, պետք է ավելի գործոն և մարտունակ դարձնել իդեոլոգիական ֆրոնտի բոլոր լծակները:

Հաշվետու շրջանում կազմակերպեցինք Հայաստանում մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտ և կոմունիստական համալսարան: Այս յերկու գիտական ուսումնական հիմնարկների կազմակերպումը շրջադարձ ե առաջ բերելու իդեոլոգիական ֆրոնտի աշխատանքներում: Մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտը մանավանդ պետք ե լայն աշխատանք ծավալի մարքսիստական վերլուծման և ուսումնասիրության յենթարկելու Հայաստանի պատմությունը, հասարակական զարգացման ընթացքը 19-րդ և 20-րդ դարերում, կապակցելով այդ աշխատանքները իդեոլոգիական պայքարի և սոցիալիստական շինարարության այսորվա խնդիրների հետ: Մարքսիզմի և լենինիզմի ինստիտուտը լայն աշխատանք պիտի ծավալի նաև գիտական նոր կադրեր պատրաստելու, ինչպես նաև իդեոլոգիական խորթ և թշնամի իդեոլոգիաների յուրաքանչյուր արտահայտության հայտաբերման և ջախջախման գործում:

Հաշվետու շրջանում լույս տեսավ Լենինի յերկերի լիակատար ժողովածուի յերկու հատոր և ընտիր յերկերի վեց-հատորյակի մեկ հատոր: Հրատարակեցինք յերկու գիրք Մարքսի պատմական աշխատություններից և Ստալինի «Լենինիզմի հարցերը»: Ձեռնարկել ենք «Կապիտալ»-ի թարգմանությունը. 1933 թվին ապահովելու համար առաջին հատորի հրատարակությունը: Համարելով այնուամենայնիվ այս ուղղությամբ կատարված աշխատանքների տեմպը դանդաղ, ավելի լայն միջոցների պիտի դիմենք՝ լայն ծավալով առաջ տանելու համար Մարքսի, Ենգելսի, Լենինի և Ստալինի հիմնական յերկերի հայերեն հրատարակության գործը:

Առանձնապես ուշադիր պետք ե լինենք Հայաստանի Կոմունիստական Կուսակցության պատմության հարցերի նկատմամբ: Չափազանց հետ ենք մնում այս խնդրում: Մինչդեռ այս ասպարեզում պակաս չեն կուսակցության պատմության խեղաթյուրման սպեցիֆիկյան, մենշևիկյան, նացիոնալ-ուկլոնիստական կոնտրաբանդայի փորձեր: Կենտկոմը և մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտը պետք ե ավելի լայն ու ակտիվ աշխատանքի ձեռնարկեն՝ կազմելու համար Հայաստանի Կոմունիստական Կուսակցության իսկական պատմությունը՝ դեն շպրտելով մեր պատմության սպեցիֆիկյան նացիոնալ-ուկլոնիստական և մենշևիկյան խեղաթյուրումները:

* * *

Վերջացնենք: Մենք տեսնում ենք, վոր հաշվետու շրջանում Հայաստանի Կոմունիստական Կուսակցությունը ձեռք է բերել մի շարք վճռական նվաճումներ՝ սոցիալիստական շինարարության բոլոր բնագավառներում: Այդ հաջողությունները արդյունք են կուսակցության լենինյան գծի կիրառմանը, Համկոմկուսի Կենտկոմի, կուսակցության լենինյան առաջնորդ ընկ. Ստալինի հմուտ բոլշևիկյան ղեկավարության: Մեր աշխատանքներում յեղել են, սակայն, սխալներ և թերացումներ, վորոնց արմատական վերացմամբ պիտի ապահովենք սոցիալիստական արշավի ավելի լայն ծավալումը, և նոր ու ավելի խոշոր հաղթանակներ:

Միաձույլ և ամրակուռ, անհաշտ պայքարելով լենինյան գծից բոլոր շեղումների դեմ՝ Հայաստանի Կոմունիստական Կուսակցությունը կառաջնորդի Հայաստանի բանվորներին և

աշխատավորներին՝ դեպի վերջնական հաղթանակ: Այդ հաղթանակն ապահովված է, վորովհետև մենք ղեկավարվում ենք լենինյան սկզբունքներով, վորովհետև կուսակցության նավի ղեկը գտնվում է Համկոմկուսի լենինյան կենտկոմի, կուսակցության առաջնորդ ընկ. Ստալինի ձեռքը, վորոնք տանում են Կոմունիստական Ինտերնացիոնալը դեպի համաշխարհային Հոկտեմբերի վերջնական հաղթանակը (*բուռն ծափեր*):

Ուրեմն, ընկերնե՛ր, առա՛ջ, յեռանդուն և վստահ:

Հանուն հնգամյակի ավարտմանը 1932 թվին, հանուն շինարարության և արդյունաբերության բոլոր պլանների գերակատարմանը:

Հանուն կոլտնտեսությունների ամրացմանը, գյուղի աշխատավոր մասսաների վերջնական ազատագրմանը կուլակի շահագործումից:

Բարձրացնենք բանվորների, կոլտնտեսականների, աշխատավոր մասսաների սոցիալիստական աշխատանքային ենտուզիազմի նոր ալիք. բարձրացնենք մասսաների դասակարգային զգոնությունը — հաղթահարելու համար բոլոր խոչընդոտները և դժվարությունները, ջախջախելու համար դասակարգային թշնամու և նրա ագենտների ամեն տիպի ոպորտունիզմի դիմադրությունը սոցիալիզմի հաղթարշավին:

Ամրացնենք լենինյան ազգային քաղաքականության լավագույն կոթողը — Անդրկովկասյան Սոցիալիստական Ֆեդերացիան:

Ջախջախիչ և կործանիչ հարված հայ բուրժուազիայի ֆաշիստական կուսակցության — Դաշնակցության բոլոր մնացորդներին և արտահայտություններին:

Ընդդեմ նացիոնալիզմի և նացիոնալ-ուկլոնիզմի, պրոլետարական ինտերնացիոնալիզմի ծավալման ու ամրացման համար — մեր բոլոր աշխատանքներում:

Անխնա պայքար գլխավոր վտանգ աջ թեքման և «ձախ» խոտորումների դեմ, մեծապետական շովինիզմի և նացիոնալ-ուկլոնիզմի բոլոր արտահայտությունների դեմ:

Մինչև վերջ վերացնենք մեր աշխատանքներում կատարված կոպիտ սխալները:

ԲԱՅԼՇԵՎԻԿՅԱՆ ԻՆՔՆԱՔՆՆԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԼԱՅՆ ԾԱՎԱԼՄԱՄԲ ԱՌԱ՛Ջ ԴԵՊԻ ՆՈՐ ՄԱՐՏԵՐ, ԴԵՊԻ ՆՈՐ ՀԱՂԹԱՆԱԿՆԵՐ (բուռն և յերկարատև ծափեր, վոր փոխվում են ովացիայի):

Гос. Библиотека ՀԱՅԿ-Арм. ССР им. А. Мясникяна

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

էջ

Կապիտալիզմի ընդհանուր կրիզիսը և սոցիալիզմի հաղթական վերելքը 3

Սոցիալիզմի հաղթանակի նշանաբանի տակ 7

Անխնա պայքար օպորտունիզմի դեմ 10

Կապիտալիզմի կրիզիսը և պատերազմի վտանգը . . . 14

Խորհրդային Հայաստանի սոցիալիստական վերելքը . . . 18

Ժողովրդական տնտեսության ընդհանուր աճումը . . 19

Հայաստանի արդյունաբերության մարտական խնդիրները 25

Գունձարդյունաբերությունը պայքարի մարտական ճակատում 27

Երկրի էլեկտրիֆիկացիան առաջին գծի վրա . . . 35

Նոր շինարարությունը բոլշևիկյան տեմպ և վորակ . . 40

Հանել տրանսպորտը «նեղ» դրությունից 42

Հաղթանակի 6 պայմանների կիրառմամբ ապահովել արդֆինպլանների կատարումը 45

Գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման հիմնական խնդիրները 48

Բամբակի ֆրոնտում 49

Ուշադրություն այգեգործությանը և չերամապահությանը 56

Արագացնել վոռոգման աշխատանքների տեմպը . . . 58

Անասնապահության սոցիալիստական վերակառուցումը և աճումը գյուղատնտեսական ֆրոնտի ամենակարևոր խնդիրն է 62

Բոլշևիկյան տեմպով վերակառուցվում է գյուղատնտեսության տեխնիկական բազան 62

Հացահատիկային կուլտուրաների թերագնահատման դեմ 69

Խորհրդային տնտեսությունների ամրացման համար . 71

Կոլտնտշինարարության դրությունը և հերթական խնդիրները 74

Գյուղի ուշադրության կենտրոնում 83

Բանվորների և աշխատավորների նյութական կենցաղային դրության բարելավումը և կուլտուրական մակարդակի բարձրացումը 103

Նոր թափ տալ կուլտուրական հեղափոխությանը . . 114

Բոլշևիկյան արշավի լծակների վերակառուցումը . . . 117

Ապահովել կուսակցական ճիշտ և ամուր ղեկավարություն կոմսոմոլի նկատմամբ 121

Կուսակցական շինարարության խնդիրները 125

Կուսակցության աճման խնդիրները 132

Կադրերի պատրաստման գործը 134

Լենինյան ազգային քաղաքականության դիրքերում . . . 136

Կործանիչ կրակ հայ բուրժուազիայի ֆաշիստական կուսակցության, իմպերիալիստական գործակալ՝ հակահեղափոխական Դաշնակցության 143

Համկ(բ)Կ կենտկոմի բոլշևիկյան ղեկավարությամբ, լենինյան հաղթական դրոշի տակ, առա՛ջ, դեպի նոր հաղթանակներ 150

ԳԻՆԸ 50 ԿՈՊ. (Б Ը)

А. ХАНДЖЯН

ОТЧЕТ 8-го С'ЕЗДА ЦК. КП. (б) АРМЕНИИ

Госиздат ССР Армении
Эривань—1932

ՀՀ Ազգային գրադարան
NL0188848